ԱՂՈԹԱԳՐՔԵՐ - Բ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑԻ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՂՈԹԱԳՐՔԵՐ - Բ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑԻ

ԱՂՈԹԱՄԱՏՈՒՅՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Յ – 630

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑԻ
Յ – 630 Աղոթամատույց: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 192 էջ:

ԳՄԴ 86.37

ISBN 978-99930-75-58-5
© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007 թ.

ԱՌԱՋԱԲԱՆ

Հովհաննես Գառնեցին ԺԲ-ԺԳ. դդ. ճգնակյաց, հրաշագործի համբավ ունեցող վարդապետ-մատենագիր է. կա նրա տարբեր երկերը պարունակող և նրան վերաբերող բավական հարուստ ձեռագրական նյութ, որի չուսումնասիրվածության պատճառով մեր մատենագրության կարևոր դասագրքերից մեկում նա հիշված է «Մատենագիրք որոց գործք չեն յիշատակուիր»[1] շարքում, միաժամանակ՝ նույնաբնույթ դասագրքերի մեծ մասում նրա անունն ընդհանրապես մոռացության է տրված, այսինքն՝ Հովհաննես Գառնեցու անունն ու մատենագրությունը մեր ընթերցող հասարակությանը գրեթե հայտնի չէ:

Հակառակ սրան, միջնադարում, թե՛ իր ժամանակակիցների մեջ և թե՛ հետագայում, նրա համբավը շատ բարձր էր: Ուստիև, մեր անցյալն ավելի լավ և ճշգրիտ պատկերացնելու համար, Հովհաննես Գառնեցու մատենագրական ժառանգության նկատմամբ մեր վերաբերմունքը պետք է լինի նույն այդ համբավի համեմատ: Կիրակոս Գանձակեցու Պատմության մեջ կա նրան նվիրված ծավալուն մի գլուխ՝ «ԾԴ. Վասն Յովհաննիսի Գառնեցւոյ»[2], որի սկզբում պատմիչը գրել է. «Վասն սորա բազումք բազում ինչ պատմէին, բայց առաւել հարազատն մեր եւ սքանչելին Վարդան վարդապետն (Արևելցին - Գ. Տ-Վ.), որոյ բանքն արժանի էին հաւատարմութեան, զի նոքա սիրով կապեալ էին ընդ միմեանս: Զի մեք մարմնով զնա ոչ տեսաք վասն հեռա-

ւորութեան, նա ի մխիթարութիւն մեզ պատմեաց ինչ ի վարուց նորա մասնաւոր եւ ասաց. թէ՝ «Ինքն իսկ Յովհաննէս ասաց մեզ...»[3]:

Հովհաննես Գառնեցին, ինչպես մականունն է թելադրում՝ ծնունդով Գառնի գյուղաքաղաքից էր, Այրիվանքի (Գեղարդ) միաբան, ապա՝ ճգնում էր Թաթլու վանքում (Կաղզվանի մոտ): 1222ին ուխտի է գնացել Երուսաղեմ, մկրտել և քրիստոնյա է դարձրել շատ մահմեդականների, որի համար Կողոնիա քաղաքում փորձել են նրան այրել խարույկի վրա, բայց ազատվել է և գնացել Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսի (1221-1267 թ.) մոտ, ուր և մնացել է մինչև իր կյանքի վերջ. մահացել և թաղվել է Հռոմկլայում:

Ձեռագրերում նրա անունով կան հետևյալ գործերը. 1. Աղօթամատոյց (Աղոթագիրք), 2. Խրատ հոգեշահ ամենայն մարդոյ, 3. Պատմութիւն մուղրոյն Զանկիանու (Հայսմավուրքի մեջ), 4. Ստուգաբանութիւն եւ սրբագրութիւն Սաղմոսարանի՝ ըստ Յովհաննէս Սարկաւագի օրինակի, 5. Պատճառք Սաղմոսաց, 6. Տեսիլ ի Հռոմկլայ ի ձորն Աշորնիս, 7. Պարականոն մի շարական, 8. Տեսիլ (Հայսմավուրքի մեջ)[4], 9. Սքանչելիք Յաճախապատում գրոց[5]:

Հովհաննես Գառնեցու մատենագրությունը, կրկնենք՝ ուսումնասիրված չէ. տպագրված է միայն նրա Աղոթագիրքը[6], սակայն՝ առանց բանասիրական-աղբյուրագիտական որևէ նախաբանի, ուստի այժմ կարող ենք միայն ենթադրել, որ այս հրատարակությունն արված է ըստ Մխիթարյանց Վենետիկի անթվական՝ ԺԷ. դարով թվագրված Հ^մր 1224/1269 և 1625 թ. գրված 75/1292 ձեռագրերի[7]:

Գառնեցու աղոթքների արժեքը և կարևորությունը

շեշտել է դեռևս Կիրակոս Գանձակեցին. «Տուան նմա եւ շնորհք բժշկութեան, զի ձեռն դնելով եւ աղաւթելով՝ բժշկէր զբազում ախտաժէտս: Խնդրէին ի նմանէ եւ գիր պահապան անձանց իւրեանց, եւ նա անյապաղ տայր ամենայն խնդրողացն... Եւ նա գրելով զանուն սրբոյ Երրորդութեանն եւ խորհրդական բանս աղօթից, տայր նոցա: Եւ նոցա առեալ՝ հաւատով կապէին յանձինս իւրեանց»[8]: Ըստ այս համբավի էլ Գառնեցու աղոթքները, գուցե և իր կյանքի շրջանում, մտել են «Պահպանութեան գիր» (Հմայիլ) ժողովածուների մեջ, իսկ հետագայում՝ վերածվել են հայատառ թուրքերենի[9]:

Ուստի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հրատարակչական բաժինը, նախաձեռնելով Գառնեցի մատենագրի հանիրավի անտեսված և չուսումնասիրված ժառանգության հետազոտությունը, որոշեց առաջին հերթին ճշգրտելով և լրացնելով վերահրատարակել նրա Աղոթամատույցը:

Ժողովածուի պատրաստության համար հիմք ընդունելով 23 աղոթք պարունակող վենետիկյան հրատարակությունը՝ ուսումնասիրվել է Մաշտոցյան Մատենադարանի 45 ձեռագիր, որոնցից ներկա հրատարակության համար օգտագործվել է ընդհանուր հաշվով 15ը: Նախ՝ տպագրով յայտնի աղոթքները ընդհանուր-նախնական ձևով համեմատվել են սրանցից 8ի (Հ^մրք 8280, 2680, 601, 5212, 718, 7194, 42, 7006) հետ, որոնցից ամբողջական համեմատության համար ընտրվել է տպագրի գրեթե բոլոր աղոթքներն ունեցող երեք ձեռագիր՝ Հ^մրք 8280, 42, 7006: Սրանց հետ համեմատությանը հաջորդել է ընթերցումների քննությունընտրությունը և բնագրերի ճշգրտումը:

Թե Գառնեցու ժառանգության և թե՛ ընդհանրապես միջնադարի առօրյայում գործնական կիրառություն ունեցած փոքր և մեծ ծավալ ունեցող շատ երկերի (աղոթքներ, ճառեր, քարոզներ և այլն) համար պետք է նկատի ունենալ մեր մատենագրության համար հատկանշական մի կարևոր հանգամանք. ձեռագրերում այսպիսիք հաճախ վերագրված են նույնանուն, երբեմն՝ տարանուն այլ հեղինակների: Այսպես՝ հիշված 45 ձեռագրերում կան Հովհաննես Գառնեցու անունն ունեցող և այստեղ տպագրվող 35 միավորից շա՛տ ավելի աղոթքներ, որոնց խորագիրներն ու սկզբնատողերը ստուգվել են Մաշտոցյան Մատենադարանի մատենագիտության բաժնում առկա սկզբնատողերի քարտարանով և ձեռագրական տարբեր հավաքածուների ցուցակներով: Այս ստուգումների արդյունքով անտեսված են և չեն հրատարակում բոլոր այն աղոթքները, որոնք հիշյալ 45ից տարբեր այլ ձեռագրերում հանդիպում են Հովհան Ոսկեբերանի, երբեմն՝ Եփրեմ Ասորու կամ այլ հեղինակների անուններով[10]: Նախորդ տպագրում առկա 23 աղոթքներին այստեղ ավելացված են միայն նրանք, որոնք այս կամ այն չափի փաստարկումով Հովհաննես Գառնեցու գրչի արգասիքն են:

Ուսումնասիրված ձեռագրերում առկա բոլոր աղոթքների այստեսակ քննության արդյունքով պարզվեց, որ նորայայտ 4 աղոթք (Հ^մրք 24-27) աներկբայելիորեն Գառնեցու հեղինակությունն են: Ուրիշ 4 միավոր (Հ^մրք 28-31) 2680 (Բ) ձեռագրում յաջորդում են Գառնեցու խրատներին և ունեն «Նորին Յոհաննու» խորագրային սկսվածքը. ժողովածուիս մեջ սրանք ընդգրկվեցին պայմանականորեն՝ քանի դեռ այլուր

չեն հանդիպի այլ հեղինակների անունով: Մի քանի օրինակում առկա ևս 4 աղոթք (Հ^մրք 32-35) միայն երկու ձեռագրի մեջ են Գառնեցու անունով, յայտնի այլ ձեռագրերում այս աղոթքներն այլ հեղինակների անուններով արձանագրված չեն, ուստի սրանք ևս պայմանականորեն ընդգրկված են այս գրքի մեջ:

Առաջին տպագրության մեջ առկա աղոթքները, ինչպես ասացինք, հրատարակվում են տպագրի հետ երեք ձեռագրի համեմատությամբ և բազմաթիվ ճշգրտումներով, իսկ նորահայտ՝ այստեղ առաջին անգամ հրատարակվող 12 աղոթքներից 6ը (Հ^մրք 24, 28-31) համեմատված են 2-4 ձեռագրով, մնացյալ 6ը (Հ^մրք 25-30), այլ օրինակներ չունենալու պատճառով, ներկայացված են մեկական ձեռագրի հիման վրա:

Հովհաննես Գառնեցու աղոթքների գրական-գեղարվեստական նկարագիրը լիովին համապատասխանում է միջնադարում նրանց հեղինակի վայելած բարձր համբավին: Վստահ ենք, որ չենք չափազանցում՝ միջնադարյան մեր գրականության մեջ սրանք դիտելի են Գրիգոր Նարեկացու Մատյանի և Հովհաննես Սարկավագի Աղոթագրքի կողքը՝ նրանց հենքի վրա: Այս ընկալումով և զգացողությամբ էլ Աղոթագիրքը հանձնում ենք ընթերցողին. և վստահ ենք, որ շատերն են այստեղ տեսնելու ուշագրավ, ավելին՝ սրտագրավ տողեր:

ԳԵՎՈՐԳ ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հովհաննես Գառնեցու մասին

Սա մի առաքինի մարդ էր, վարքով զարմանալի, Աստծու պատվիրանները կատարող, [Քրիստոսի] լուծը կրող. պատանեկությունից արժանացավ կուսակրոն քահանայական աստիճանի. անունը Հովհաննես էր, Գառնի քաղաքացուցից, ուր գտնվում է Տրդատի հրաշալի բարձրաշեն պալատը, Այրիվանքի սուրբ միաբանությունից: Սա մանկության հասակից արհամարհեց կյանքի ամեն ինչը, լքեց հարազատներին ու տունը, բնակվում էր ամայի տեղերում. սիրում էր առանձին լինել և անդադար խոսել Աստծու հետ՝ իրեն տալով տեսակ-տեսակ ճգնությունների, պասերի, գետնատարած ու պառկած աղոթքների և անդադար տեղից տեղ շրջելով ու պատահածներին լուսավորելով:

Նրան տրվեց նաև բժշկության շնորհք, որովհետև ձեռքը դնելով ու աղոթելով բազմաթիվ ախտաժետների բժշկում էր: Նրանից խնդրում էին նաև իրենց անձերի պահպանման համար թուղթ [թալիսման], իսկ նա անմիջապես տալիս էր բոլոր խնդրողներին: Եվ այս անում էին ոչ միայն հավատացյալները, այլև բազմաթիվ անհավատները: Նա գրում էր Սուրբ Երրորդության անունը և աղոթքի խորհրդավոր խոսքեր ու տալիս էր նրանց: Իսկ նրանք հավատով առնում և կապում էին իրենց վրա:

Սրա մասին շատերը շատ բաներ էին պատմում, բայց շատ ավելի [պատմում էր] մեր հարազատ ու սքանչելի Վարդան վարդապետը, որի խոսքերը արժանի են վստահության [արժանահավատ են], որովհետև նրանք սիրով կապված էին միմյանց հետ: Որովհետև մենք հեռավորության պատճառով նրան չտեսանք, նա իբրև մխիթարություն՝ մեզ նրա կյանքից որոշ բաներ պատմեց մասնավոր կերպով. ասաց, թե՝ «Ինքը Հովհաննեսն հենց մեզ պատմեց, թե ես գնացի սուրբ քաղաք Երուսաղեմ՝ երկրպագելու փրկչական վայրերին. այնտեղ որոշ օրեր մնացի՝ իջևանելով սուրբ Հակոբում: Մի գիշեր կանխեցի ազդարարության ժամը հնչելը, որ բոլորին զարթեցնում էր աղոթքի, և մինչդեռ ես աղոթում էի սուրբ եկեղեցում, սուրբ Հակոբի առաջնորդ վարդապետը կանչեց ինձ և ասաց. «Եկ մի, զարմանալի բաներ լսիր, որ պատմում է իմ ամենակրտսեր քահանան»: Երբ գնացի նրա մոտ, կանչեց քահանային, որ զարմանալի երազ էր տեսել, և ասաց. «Այժմ ասա, ինչ որ ինձ նախօրոք պատմեցիր, որ սա ևս լսի»: Քահանան սկսեց պատմել, թե՝ «Նախքան ձեր՝ մեր եկեղեցին գալը, ես սուրբ եկեղեցու վերնատանը աղոթում էի, հանկարծակի Գաբրիել հրեշտակապետի նկարված պատկերը, որ գտնվում է ամենասրբուհի Աստվածածնի պատկերի հանդեպ, խոսեց ու ասաց. «Ուրա՛խ եղիր, ո՛վ դու բերկրյալդ, տերը քեզ հետ է»: «Օրհնված ես դու կանանց մեջ, և օրհնված է քո արգանդի պտուղը»: Բոլոր սրբերի նկարված պատկերները սկսեցին նույն բանը խոսել մինչև մեծ ժամը:

Ես զարմացած փառք տվի Աստծուն և քննելով տոմարական հաշիվներով՝ գտա, որ այդ օրը արեգ ամսի երեսունն էր և ապրիլ ամսի յոթը, Նիսանի տասնհինգը: Այս տեսիլքը և հրաշքի երևալը հաստատում են հայոց տոնի ճշմարտացիությունը, որ ասում ենք Սուրբ Կույսի ավետյաց օրը արեգի երեսունին, ապրիլի յո-

թին, Նիսանի տասնհինգին է և ոչ թե, ինչպես հակառակվում են մյուս ազգերը, մանավանդ հույները՝ ասելով անխոհեմաբար, թե մարտի քսանհինգին է»:

Այս պատմեց ճշմարտախոհ այն մարդը ի հաստատումն մեր ուղղափառ հավատի:

Սրա նման մի ուրիշ բան էլ պատմեց այն սուրբ մարդ Հովհաննեսը: «Ես, ասում է, Հորդանան գետի կողմերն էի. աղոթում էի տիրոջ և սուրբ Հովհաննես Կարապետի մկրտության տեղերում: Ինձ մոտ կրոնով մահմեդական երեք մարդիկ եկան և խնդրեցին, որ իրենց մկրտեմ: Ես հապաղում, թողնում էի ուրիշ օրվա և կամ [մտածում էի] թող ուրիշներից մկրտություն ստանան, որովհետև տեսնում էի, որ նրանք վայրենաբարո մարդիկ են և կարծում էի՝ ձևանում են:

Նրանից տարեցը ինձ պատմեց և ասաց. «Մենք պարսից քաղաք Զանգիանից ենք, կրոնով մուղրի ենք: Շինեցինք մեծ ու գեղեցիկ մի աշտարակ և պատրաստեցինք բացման տոնահանդեսի համար ինչ անհրաժեշտ է: Ես, ըստ արաբական կրոնի, բարձրացա գմբեթի ծայրը անարժան ազանը տալու: Եվ ահա տեսա արևելքի կողմից երկինքը պատռված և վայրը անչափ լույսով լիքը: Մի զարմանալի ու ահեղ թագավոր նստած փառքի աթոռին, իսկ նրա շուրջը լուսեղեններ բազմություն էր, որոնք նրան օրհնում էին անպատմելի ձայնով: Նրան երկրպագելու էին գալիս բոլոր քրիստոնյա ազգերը՝ յուրաքանչյուրը իր կրոնի առաջնորդներով, որոնք զարդարված էին երևելի փառքով: Եվ երբ երկրպագում էին նրան, նա ընդունում էր նրանց ողջույնը: Ի վերջո եկավ մի այլ ազգ, որ փառքով շատ ավելի առավել էր, քան նախորդները, իսկ սրա առաջնորդները չափազանց զարմանալի էին: Երբ եկան, թագավորին երկրպագեցին, նա աթոռից վեր կացավ նրանց ընդառաջ ու համբուրեց նրանց իրենց առաջնորդներով և մյուս ազգերից ավելի մեծարեց:

Եվ մինչդեռ ես հիացած կանգնած էի զարմացումով ու ապշանքով, վերև, ինձ մոտ, եկավ իմ այս ավագ որդին և ասաց. «Ինչո՞ւ ուշացար, ամբողջ ժողովուրդը քեզ է սպասում»: Սա նույնպես նայեց արևելք ու նույն տեսիլքը տեսավ և հիմարացած կանգնեց: Ապա երբ չափազանց ուշացանք, ամբոխը մեր ուշանալու վրա նեղսրտեց: Բարձրացավ եկավ իմ այս կրտսեր որդին և մեզ մեղադրում էր մեր ուշանալու համար: Բայց որովհետև սրա գալու ժամանակ տեսիլքը չքացել էր, սրան պատմեցինք ուշանալու պատճառը և տեսիլքի հանգամանքները: Եվ իսկույն կամեցանք այն բարձունքից Քրիստոսին ճշմարիտ Աստված, իսկ մեզ՝ քրիստոնյաներ հայտարարել: Սա մեզ արգելեց և ասաց. «Եթե այդպես է, խելքով գործ բռնենք. եթե հիմա մենք Քրիստոսին քարոզենք, իսկույն տաճկաց այս ամբոխը մեզ կսպանի, և պատրվակ կբռնեն, թե ինչ-որ հանցանքի համար սպանեցինք, իսկ մեր մասին ո՞վ է իմանում: Այլ գնանք մեր պատրաստած ճաշերը տանք նրանց, իսկ մենք գնանք Երուսաղեմ սուրբ քաղաքը և այնտեղ լինենք կատարյալ քրիստոնյաներ ավազանի մկրտության միջոցով, մանավանդ այն քրիստոնյաների ձեռքով, որոնց մասին դուք ասում եք, թե նրանց մեծ ցնծությամբ ընդունեց թագավորը, և ձեզ տեսիլքում նշան արվեց, թե այն հայոց ազգն էր, որ վիճակ ընկավ Թադեոսին, Բարդուղիմեոսին և սուրբ Գրիգորին»:

Մենք, անսալով սրա խոսքերին, իջանք նրանց մոտ՝ ոչ մեկին ոչինչ չպատմելով: Թողեցինք մեր ամբողջ շարժական ու անշարժ գույքերը, եկանք Երուսա-

ղեմ և Աստծուն աղաչեցինք, որպեսզի մենք հանդիպենք այն ազգին, որ տեսիլքում փառավոր էր: Եվ Աստված քե՛զ ցույց տվեց մեզ, և նույն նշանը տեսանք քեզ վրա: Այժմ աղաչում ենք քեզ, տուր մեզ Քրիստոսի մկրտությունը և մեզ դարձրու քո Աստծուն կատարյալ ծառաներ»:

Ես տեսա նրանց հոժարությունը, և թե մանավանդ տիրոջից է իմ կոչումը, նրանց մկրտեցի Հորդանան սուրբ գետում հանուն Հոր և Որդու և Սուրբ Հոգու, և նրանց հաղորդեցի Աստվածորդու պատվական մարմնով ու արյունով: Մեզ ողջունեցին, քաղաքից դուրս եկան գնալու Մեծ Հոռմ, տեսնելու սուրբ առաքյալներ Պետրոսի ու Պողոսի գերեզմանները ի փառս Քրիստոսի»:

Նաև այս էր ասում նույն սքանչելի Հովհաննեսը, թե՝ «Ազգով հայ քառասուն տղամարդ գնացին Սինա անապատը, այն լեռը, ուր Աստված երևաց Մովսեսին և տվեց քարե տախտակները, որոնց վրա գրված էին տասը պատգամները, երկրպագելու Աստծուն և տեսնելու սուրբ վայրերը»:

Լեռան ստորոտում մի վանք կար. ազգով հոռոմ, վարքով խստակրոն [մարդիկ] այնտեղ օթևանեցին: Եվ մինչ նրանք կամենում էին լեռը բարձրանալ [հայերը], վանքի բնակիչները, պատվիրեցին նրանց և ասացին. «Գիշերը այնտեղ մի՛ քնեք, որովհետև ովքեր այնտեղ գիշերում են, ահավոր արհավիրքներ են տեսնում. այլև շատ մարդիկ կորստի են մատնվել»:

Իսկ նրանք համարձակորեն բարձրացան՝ առանց որևէ ուտելիք իրենց հետ վերցնելու: Այնտեղ մի քանի օր ուշացան: Վանքի բնակիչները զարմացել էին, թե ինչ եղան, որովհետև [իջնելու] ուրիշ ճամփա չկար. համարում էին, թե արհավիրքից ոչնչացան:

Իսկ նրանք իրենց ուխտը կատարելուց հետո լեռնից իջան փառավորված ու հրաշալի կերպարանքով: Այժմ նրանք քառասուներկու հոգի էին: Վանքի բնակիչները զարմացած՝ ջահերով ու լապտերներով ընդառաջ ելան նրանց ու մեծ հարգանքով տարան տեղավորեցին: Զարմանում էին, որովհետև երբ բարձրանում էին լեռը, քառասուն էին, իսկ երբ իջան, քառասուներկու են. միաժամանակ գիտեին, որ բացի նրանցից դեպի վեր ոչ ոք չի գնացել: Երբ սեղան գցեցին ճաշելու, երկու այն փառավոր տղամարդիկ, որոնք ավելացել էին քառասունի վրա, վեր կացան նրանց սպասավորելու սեղանի շուրջը և թույլ չէին տալիս վանքի մարդկանց՝ ծառայելու նրանց, այլ ասում էին. «Մենք սովորություն ունենք մեր եղբայրներին ինքներս սպասավորելու»:

Եվ երբ կերան ինչ որ անհրաժեշտ էր, նրանց ողջունեցին ու աներևույթ եղան. դրանք էին Մովսեսն ու Եղիան: Վանքի բնակիչները մեծ ահով բռնվեցին. նրանց պատվում էին իբրև հրեշտակների, ու մեծ պատվով ճամփու դրին»:

Սրբասեր Հովհաննեսը իր համեստության պատճառով այս բանը պատմում էր ուրիշների անունից, որպեսզի չիմանան, թե ինքն էլ նրանց հետ էր:

Սրանից հետո նա շրջեց բազմաթիվ գավառներ ու քաղաքներ, հասավ Կողոնիա քաղաքը: Թուրքերից ու արաբներից շատերը գալիս էին նրա մոտ ու մկրտվում էին նրա սքանչելի վարքի ու բժշկության համար, որ նա անում էր:

Ապա պարսիկները նախանձեցին նրան, և Կողոնիա քաղաքի իշխանը բռնեց նրան ու մի քահանայի,

չոր փայտ կուտակեց, նրանց դրեց մեջը, կրակ տվեց: Նրա հետ եղած քահանան լաց էր լինում, իսկ նա քաջալերում էր նրան ու ասում. «Մի՛ վախենա, աստված կարող է մեզ ազատել այս կրակից, ինչպես երեք մանուկներին»:

Եվ մինչդեռ բոցը բորբոքվում էր, իշխանի երեխան բերդի պարսպից ընկավ ու անվնաս վեր կացավ: Եվ երբ հարցրին, թե՝ ինչպե՞ս կենդանի մնացիր,- նա պատասխանեց, թե՝ այն մարդը, որին գցեցիք կրակը, ինձ իր ձեռքերով պահեց և չթողեց, որ գետին ընկնեմ: Իշխանը անմիջապես [մարդ] ուղարկեց և հրամայեց կրակից նրանց հանել ու թույլ տալ՝ ուր ուզում են, գնան:

Նա շրջեց բազմաթիվ գավառներ, գնաց Հռոմկլա հայոց մեծ կաթողիկոս տեր Կոստանդինի մոտ: Նա ուրախությամբ մեծ պատվով ընդունեց նրան և թույլ չտվեց որևէ տեղ գնալու: Այնտեղ մնաց, մինչև փոխադրվեց Քրիստոսի մոտ և թաղվեց այնտեղ: Իր կյանքը ավարտեց ու հավատը պահեց, հասավ անթառամ պսակին ու անվախճան կյանքի: Նրա աղոթքը թող մեզ սատար լինի և մեղքերի թողության տա, իսկ նրա հիշատակը բոլոր սրբերի հիշատակի հետ մեր տեր Հիսուս Քրիստոսի համար լինի, որին հավիտյան փառք:*

---

* *Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982 թ., գլուխ ԾԴ, էջ 250-255:*

ԱՂԱԻԹՔ ՍՈՒՐԲ ՀԱՒՐՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑՈՅ՝ ԱՍԱՑԵԱԼ Ի ՎԵՐԱՑ ԳՐՈՅ ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՅ

ՀԱՅՐ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՈԹՔՆԵՐԸ՝ ԻՐ ԱՆՎԱՆ ՏԱՌԵՐՈՎ

1. ԱՂԱԻԹՔ ԿԻՒՐԱԿԷԻ ԱՒՈՒՐՆ

Յաւիտենից Աստուա՛ծ եւ արարիչ բոլորից, որ յայսմ աւուր սկսեալ՝ ի սկզբանէ արարեր զերկինս եւ զերկիր եւ որոշեցեր զլոյսն ի խաւարէն, խաւարեալս մեղաւք անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ. Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, լուսաւորեա՛ զխաւարեալ խորհուրդս եւ զմթով ծածկեալ միտքս, բա՛ց զառ ի գործեալ զառագաստ զգայարանիս եւ ծագեա՛ առ ծառայս անպիտան զնշոյլ ճառագայթից քոց: Փա՛ղքդ անպատում, որ փարէիր ի վերայ անհուն համասփիւռ ջուրցն, փայլեցո՛ առ փանաքիս զփառացդ լոյսդ սրբարար, մաքրեա՛ ի մեղաց զբազմամեղս եւ սրբեա՛ յանսահման սխալանաց: Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, որ յայսմ աւուր կոչեցեր զլոյսն տիւ, եւ զխաւարն կոչեցեր գիշեր, զգիշեր մեղաց իմոց եւ զխաւար անաւրէնութեանց իմոց հերքեա՛ եւ հեռացո՛ յինէն: Այլ դու, Տէ՛ր, գթա՛ծ եւ մարդասէր, որ յառաջ քան զլինելն երկնի եւ երկրի պատրաստեցեր զարքայութիւնդ ի սկզբանէ՝ սրբոց առաքելոց եւ ամենայն սիրողաց քոց, արա՛ եւ զիս արժանի ընդ նոսին ժառանգել զխոստացեալ բարիսն եւ ընդ նոսին փառաւորել զամենասուրբ զԵրրորդութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

1. ԿԻՐԱԿՆՕՐՅԱ ԱՂՈԹՔ

Հավերժի Աստված և բոլորի արարիչ, որ այս օրից սկսած նախ ստեղծեցիր երկինքն ու երկիրը, առանձնացրիր լույսը խավարից: Մեղքով խավարյալս ընկնում եմ քո առջև և աղաչում քեզ, իմ Տեր և Աստված, լուսավորիր խավար խորհուրդներս ու մութով ծածկված մտքերս, բաց արա զգայարանիս առագաստը գործելու և անպիտան ծառայիս ծագեցրու քո ճառագայթների շողը: Փա՛ռք անպատում, որ փարում էիր անհուն համասփյուռ ջրերի վրա, փայլեցրու նվաստիս փառքիդ սրբարար լույսը, մեղքերից մաքրիր բազմամեղիս և սրբիր անսահման սխալներից: Տեր և Աստված իմ, որ այս օրը լույսը տիվ անվանեցիր, իսկ խավարը՝ գիշեր, իմ մեղքի գիշերը և իմ անօրինությունների խավարը հերքիր ու հեռացրու ինձնից: Բայց դու, Տեր, գթած և մարդասեր, որ երկնքի ու երկրի լինելուց առաջ նախապես պատրաստեցիր արքայությունդ սուրբ առաքյալներին և բոլոր քեզ սիրողներին, ինձ ևս արժանի արա նրանց հետ ժառանգելու խոստացածդ բարիքները և նրանց հետ փառավորելու Երրորդությունդ. հավիտյանս հավիտենից. ամեն:

2. ԱՂԱԻԹՔ ԵՐԿՈՒՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐՆ

Ո՛վ ամենակալ եւ ամենակարող Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, որ յայսմ աւուր քո ամենազաւր եւ բարձրագոյն բանիւդ բաժանեալ անջրպետեցեր զբազմութիւն ջուրցն ընդ երկուս, եւ անշուշտ ամրութեամբ սահմանեցեր զհաստատութիւնն երկնից ի մէջ ջուրցն՝ տեղի զբաւսանաց ամենայն զուարթնոցն երկնից, անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, ասա՛ բանիւդ այդուիկ առ իս, եթէ՝ «Թողեալ լիցին քեզ մեղք քո» *[Մատթ. Թ. 5]* բազում. քանզի անաւրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, եւ բազմութիւն յանցանաց իմոց ծածկեաց զիս: Զի՛ք չափ չարեաց չարասիրիս, եւ ո՛չ գոյ թիւ թաղծեալ անաւրէնութեանս: Մեկնեա՛ յինէն զյանցանս իմ, Տէ՛ր, եւ անջրպետեալ վերացո՛ ի վսերէս զվէրս վիրաւորեալ ծառայիս, արա՛ արժանի զանպիտան ծառայս քո երկնից արքայութեանդ՝ առ ամենայն սուրբս քո, զի ընդ նոսին փառաւորեցից զամենազաւր տէրութիւնդ՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

2. ԱՂՈԹՔ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐՎԱ

Ո՛վ ամենակալ և ամենակարող Տեր և Աստված իմ, որ այս օրը քո ամենազոր և բարձրագույն խոսքով ջրերի զանգվածը անջրպետելով բաժանեցիր երկու մասի և անսուտ ամրությամբ սահմանեցիր երկնքի հաստատությունը ջրերի մեջ՝ բոլոր գվարթուններին զբոսավայր: Ընկնում եմ քո առջև և աղաչում քեզ. Ասա՛ այդ խոսքովդ ինձ՝ «Թողնված են քե՛զ մեղքերդ» (Մատթ., Թ 5) բազում: Որովհետև իմ անօրինությունները բարձրացան իմ գլխից [վեր], և իմ հանցանքների բազմությունը ծածկեց ինձ: Զարասերիս չարիքին չափ չկա, և ոչ՝ թիվ ցավալի անօրինությանս: Հեռացրու ինձնից հանցանքներս, Տեր, և անջրպետելով վերացրու վերքերը վիրավորված ծառայիս, և արժանացրու անպիտան ծառայիս քո երկնային արքայությանը, քո բոլոր սրբերի մոտ, որ նրանց հետ փառավորեմ ամենասուրբ տերությունդ՝ Հայր և Որդի և Սուրբ Հոգի. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

3. ԱՂԱԻԹՔ ԵՐԵՔՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐՆ

Վերին վայելչութեանցդ վերանորոգող եւ ստորնայնոցս ստեղծող՝ Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր անբաւութեան ջուրցն ժողովիլ ի ժողովս իւրեանց, յորում երեւեցաւ ցամաքն հանդերձ բարեբողբոջ բուսաւք եւ տնկաւք, եւ ծառաւք եւ ծաղկաւք, եւ ամենայն բարի պտղաւք յազգս իւրեանց, անկանիմ առաջի քո եւ խնդրեմ ի քէն՝ թարշամեալս մեղաւք ի հոգւոյ ծաղկանցն եւ անպտուղս ի բարի արգասեացն, հայեա՛ց, Տէ՛ր, ի ստեղծուածս անմեղ մատանցդ, եւ զգործս անարատ ձեռացդ մի՛ անտես առներ, այլ նախախնամական սիրովդ խնայեա՛ ի խախտեալս եւ ի տարակուսեալս մեղաւք, զի նետք նենգաւորին խոցոտեցին զիս, եւ հարան յիս փուշք բանսարկուին, վիրաւորեաց զիս վիշապն ահագին, եւ թոյնք մահաբեր գազանին թափեցան ի վերայ իմ. չի՛ք ուստեք փրկութիւն, եւ ո՛չ գոյ բժշկութիւն հոգւոյ եւ մարմնոյ իմոյ: Արդ, հայցեմ ամենամեղս յամենազաւր տէրութենէդ, բժշկեա՛ զբեկեալ սիրտս եւ պատեա՛, մարդասէր Տէր, զկարեվէրս. եւ որպէս այսաւր որոշեցեր զջուրն ի ցամաքէն, նոյնպէս որոշեա՛ յինէն զամենայն անաւրէնութիւնս իմ, եւ արժանի արա՛ երկնից արքայութեանդ՝ ընդ ամենայն սուրբս փառաւորել զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

3. ԱՂՈԹՔ ԵՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՎԱ

Վերին վայելչություններիդ վերանորոգող և ստորիններիս ստեղծող, Տեր իմ և Աստված իմ, որ այս օրը անհատակ ջրերին հրամայեցիր կուտակվելու իրար վրա, ուր երևաց ցամաքը բարեբողբոջ բույսերով ու տունկերով, ծառերով ու ծաղիկներով և ամեն տեսակ բարի պտուղներով, ընկնում եմ քո առջև ու խնդրում քեզնից՝ հոգու ծաղիկներից մեղքով թառամածիս և բարի արգասիքներից անպտուղիս, նայի՛ր, Տեր, անմեղ մատներիդ ստեղծածիս, և անարատ ձեռքիդ գործիս մի՛ անտեսիր, այլ նախախնամական սիրովդ խնայիր խախտվածիս ու մեղքով տարակուսածիս, որովհետև նենգավորի նետերն ինձ խոցոտեցին, և իմ մեջ ծլեցին բանսարկուի փշերը, ինձ վիրավորեց ահագին վիշապը, և մահաբեր գազանի թույները թափվեցին վրաս: Այլ տեղից փրկություն չկա և ոչ՝ բժշկություն իմ հոգուն և մարմնին: Արդ, ամենամեղս հայցում եմ ամենազոր տերությունից, բուժիր բեկված սիրտս, կապիր, մարդասեր Տեր, խոր վերքերս, և ինչպես այսօր անջատեցիր ջուրը ցամաքից, նույնպես անջատիր ինձնից բոլոր անօրինություններս և արժանացրու երկնային արքայությանդ՝ բոլոր սրբերի հետ փառավորելու ամենազոր տերությունդ. հավիտյանս հավիտենից. ամեն:

4. ԱՂԱԻԹՔ ՁՈՐԵՔՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐՆ

Անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, անճառ ճառագա՛յթ եւ անհասանելի լո՛յս, եւ լուսեղինաց դասուցդ յաւրինի՛չ, եւ լուսաւորացդ երկնից ստեղծո՛ղ, Երրորդութի՛ւն սուրբ, որ յայսմ աւուր գոյացուցեր զարեգակն եւ զլուսին եւ զաստեղս, եւ եդեր զնոսա ի հաստատութիւն երկնից՝ լուսաւորել զարարածս եւ ցուցանել զժամս եւ զժամանակս, զաւուրս եւ զտարիս. եւ արդ, ես՝ խափանեալս ի լուսոյ եւ ծածկեալս խաւարաւ մեղաց, հայցեմ յամենալոյս ողորմութենէդ՝ որպէս տարրական լուսաւորացդ շնորհեցեր լոյս, շնորհեա՛ եւ ինձ յառատ եւ յանհամեմատ լուսոյդ փոքր մի մասն եւ բաժին, եւ փարատեա՛ յինէն զմէգ եւ զխաւար յանցանաց, եւ անանց լուսովդ առաջնորդեա՛ ինձ յերկնից արքայութիւնդ՝ ընդ ամենայն սուրբս փառաւորել զամենազաւր տէրութիւնդ՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

4. ԱՂՈԹՔ ՁՈՐԵՔՇԱԲԹԻ ՕՐՎԱ

Աղաչում եմ քեզ, քո առջև ընկնելով, Տեր իմ և Աստված իմ, անճառ ճառագայթ և անհասանելի լույս և լուսեղեն դասերի ստեղծող, երկնքի լուսավորներին հորինող, Սուրբ Երրորդություն, որ այս օրը գոյացրիր արեգակը, լուսինն ու աստղերը և նրանց տեղավորեցիր երկնքում՝ լուսավորելու արարածներիս և ցույց տալու ժամ ու ժամանակ, օր ու տարի, և արդ, ես՝ լույսից զրկվածս և մեղքի խավարով պատածս, լուսաշող ողորմությունից հայցում եմ՝ ինչպես տարրեղեն լուսավորներիդ շնորհեցիր լույս, ինձ ևս շնորհիր մի փոքր մաս ու բաժին առատ և անհամեմատելի լույսից, և ինձնից փարատիր հանցանքի մեգն ու խավարը, և անանց լույսովդ առաջնորդիր ինձ երկնային արքայությունդ՝ բոլոր սրբերի հետ փառավորելու ամենազոր տերությունդ՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

5. ԱՂԱԻԹՔ ՀԻՆԳՇԱԲԱԹԻ ԱՒՈՒՐՆ

Ներող եւ ներգործող բարեաց, բազմագութ եւ ողորմած Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր ջրոյն հանել յինքեանէ զհոյլս զեռնոց եւ ձկանց ծովու եւ թռչնոց երկնից, եւ աւրհնեցեր զնոսա՝ աճել եւ բազմանալ, եւ մինչեւ ցայսաւր եւ առ յապա խնամարկես ի վերայ նոցա. եւ արդ, ես՝ բազմամեղս, անկեալ աղաչեմ զքեզ, բազմազեղ եւ ազնուագութ Տէ՛ր, մի՛ անտես առներ զմեղաւորս ի պահպանութենէդ քումմէ եւ մի՛ մերժեր զյանցաւորս ի պարգեւաց քոց, այլ ցո՛յց ինձ զողորմութիւնդ քո եւ արա՛ առ իս նշան բարութեան: Բա՛րձ զբեռինս բարկացուցանողիս եւ ազատեա՛ զտառապեալս ի տոռանց մեղաց: Մի՛ բարկանար ինձ, Տէ՛ր, վասն բազում անաւրէնութեան իմոյ, եւ մի՛ դատապարտեր զդառնացուցիչս վասն անուանդ քում սրբոյ, այլ տու՛ր ձեռն տարաւրինեցելոյս, եւ հա՛ն ի խորոց անդնդոց զխորասուզեալս մեղաւք, մաքրեա՛ յաղտոյ մեղաց եւ ազատեա՛ ի խղճէ մտաց զբազմաբիծս, զորդիս կորստեան արա՛ որդիս լուսոյ, եւ զհեռացեալս յարդարութենէ արա՛ մերձաւոր քոց սրբոցն եւ սիրելեացն, զի ընդ նոսին մտեալ ի հանգիստն մշտնջենաւոր՝ փառաւորեցից զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

5. ԱՂՈԹՔ ՀԻՆԳՇԱԲԹԻ ՕՐՎԱ

Ներող և ներգործող բարիքների, բազմագութ ողորմած Տեր իմ և Աստված իմ, որ այս օրը ջրին հրամայեցիր իրենից հանել ծովի զեռուններ ու ձկներ և երկնքի թռչուններ, և օրհնեցիր նրանց աճել ու բազմանալ և մինչև այսօր ու այսուհետև խնամարկում ես նրանց: Եվ արդ, ես՝ բազմամեղս, ընկած աղաչում եմ քեզ, առատաձեռն և ամենագութ Տեր, մի՛ զրկիր բազմամեղիս քո պահպանությունից և մի՛ մերժիր հանցավորիս քո պարգևները, այլ ցույց տուր ինձ քո ողորմությունը և բարության նշան տուր ինձ: Վերցրու բարկացնողիս բեռները և ազատի՛ր տառապյալիս մեղքի ուռկանից: Մի՛ բարկանար ինձ վրա, Տեր, իմ բազում անօրինության համար, մի՛ դատապարտիր դառնացուցչիս քո սուրբ անվան համար, այլ ձեռք մեկնիր օրինազանցիս և անդունդի խորքից հանիր մեղքով խորտակվածիս, մեղքի աղտից մաքրիր և բազմամեղիս խղճմտանքը ազատիր, կորստյան որդուս լույսի որդի դարձրու և արդարությունից հեռացածիս մերձավոր դարձրու քո սրբերին ու սիրելիներին, որ նրանց հետ մշտնջենական հանգիստը մտնելով՝ փառավորեմ ամենազոր տերությունդ. հավիտյանս հավիտենից. ամեն:

6. ԱՂԱԻԹՔ ՈՒՐԲԱԹԻ ԱՒՈՒՐՆ

Էապէս բարի եւ ամենակարող զաւրութիւն՝ Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, որ յայսմ աւուր հրամայեցեր երկրի հանել յիւրմէ զգազանս եւ զանասունս, եւ զսողունս եւ զչորքոտանիս՝ յազգս իւրեանց, զվայրենիս եւ զընտանիս, եւ յայսմ աւուր արարեր զմարդն անձնիշխան, եւ կացուցեր զնա տէր եւ իշխան ի վերայ ամենայն ձեռակերտաց քոց, եւ եդեր զնա ի դրախտին փափկութեան՝ պահել զպատուէրն, բայց իմ է պատուիրանազանցութիւն նախահաւրն, որով արտաքսեցաք ի պայծառ պատուոյն եւ ի փափուկ փառացն: Մանաւանդ զի նա մի անգամ խաբեցաւ փոքր եւ թեթեւ յանցմամբ, իսկ ես անթիւ եւ մեծամեծ յանցանաւք մեղանչեմ անդադար, ուստի եւ վասն պարտաւորելոյս բարձրացար յայսմ աւուր Բանդ Աստուած ի վերայ խաչին: Եւ արդ, աղաչեմ զքեզ, երկայնամիտ եւ անոխակալ Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, ողորմեա՛ ինձ ողորմեցելոյս եւ մեղաւք լցելոյս: Մի՛ ընդ վայր հարկաներ զպատկերս՝ յոր փչեցեր, եւ մի՛ մատներ զիս յաւիտենից տանջանացն՝ զոր ստեղծեր, զի քո եմ, Տէ՛ր, եւ ի քեզ յուսամ, եւ ի քէն ակն ունիմ արձակիլ ի կապոյ յան-

6. ԱՂՈԹՔ ՈՒՐԲԱԹ ՕՐՎԱ

Էապես բարի և ամենակարող զորություն, Տեր իմ և Աստված իմ, որ այս օրը երկրին հրամայեցիր հանել գազաններն ու անասունները, սողուններն ու չորքոտանիները՝ իրենց տեսակներով, վայրիներն ու ընտանիները, և այս օրը մարդուն ստեղծեցիր ինքնիշխան, և նրան տեր ու իշխան կարգեցիր քո բոլոր ձեռակերտների վրա, և նրան փրկության դրախտում դրեցիր՝ պահելու պատվիրանը, բայց իմն է նախահոր պատվիրանազանցությունը, որի համար արտաքսվեցինք պայծառ պատվից ու փափուկ փառքից: Մանավանդ որ, նա փոքր ու թեթև հանցումով մի անգամ խաբվեց, իսկ ես անթիվ և մեծամեծ հանցանքներով մեղանչում եմ անդադար, ուստի դատապարտվածիս համար այս օրը խաչ բարձրացար, Բանդ Աստված: Եվ արդ, աղաչում եմ քեզ, ներողամիտ ու անոխակալ Տեր իմ և Աստված իմ, ողորմիր ինձ ողորմելիս և մեղքով լցվածիս: Մի՛ զգետնիր պատկերս, որին փչեցիր, և մի՛ մատնիր ինձ, որ ստեղծեցիր, հավիտենական տանջանքի, քանի որ քոնն եմ, Տեր, և հույսս դու ես, և քեզնից

ցանացս: Ուստի եւ հանդիպեցուսցես զիս, Տէ՛ր, թողութեան մեղաց եւ քաւութեան յանցանաց, եւ մասնակից արասցես զվրիպեալս արանց արդարոց եւ ի սկզբանէ ընտրելոցն, զի ընդ նոսին հանգուցեալ փառաւորեցից զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

եմ ակնկալում արձակվել հանցանքներիս կապանքից: Ուստի, Տեր, կհանգեցնես ինձ մեղքի թողության և հանցանքի քավության, և շեղվածիս մասնակից կդարձնես արդար մարդկանց և նախապես ընտրվածներին, որպեսզի նրանց հետ մշտնջենական հանգիստը մտնելով՝ փառավորեմ ամենազոր տերությունդ. հավիտյանս հավիտենից. ամեն:

7. ԱՂԱԻԹՔ ՇԱԲԱԹՈՒ ԱՒՈՒՐՆ

Սուրբ Երրորդութի՛ւն անբաժանելի, անճառելի եւ անաշխատ, որ յայսմ աւուր հանգեալ յամենայն գործոց քոց, զոր սկսար առնել եւ կատարել, որ նշանակեաց հանգիստն զթաղումն աստուածացեալ մարմնոյդ, որ աշխատեցար բազկատարած բեւեռմամբն ի վերայ կենսաբեր սուրբ խաչին. եւ արդ, ահա ես՝ ամենամեղս, անկեալ աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, յո՛յս իմ Յիսուս Քրիստոս, եւ խնդրեմ ի քէն վասն փառաց երեսաց Հաւրդ լուսոյ եւ վասն փառակցութեան Հոգւոյդ Սրբոյ, եւ վասն կամաւոր չարչարանաց քոց, եւ վասն կենդանարար արմատ փայտին եւ սուրբ բեւեռացն, եւ վասն հեղման քրքմատեսակ ազատարար սուրբ արեանդ, եւ վասն երեքաւրեայ թաղմանն եւ հրաշալի յարութեանն, եւ վասն կուսական կաթինն Մարիամու Սրբոյ Աստուածածնին, եւ վասն սիրոյ եւ բարեխաւսութեան ամենայն սրբոց քոց՝ երկնաւորաց եւ երկրաւորաց, սրբեա՛ զիս յամենայն մեղաց իմոց եւ ազատեա՛ ի դառն վշտաց գեհենին, եւ արժանի արա՛ զանպիտան ծառայս քո խոստացեալ բարեացն՝ ընդ ամենայն սուրբս քո, զի ընդ նոսին հանգուցեալ փառաւորեցից զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

7. ԱՂՈԹՔ ՇԱԲԱԹ ՕՐՎԱ

Սուրբ Երրորդություն անբաժանելի, անճառելի և անխոնջ, որ այս օրը հանգստացար քո բոլոր գործերից, որ սկսեցիր ստեղծել ու կատարել[ագործել], որ հանգիստը խորհրդանշեց աստվածացած մարմնիդ թաղումը, որ բազկատարած գամվելով՝ չարչարվեցիր կենսաբեր սուրբ խաչի վրա: Արդ, ահա ես՝ ամենամեղս, ընկած աղաչում եմ քեզ, Տեր իմ և Աստված իմ, հույս իմ Հիսուս Քրիստոս, և խնդրում եմ քեզնից լույսի Հորդ երեսի փառքի և սուրբ Հոգուդ փառակցության համար, և քո կամավոր չարչարանքի համար, և կենդանարար արմատով փայտի ու սուրբ գամերի համար, և քո քրքմագույն, ազատարար սուրբ արյան հեղման համար, և եռօրյա թաղման ու հրաշալի հարության համար, և սուրբ Մարիամ Աստվածածնի կուսական կաթի համար, քո երկնային և երկրավոր բոլոր սրբերի սիրո ու բարեխոսության համար, սրբիր ինձ իմ բոլոր մեղքերից և ազատիր գեհենի դառն վշտերից և քո անպիտան ծառայիս արժանացրու քո խոստացած բարիքին՝ քո սրբերի հետ, որ նրանց հետ հանգչելով՝ փառավորեմ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

8. ԱՂԱՒԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Գա՛ռն Աստուծոյ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ, Յիսուս Քրիստո՛ս, որ զենար ի վերայ սուրբ խաչին եւ բարձեր զմեղս աշխարհի. մեղուցեալ ծառայս քո եւ ծանրաբեռնեալս ամենայն յանցանաւք՝ անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, ողորմեա՛ ինձ՝ մեղաւորիս, որպէս ողորմեցար համաւրէն աշխարհի, զի դո՛ւ ես յոյս եւ լոյս աշխարհի, ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք: Զմահացեալս մեղաւք ծառայս քո, որ կամ առաջի անոխակալ մարդասիրութեանդ քո, եւ զանաւրինեալս յանցանաւք՝ մի՛ անտես առներ, այլ ողորմեա՛ ինձ վասն ամենայն տնաւրինական կրից քոց, որոց տարար համբերութեամբ բազմաւ:

Յիշեա՛, ամենակեցոյց Տէ՛ր, զիջումն քո ի հայրական ծոցոյն եւ զմարմնանալն ի սրբոյ Կուսէն Մարիամայ:

Յիշեա՛, ամենաւրհնեալ Տէ՛ր, զշրջելն քո իբրեւ զմարդ՝ ի մէջ մեղաւորաց մարդկան:

Յիշեա՛, ամենասուրբ Տէ՛ր, զմկրտիլն քո ի Յորդանան ի Յովհաննէ:

Յիշեա՛, ամենագէտ Տէ՛ր, զդսրովանսն ի դպրացն եւ զփորձանսն ի փարիսեցւոցն:

8. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Գառն Աստծու, Տեր իմ և Աստված իմ, Հիսուս Քրիստոս, որ զոհվեցիր խաչի վրա և վերացրիր աշխարհի մեղքերը, մեղսագործ ծառաս քո և ամեն հանցանքով ծանրաբեռնվածս ընկնում եմ քո առջև ու աղաչում քեզ, Տեր իմ և Աստված իմ, ողորմիր ինձ՝ մեղավորիս, ինչպես ողորմեցիր ամբողջ աշխարհին, քանի որ դու ես աշխարհի հույսն ու լույսը, ճանապարհ, ճշմարտություն և կյանք: Մեղքով մեռած քո ծառայիս, որ քո անոխակալ մարդասիրության առջև եմ, հանցանքով անօրինացածիս մի՛ անտեսիր, այլ ողորմի՛ր ինձ հանուն բոլոր տնօրինական չարչարանքներիդ, որ կրեցիր բազում համբերությամբ:

Հիշի՛ր, ամենակեցույց Տեր, հայրական ծոցից իջնելդ և սուրբ կույս Մարիամից մարմնանալդ:

Հիշի՛ր, ամենօրհնյալ Տեր, իբրև մարդ քո շրջելը մեղավոր մարդկանց մեջ:

Հիշի՛ր, ամենասուրբ Տեր, քո մկրտվելը Հորդանանում Հովհաննեսի ձեռքով:

Հիշի՛ր, ամենագետ Տեր, դպիրներից ստացած նախատինքն ու փորձանքները՝ փարիսեցիներից:

Յիշեա՛, յառաջատես Տէ՛ր, զմատնիլն ի Յուդայէ եւ զքամահիլն ի քահանայից:

Յիշեա՛, ամենազաւր Տէ՛ր, զընկրկիլն ի պարտիզին եւ զձեռնակապիլն ի խուժանէն:

Յիշեա՛, ամենակարող Տէ՛ր, զկալն առաջի Կայիափայի եւ զհարցումն ի յԱննայէ:

Յիշեա՛, անոխակալ Տէ՛ր, զապտակն ի ծառայէն եւ զկոուփն ի կատաղեացն:

Յիշեա՛, երկայնամիտ Տէ՛ր, զթուքն ի յԵբրայեցւոցն եւ զծեծն եղեգամբ:

Յիշեա՛, արքա՛ արքայից, զկապանաւք կանգնիլն յատենին Պիղատոսի եւ զգանիլն ի նմանէ:

Յիշեա՛, անմատոյց լո՛յս, զքղամիդն կարմիր եւ զպսակն փշեղէն:

Յիշեա՛, անյիշաչար Տէ՛ր, զժամն զայն, յորժամ բարձեր զխաչափայտն կենսաբեր ուսովդ:

Յիշեա՛, բարձրեա՛լ, զբարձրանալն քո ի վերայ կենդանարմատ փայտին եւ զպարապնդիլն բեւեռաւք:

Յիշեա՛, մի՛ մոռանար զպասքումն ծարաւոյն եւ զճաշակ լեղւոյն եւ քացախին:

Յիշեա՛, մի՛ մոռանար զձայնն «Էլի, Էլի» [*Մատթ. ԻԷ. 46, Մրկ. ԺԵ. 34*] եւ զխոցումն ի զինուորէն:

Յիշեա՛, մի՛ մոռանար զհոսումն վարդագոյն սուրբ արեանդ եւ զխոնարհիլն աստուածացեալ գլխոյդ:

Հիշի՛ր, կանխատես Տեր, Հուդայից մատնվելն ու քահանաներից ծաղրվելը:

Հիշի՛ր, ամենազոր Տեր, պարտեզում բռնվելն ու կապկպվելը խուժանից:

Հիշի՛ր, ամենակարող Տեր, Կայիափայի առջև լինելն ու Աննայից հարցաքննվելը:

Հիշի՛ր, անոխակալ Տեր, ծառայից ապտակվելն ու կատաղիների կռուփը:

Հիշի՛ր, երկայնամիտ Տեր, եբրայեցոց թուքն ու ծեծելը եղեգնով:

Հիշի՛ր, արքաների արքա, Պիղատոսի ատյանում կապանքներով կանգնելն ու նրանից դատահարվելը:

Հիշի՛ր, անմատչելի լույս, կարմիր քղամիդն ու փշե պսակը:

Հիշի՛ր, անհիշաչար Տեր, այն ժամը, երբ ուսիդ առար կենսաբեր խաչափայտը:

Հիշի՛ր, բարձրյալ, քո բարձրանալը կենդանարմատ փայտին և գամերով ամրանալը:

Հիշի՛ր, մի՛ մոռանար ծարավից նեղվելը և լեղի ու քացախ ճաշակելը:

Հիշի՛ր, մի՛ մոռանար «Էլի, Էլի» ձայնը, և զինվորից խոցվելը:

Հիշի՛ր, մի՛ մոռանար վարդագույն սուրբ արյանդ հոսելը և աստվածացած գլխիդ խոնարհվելը:

Յիշեա՛, կենդանիդ յաւիտենից՝ զթաղումն երեքաւրեայ եւ զյարութիւնն աստուածապէս եւ զհամբարձումն հրաշափառապէս:

Յիշեա՛, յիշեա՛, յիշատա՛կդ յաւիտենից, զկորուսեալս, քանզի վասն մեղաւորիս յանձն առեր զայս ամենայն, ամենագութ Տէ՛ր:

Արդ, զայս ամենայն ունիմ առ քեզ միջնորդ եւ բարեխաւս, բազումողո՛րմ, ողորմեա՛ ինձ եւ թո՛ղ զամենայն յանցանս իմ, եւ սրբեա՛ ի մեղաց. ազատեա՛ յանվախճան վշտաց գեհենին եւ տու՛ր ինձ տեղի յարքայութեանդ քում, զի դու ես մարդասէր Տէր: Եւ քեզ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն Սրբոյ վայել է փառք, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Հիշի՛ր, կենդանիդ հավիտենից, եռօրյա թաղումն ու աստվածորեն հարություն առնելը և հրաշափառորեն համբարձվելը:

Հիշի՛ր, հիշի՛ր կորսվածիս, հիշատակդ հավիտենից, քանի որ մեղավորիս համար հանձն առար այս ամենը, բոլորագութ Տեր:

Արդ, այս ամենն ունեմ քո առջև միջնորդ ու բարեխոս, բազումողորմ, ողորմի՛ր ինձ և թո՛ղ իմ բոլոր հանցանքները և սրբիր մեղքերից, ազատի՛ր գեհենի անվախճան վշտերից և ինձ տեղ տուր քո արքայության մեջ, չէ՛ որ դու մարդասեր Տեր ես: Եվ քեզ Հոր և Սուրբ Հոգու հետ վայել է փառք, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

[ՅԱՒԵԼՈՒՄ]

...քաղցր եւ անոխակալ, եւ թո՛ղ ինձ զմեղս իմ, զոր գործել եմ՝ զկամայն եւ զանկամայն, զգիտութեան եւ զանգիտութեան, եւ հա՛ն յիսնէ զսիրտ քարեղէն, եւ տո՛ւր ինձ սիրտ մարմնեղէն, եւ զՀոգի*ս* Սուրբ մի՛ հաներ յինէն: Հեռացո՛ զիս յամենայն չար գործոց, զոր դու ատես, եւ մերձեցո՛ զիս ի գործս բարիս, զոր դու սիրես՝ գնալով յաստուածային պատուիրանս քո: Զի թեպէտ եւ ես բազմացուցի զմեղս իմ աւր ըստ աւրէ առաջի քո, բայց դու մի՛ ըստ բազում մեղաց իմոց արասցես ինձ, եւ մի՛ ըստ անաւրէնութեան իմում հատուցաներ ինձ, զի ես կաւ եմ, եւ դու՝ ստեղծիչ իմ, եւ գործք ձեռաց քո եմ: Մեղայ, անաւրինեցայ եւ մատնեցայ ի ձեռս անաւրէն թշնամոյն, եւ խոտորեցի զոտս իմ յուղեղ շաւղաց քոց, եւ զսիրտս իմ չերկնչել ի քէն: Եւ արդ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ, եւ փրկի՛չ Յիսուս Քրիստոս, մի՛ թողուր ի սպառ ի ձեռաց քո զգինս սուրբ արեան քո, զի թեպէտ եւ ես բարկացուցի իմ չար գործաւքս զսուրբ անունդ քո, եւ զողորմած եւ զանբարականալի Աստուածդ ի բարկութիւն շարժեցի ի վերայ աշխարհի՝ իմ չար գործաւքս եւ անառակ վարիւքս, եւ կոխան եղէ այնո-

(ՀԱՎԵԼՈՒՄ)

...Քաղցր և անոխակալ, և թող իմ մեղքերը, որ գործել եմ՝ կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ, և հանի՛ր ինձնից քարեղեն սիրտը, և տուր մարմնեղեն սիրտ, և Սուրբ Հոգիդ մի՛ հանիր ինձնից: Հեռացրո՛ւ ինձ ամեն տեսակ չար գործերից, որ դու ատում ես, և ինձ մոտեցրո՛ւ բարի գործերի, որ դու սիրում ես՝ գնալու քո աստվածային պատվիրաններին: Որովհետև թեպետ քո առջև օրըստօրե բազմացրի իմ մեղքերը, բայց դու իմ բազում մեղքերին համարժեք մի՛ տուր ինձ և իմ անօրինության համաձայն մի՛ հատուցիր ինձ, քանի որ ես կավ եմ, իսկ դու՝ իմ ստեղծիչը, եւ քո ձեռքի գործն եմ: Մեղա, անօրինացա և մատնվեցի անօրեն թշնամու ձեռքը, և չեղեցի ոտքերս քո ուղիղ շավիղներից, և սիրտս չերկնչեց քեզնից: Եվ այժմ, Տեր իմ և Աստված և Փրկիչ Հիսուս Քրիստոս, խպառ մի՛ թող քո ձեռքից [ինձ, որ] քո սուրբ արյան գինն եմ: Որովհետև թեպետ ես իմ չար գործերով բարկացրի քո սուրբ անունը, և ողորմած ու անբեկանելի Աստծուդ բարկացրի աշխարհի վրա իմ չար գործերով ու անառակ վար-

ցիկ, որ զանուն քո ոչ կարդացին, սակայն ի քեզ անկայ յարգանդէ աւազանին, եւ ո՛չ գոյ աստուածս աւտարս: Դու ես հա՛յր իմ, Յիսո՛ւս Քրիստոս, եւ տուի՛չ բարեաց, եւ քաւի՛չ մեղաց իմոց, մերժեա՛ յինէն զաղտ մեղաց եւ զհիւանդութիւնս, առ քեզ կարդամ զաւր հանապազ՝ մեղայ յերկինս եւ առաջի քո: Աստուա՛ծ, քաւեա՛ զիս՝ զմեղաւորս, բա՛ց ինձ զդուռն, որպէս բացեր աւազակին զդուռն դրախտին, եւ տո՛ւր ինձ առանց նենգութեանց, եւ յիստակ հայցուածով եւ մաքուր խորհրդով, եւ առաքինաջան գործով, զսուրբ սրտիւ եւ հա[ս]տատուն հաւատով սպասաւորել սրբարար սեղանոյ քո: Եւ մի՛ հայիր յանարժանութիւնս իմ, որ ամաթալից կամ առաջի քո մեղապարտ անձամբ, քանզի դու գիտես զյանցանս իմ, որ քննես զսիրտս եւ զերիկամունս ամէնեցուն, եւ զյաճախութիւն մեղաց իմոց ի քէն ո՛չ կարեմ թաքուցանել, զի ծածկագէտ ես: Այո՛, աղաչեմ զքեզ, մարդասէ՛ր, քա՛ղցր եւ անոխակալ, երկայնամի՛տ եւ բազումողորմ, զի Հթէ զամենայն սուրբս ո՛չ ունէաք առ քեզ բարեխաւս, ո՛չ կարէաք աղաչել զքեզ, այլ առաւել ունիմ առ քեզ բարէխաւս զքո կամաւոր տնաւրինական խորհուրդն, զոր կամաւորաբար կատարեցեր վասն իմ մեղաւորիս...

քով, և ընկա նրանց ոտքի տակ, որ քո անունը չկանչեցին, բայց քեզ մոտ ընկա արգանդից ավազանի, և օտար աստվածներ չկան: Դու ես իմ հայրը, Հիսուս Քրիստոս, և բարիքներ տվող, և իմ մեղքերը քավող. հեռացրո՛ւ ինձնից մեղքի աղտն ու հիվանդությունները, քեզ եմ դիմում օր ու գիշեր՝ մեղա երկնքի և քո առջև: Աստված, քավի՛ր ինձ՝ մեղավորիս, բա՛ց արա դուռը, ինչպես բացիր դրախտի դուռն ավազակին, և ինձ տո՛ւր առանց նենգությունների, հստակ հայցումով ու մաքուր մտածությամբ և առաքինաջան գործով, սուրբ սրտով և հաստատուն հավատով սպասավորել քո սրբարար սեղանին: Եվ մի՛ նայիր անարժանությանս, որ քո առջև եմ ամոթալից մեղապարտ անձամբ, քանի որ դու գիտես իմ հանցանքը, որ քննում ես բոլորի սրտերն ու երիկամները, և իմ մեղքերի հաճախությունը չեմ կարող քեզնից թաքցնել, որովհետև ծածկագետ ես: Այո՛, աղաչում եմ քեզ, մարդասեր, քաղցր և անոխակալ, ներողամիտ և բազումողորմ, եթե բոլոր սրբերին քո առջև բարեխոս չունենայինք, չէինք կարող աղաչել քեզ: Բայց առավել բարեխոս ունեմ քեզ մոտ քո կամավոր տնօրինական խորհուրդը, որ ինձ՝ մեղավորիս համար կատարեցիր կամովին ...

9. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Աստուածածի՛ն, մա՛յր Քրիստոսի եւ ծնո՛ղ միածնին Հաւր, բարձո՛ղ անիծից եւ պարծանք ազգի մարդկան, յերկնային զաւրացն երանեալ եւ ի հողեղինացս աւրհնաբանեալ, միջնո՛րդ Աստուծոյ եւ մարդկան եւ հաշտարա՛ր Հաւր ընդ արարածս, թա՛գ եւ պսակ կուսից եւ համարձակ բարեխաւս վասն մեղաւորաց, մեղուցեալս յամենայնի անկանիմ առաջի քո եւ աղաչեմ իբրեւ զնոյն ինքն զմարմնացեալն ի քէն, բարեխաւսեա՛ վասն իմ առ Բանն Աստուած, զոր ծնար մարմնով, զոր կերակրեցեր՝ զկերակրիչն ամենայնի եւ ամենայն կենդանեաց: Աղաչեա՛ վասն իմ զանդրանիկն քո, կա՛ց կանգուն առաջի նորա ցուցմամբ սուրբ ստեանցդ, կացո՛ առաջի նորա միջնորդ եւ բարեխաւս զմանկութիւն իւր, զկաթամբ սնանիլն որպէս մանուկ, զուսով բառնիլն, զգրկաւք գգուիլն, զշրթամբք համբուրիլն, զողջագուրելն որպէս տղայ, զերթեւեկելն քո ընդ նմա յԵգիպտոս եւ ի Նազարէթ եւ յամենայն տեղիս, զտրտմութեամբ տառապիլն վասն դորա ի ժամ չարչարանացն, զյանձնարարութիւնն քո առ Յովհաննէս՝ յորժամ հեղուսեալ կայր վշտաւք ի վերայ խաչին, զդառն արտասուք քո, զոր վտակաւրէն հեղուիր՝ յորժամ տեսանէիր զնա վտանգեալ ի

9. ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ

Աստվածածի՛ն, Քրիստոսի մայր և Հոր Միածնի ծնող, անեծքները վերացնող և մարդկային ցեղի պարծանք, Հորը հաշտեցնող արարածներիս հետ, կույսերի թագ ու պսակ և համարձակ բարեխոս մեղավորների համար: Ամեն ինչով մեղավորս ընկնում եմ քո առջև և աղաչում իբրև նույն ինքը՝ քեզնից մարմնացածը, բարեխոսիր ինձ համար Բան Աստծու առջև, որին ծնեցիր մարմնով, որին կերակրեցիր՝ բոլորի և բոլոր կենդանյաց կերակրիչին: Ինձ համար աղաչիր քո անդրանիկին, կանգնի՛ր նրա առջև՝ սուրբ ստինքներդ ցույց տալով, նրա առջև միջնորդ ու բարեխոս դարձրու իր մանկությունը, կաթով սնվելը որպես մանուկ, ուսիդ առնելը, գրկով գգվելը, շրթներով համբուրելը, ողջագուրելն իբրև մանկան, քո գնալ-գալը նրա հետ Եգիպտոս և Նազարեթ և ամենուր, նրա համար տրտմությամբ տառապելը չարչարանքի ժամին, քեզ Հովհաննեսին հանձնարարելը, երբ խաչի վրա վշտով դամված էր, և քո դառն արտասուքը, որ վտակի պես հեղում էիր, երբ տեսար նրան

վերայ խաչին: Վասն որոյ մատնի ի դատաստան՝ տառապէիր կսկծակոծ, վասն չարաչար չարչարանացն, վասն սաստիկ ծարաւմանն, վասն ճաշակման լեղւոյն եւ քացախին, վասն տեսանելոյն զքրքմատեսակ արիւնն իջեալ, վասն իջուցանելոյն ի խաչէն արիւնազանգ մարմնովն, վասն դիազարդիկ դնելոյն ի սուրբ գերեզմանն:

Աղաչեմ զքեզ, Մայր լուսոյ, հայցեա՛ վասն իմ զթողութիւն մեղաց, դի՛ր աղերս աղաչանաց առաջի նորա զամենայն կիրս չարչարանացն իւրոց, զի վասն իմ կրեաց բարերարն եւ մարդասէրն: Ցիշեցո՛, սուրբ կո՛յս, զայսքան չարչարանքս, զի թերեւս ողորմեսցի եւ ներեսցէ բազմամեղիս, եւ ջնջեսցէ զձեռագիր յանցանաց իմոց, եւ իւրով անմեղ մատամբն եւ սուրբ արեամբն դրոշմեսցէ զդեգերեալս ի դպրութիւն կենացն անվախճանից առ ամենայն սուրբս իւր, զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

խաչի վրա վտանգված: Քանի որ մատնվեց դատաստանի՝ տառապում էիր կսկիծով չարաչար տանջանքների համար, սաստիկ ծարավելուն, լեղի ու քացախ ճաշակելուն, քրքմնագույն արյան իջնելը տեսնելով, խաչից արնաներկ մարմինն իջեցնելիս, դիազարդած սուրբ գերեզման դնելիս:

Աղաչում եմ քեզ, Լույսի մայր, ինձ համար մեղքի թողություն խնդրիր, նրա առջև դիր աղերս ու աղաչանք՝ [հիշեցնելով] նրա կրած չարչարանքները, որ ինձ համար կրեց բարերարն ու մարդասերը: Սուրբ կույս, հիշեցրո՛ւ այսքան չարչարանքս, որ թերևս ողորմի և ներե բազմամեղիս, և ջնջե իմ հանցանքի գիրը, և իր անմեղ մատով ու սուրբ արյունով դրոշմե դեգերածիս անվախճան կյանքի մատյանում, իր բոլոր սրբերի մոտ, որ նրանց հետ փառավորեմ ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

10. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ռահ լուսոյ եւ ճշմարիտ ճանապարհ կենացն, յաւիտենից կենդանիդ Քրիստոս Աստուա՛ծ, դու ես դուռն լուսոյ եւ բղխումն ողորմութեան, դու ես հովիւ քաջ եւ դարձուցիչ մոլորելոց, դու ես թողիչ մեղաց եւ քաւիչ յանցանաց: Յանցաւոր ծառայս քո եւ բազմամեղս խնդրեմ յառատ ողորմութենէ քումմէ՝ մի՛ յիշեր զմեղս իմ զառաջինսն, այլ հանդերձ միջնովքն եւ վերջնովքն վերացո՛ յինէն: Սրբեա՛ զիս սրբարար զաւրութեամբդ եւ ազատեա՛ յանթիւ յանցանացս, մաքրեա՛ զիս ի խղճէ մտացս եւ արձակեա՛ ի կապից մեղաց, եւ ազատեա՛ անվախճան տանջանաց: Թո՛ղ ինձ զպարտիս իմ, որպէս թողեր անդամալուծին, եւ արդարացո՛ իբրեւ զմաքսաւորն, զերծո՛ զիս յաններելի տանջանացն եւ մո՛յծ զմոլորեալս ի խորանս սիրելեաց քոց, զի եւ ես ընդ նոսին փառաւորեցից զքեզ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

10. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Ռահ լույսի, և կյանքի ճշմարիտ ճանապարհ, հավերժ կենդանի Քրիստոս Աստված, դու ես լույսի դուռ և բխումն ողորմության, դու ես քաջ հովիվ և մոլորյալներին դարձնող, դու ես մեղքերը ներող և հանցանքները քավող: Քո հանցավոր ծառաս և բազմամեղս խնդրում եմ քո առատ ողորմությունից՝ մի՛ հիշիր իմ առաջին մեղքերը, այլ միջիններով ու վերջիններով վերացրու ինձնից: Սրբի՛ր ինձ սրբարար քո զորությամբ և ազատի՛ր անթիվ հանցանքներից, մաքրիր ինձ խղճմտանքից և արձակիր մեղքի կապերից: Թո՛ղ ինձ իմ պարտքերը, ինչպես թողիր անդամալույծին, և արդարացրու՝ ինչպես մաքսավորին, փրկիր ինձ աններելի տանջանքից և մոլորյալիս մտցրու քո սիրելիների խորանները, որպեսզի և ես նրանց հետ փառավորեմ քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

11. ԱՂԱՒԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Նայեա՛, Տէ՛ր, քաղցրութեամբ առ դառնացուցիչս, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, Յիսուս Քրիստոս: Մի՛ բարկանար ինձ, Տէ՛ր իմ, վասն բազում մեղաց իմոց, եւ մի՛ մերժեր ի սպառ զգործս ձեռաց քոց. մի՛ հասցէ ի վերայ իմ ցասումն անոխակալիդ, եւ մի՛ անտես արասցես զտարակուսեալս, Տէ՛ր երկայնամիտ եւ անչիշաչար: Յիշեա՛, մարդասէ՛ր, զվտարանդեալս մեղաւք եւ պատեա՛ ողորմութեամբ զվէրս վիրաւորելոյս, քանզի տոհումնք մեղաց պատեցան զինեւ, եւ հոյլք յանցանաց պաշարեցին զիս: Հա՛ս յաւգնութիւն կործանելոյս եւ փրկեա՛ զխաղբակեալս ի մեղաց, յորմէ դողամ, ի դառնութենէ դժոխոցն ապրեցո՛ զիս, Տէ՛ր իմ. եւ յորմէ սարսեմ՝ յանշէջ հրոյն, պահեա՛ զիս զեղկելիս, Աստուա՛ծ իմ. զմեղաւք աղտեղեալս սրբեա՛, Տէ՛ր իմ, եւ ի սկզբանէ սրբոցն մասնակից արա՛ զիս, Աստուա՛ծ իմ. եւ զհարուածեալս ի մեղաց՝ հրաւիրեա՛ յանճառ երկնից յարքայութիւնդ՝ առ կամարարս անուանդ քում սրբոյ, զի ընդ նոսին փառաւորեցից զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

11. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Նայի՛ր, Տեր, քաղցրությամբ դառնացնողիս, Տեր իմ և Աստված իմ, Հիսուս Քրիստոս: Մի՛ բարկանա ինձ վրա, Տեր իմ, իմ բազում մեղքերի համար, և մի՛ մերժիր իսպառ քո ձեռքի գործիս. ինձ չհասնի անոխակալիդ ցասումը, և մի՛ անտեսիր տարակուսածիս, Տե՛ր ներող և անհիշաչար: Հիշի՛ր, մարդասեր, մեղքով վտանգվածիս և ողորմությամբ պատիր վիրավորվածիս խոցերը, քանի որ մեղքի կապանքները պատեցին ինձ, և հանցանքի բազմությունը պաշարեց ինձ: Օգնությա՛ն հասիր կործանվածիս և փրկիր մեղքից բռնվածիս, որից դողում եմ, դժոխքի դառնությունից փրկի՛ր ինձ, Տե՛ր իմ, և սարսում եմ անշեջ հրից, պահի՛ր ինձ՝ եղկելիս, Աստված իմ. մեղքով աղտեղվածիս մաքրիր, Տե՛ր իմ, և ինձ միացրու ի սկզբանե սրբերին, Աստվա՛ծ իմ. և մեղքերից խփվածիս հրավիրիր երկնքի անճառ արքայությունը՝ քո սուրբ անվան կամարարների մոտ, որ նրանց հետ փառավորեմ ամենազոր տերությանդ հավիտյանս հավիտենից. ամեն:

12. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Երկնաւոր թագաւոր, որ վասն գիւտի միոյ մեղաւորի՝ զՀայր եւ զՀոգի հանդերձ հրեշտակաւքն ուրախացուցեր, ապա մի՛ յապաղեցուսցես յինէն զգութ ողորմութեան քո. գի՛տ զկորուսեալս մեղաւք ի խորս անդնդոց եւ արա՛ խրախութիւն ի բարձունս երկնաւորացդ, կանգնեա՛ զգլորեալս յանցանաւք, յարո՛ զանկեալս ի մեղս, լուսաւորեա՛ զխաւարեալս, սրբեա՛ զաղտեղեալս, դարձո՛ զմոլորեալս: Մի՛ թողուր զիս ի կամս անձին իմոյ գնալ, զի մի՛ տիրեսցեն ինձ ամենայն մեղք իմ: Խնդրեմ, Տէ՛ր, հայցեմ եւ բախեմ, բա՛ց ինձ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան քո: Մի՛ ընդ վայր եւ ի զուր լիցի այնքան աշխատութիւնդ վասն իմ, զոր կրեցեր ի Գողգոթա՝ խաչն, բեւեռքն, ծարաւն, լեղին, քացախն, հարուածք տիգին, հեղումն արեանդ, ձայնն ահաւոր, գոչումն ուժգին, բարբառն «Էլի, էլի», նա եւ ա՛յլ ամենայն վիշտքն, զոր կրեցեր վասն կորուսելոյս: Վասն որոյ միջնորդ եւ բարեխաւս ունիմ առ քեզ զփրկարար տնաւրէնութեան զկիրսն, փրկեա՛ զմեղու-

12. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Երկնայի՛ն Թագաւոր, որ մի մեղաւորի գյուտով ուրախացրիր Հորն ու Հոգուն՝ հրեշտակների հետ, մի՛ ուշացրու ինձ քո ողորմության գութը, գտի՛ր անդունդների խորքում մեղքով կորսվածիս և ուրախություն արա երկնավորներիդ բարձունքում, կանգնեցրու մեղքով գլորվածիս, սրբի՛ր աղտեղվածիս, դարձրո՛ւ մոլորածիս: Ինձ մի՛ թող գնալ իմ կամքով, որ ինձ չտիրեն բոլոր մեղքերս: Խնդրում եմ, Տեր, հայցում եմ, բախում, ինձ համար բա՛ց, Տեր, քո ողորմության դուռը: Զկորչի և զուր չանցնի այնքան չարչարանքդ ինձ համար, որ կրեցիր Գողգոթայում՝ խաչը, գամերը, ծարավը, լեղին, քացախը, տեգի հարվածները, արյանդ հեղումը, ահավոր ձայնը, ուժգին գոչումը, «Էլի, էլի» բարբառումը, նաև մյուս բոլոր վշտերը, որ կրեցիր կորուսյալիս համար: Որի առթիվ քեզ մոտ միջնորդ ու բարեխոս ունեմ փրկարար տնօրինության կրածները. փրկի՛ր մեղուցյալիս գեհենի

ցեալս ի սպառնալեաց գեհենոյն եւ հանգո՛ զգինս արեան անեղիդ յերկնային առագաստն լուսոյ, զի ընդ ամենայն սուրբս փառաւորեցից զքեզ ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյդ Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

սպառնալիքներից և [ինձ]՝ անեղիդ արյան գնին լույսի առագաստ հասցրու, որ բոլոր սրբերի հետ փառավորեմ քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ, այժմ և միշտ և հավիտյանս հա-վիտենից. ամեն:

13. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Ցաւագնեալս մեղաւք եւ ցանկորդեալս քաւութեան մեղաց եւ յանցանաց, խնդրեմ ի քէն, Տէ՛ր բարերար եւ բազմագութ, մի՛ յաւիտեան բարկանար ինձ, բարերա՛ր, վասն բազում մեղաց իմոց. եւ մի՛ ցանգ ցասնուր ցնորելոյս ի մեղս, երկայնամիտ Տէ՛ր: Ցիշեա՛, զի մարմին եմ դիւրագլոր, պատրանք երեւելեացս խաբեցին զպակասամիտս, եւ ցանկութիւնն չարեաց կուրացոյց զաչս հոգւոյս. մոռացայ զգութն քո որ առ իս եւ վատնեցի զպարգեւս ողորմութեան քո, յետս հարի զանմահարար սէր քո, եւ արհամարհեցի զխնամակալութիւն արարչիդ, հեստեցի յաւրինաց քոց, Տէ՛ր, եւ ապստամբեցի ի պատուիրանաց հզաւրիդ: Վասն այսորիկ մերժեցեր զմեղուցեալս եւ ընդ վայր հարեր զվայրագնացս, այլ չիք ուստեք փրկութիւն իմ բայց ի քէն, Տէ՛ր իմ: Դու ստեղծեր զիս, դի՛ր զձեռն քո ի վերայ վիրաւորեալ ոգւոյս. քեզ մեղայ, փրկութի՛ւնդ յաւիտենից, մի՛ դարձուցաներ զերեսս քո յինէն, եւ մի՛ խոտորիր բարկութեամբ յանպիտան ծառայէս: Երեւեցո՛ զերեսդ քո ի ծառայս քո, եւ քաղցր հայեա՛ց առ իս ա-

13. ԱՂՈԹՔ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ

Ցավագնածս մեղքով և մեղքերի ու հանցանքների քավություն ցանկացողս խնդրում եմ քեզ, բարերար և բարեգութ Տեր, հավետ մի՛ բարկանա իմ դեմ, բարերա՛ր, իմ բազում մեղքերի համար և իսպառ մի՛ զայրանա մեղքով ցնորվածիս, ներողամիտ Տեր: Հի՛շի՛ր, որ հեշտ տապալվող մարմին եմ, երևացող պատրանքները խաբեցին պակասամիտիս, և չարիքի ցանկությունը կուրացրեց հոգուս աչքերը. մոռացա քո գութն իմ նկատմամբ և վատնեցի քո ողորմության պարգևները, վանեցի քո անմահարար սերը և արհամարհեցի Արարչիդ խնամակալությունը, չեղվեցի քո օրենքներից, Տե՛ր, և ապստամբեցի հզորիդ պատվիրանների դեմ: Դրա համար մերժեցիր մեղուցյալիս և վար զարկիր ներքև ընթացողիս: Չկա ուրիշ տեղից ինձ փրկություն բացի քեզնից, իմ Տեր: Դու ստեղծեցիր ինձ, դի՛ր քո ձեռքը վիրավորված ոգուս վրա. մեղա քեզ, փրկությունդ հավիտենից, մի՛ շրջիր երեսդ ինձնից և բարկությամբ մի՛ շեղվիր քո անպիտան ծառայից: Ցո՛ւյց տուր երեսդ [ինձ]՝ քո

մենատես աչաքդ. փրկեա՛ զաշխարելիս ի հրոյն յաւիտենից եւ ազատեա՛ ի բորբոքեալ բոցոյն: Արժանացո՛ զտարակուսեալս անանց փառացն հանդիպել եւ փառաւորել զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ծառային և քա՛ղցր նայիր ամենատես աչքովդ, փրկի՛ր եղկելիս հավերժական հրից և ազատի՛ր բորբոք հրից: Տարակուսածիս արժանի արա հասնելու անանց փառքին և փառաբանելու ամենազոր տերությանդ հավիտյանս հավիտենից. ամեն:

14. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Ի քեզ յուսամ, Քրիստո՛ս Յիսուս, յո՛յս իմ, եւ աղաչեմ, քանզի բազում են յանցանք իմ առաւել քան զաւազ ծովու, բազում քան զաստեղս երկնից, անթիւ քան զալիս որ շրջի ի ծովու: Ահա զմեղս իմ ցուցից քեզ, եւ զանաւրէնութիւնս իմ ոչ ծածկեցից ի քէն, մեղայ Տէ՛ր, մեղայ, եւ զանաւրէնութիւնս իմ ես ինձէն գիտեմ:

Մի՛ յիշեր զմեղս իմ, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ զամբարշտութիւնս իմ համարիր, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ ըստ անզգամութեան իմոյ գաներ զիս, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ հատուցաներ ինձ ըստ գործոց իմոց, Աստուա՛ծ իմ Աստուած:

Մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ դառն դատաստանաւ դատեր զիս, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ դներ ի կշիռ զծանրութիւն մեղաց իմոց, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ խնդրեր համար անթիւ յանցանաց իմոց, Աստուա՛ծ Աստուած իմ:

14. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Ի՛մ հույս Հիսուս Քրիստոս, քե՛զ եմ հույս տածում, և աղաչում եմ, որովհետև շատ են իմ հանցանքները ծովի ավազներից, երկնքի աստղերից ավելի, անթիվ, քան ալիքները, որ շարժվում են ծովում: Ահա ցույց կտամ մեղքերս և անօրինությունս, որ թաքցրի քեզնից, մեղա, Տե՛ր, մեղա, և անօրինությունս ինքս գիտեմ:

Մի՛ հիշիր իմ մեղքերը, Տե՛ր իմ, Տ՛եր, և իմ ամբարշտությունը մի՛ հաշվիր, Աստված իմ, Աստվա՛ծ:

Ըստ իմ անզգայության՝ մի՛ գանահարիր, Տե՛ր իմ, Տե՛ր, և մի՛ հատուցիր՝ ըստ իմ գործերի, Աստված իմ, Աստված:

Մի՛ մտիր դատաստան ինձ՝ ծառայիդ հետ, Տե՛ր իմ, Տե՛ր, և մի՛ դատիր ինձ դառն դատաստանով, Աստված իմ, Աստված:

Կշռելու մի՛ դիր մեղքիս ծանրությունը, Տե՛ր իմ, Տե՛ր, և մի՛ փնտրիր թիվը անհամար հանցանքներիս, Աստված իմ, Աստվա՛ծ:

Մի՛ հարցափորձ քննութեամբ զարհուրեցուցաներ զիս, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ մանրամասն յուզեսցես զծածուկսն իմ, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ յահեղ հրապարակին հրատարակեսցես զգաղտնիս իմ, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ սաստելով սպառնայցես ինձ, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ ասասցես ինձ. «Ծառա՛ չար եւ վատ» *[Մատթ. ԻԵ. 25]*, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ հրամայեսցես հրեղէն կապանաւքն կապել զձեռս եւ զոտս իմ, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ ընկենուր զիս ի բոցն բորբոքեալ, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ ծածկեսցես զծանակեալս ի ծովն բոցածաւալ, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ տարցես զիս ի գետն հրեղէն, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ վտակաւ կայծականց վատնեսցես զիս, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ տայցես զտառապեալս ի տուր տարտարոսին, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ անվախճան որդամբքն կշտամբեսցես զիս, Աստուա՛ծ Աստուած իմ:

Մի՛ առաքեսցես զեղկելիս ի խաւարն արտաքին, Տէ՛ր իմ Տէր, եւ մի՛ արտադրեսցես զողորմելիս ի լալ աչաց եւ ի կրճել ատամանցն, Աստուա՛ծ Աստուած իմ:

Հարցուփորձելով մի՛ զարհուրեցրու ինձ, Տե՛ր իմ, Տե՛ր, և մանրամասն մի՛ քննիր իմ գաղտնիքները, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Ահեղ ատյանում մի՛ հրապարակիր իմ գաղտնիքները, Տե՛ր իմ, Տե՛ր, և սաստելով մի՛ սպառնա ինձ, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Ինձ մի՛ ասա. «Ծառա չար և վատ» (Մատթ., ԻԵ 25), Տե՛ր իմ, Տե՛ր, և մի՛ հրամայիր հրե կապանքներով կապել ձեռքերս ու ոտքերս, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Ինձ մի՛ գցիր բորբոք բոցի մեջ, Տե՛ր իմ, Տե՛ր, և ծանակվածիս մի՛ ծածկիր բոցածավալ ծովում, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Ինձ մի՛ տար գետը հրեղեն, Տե՛ր իմ, Տե՛ր, և կայծակների վտակով մի սպառիր ինձ, Աստվա՛ծ իմ, Աստված:

Տառապյալիս մի՛ տուր տարտարոսի ձեռքը, Տե՛ր իմ, Տե՛ր, և անվախճան որդերով մի պատուհասիր, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Եղկելիս չուղարկես արտաքին խավարը, Տե՛ր իմ, Տե՛ր, և չպարտադրես ողորմելիս աչքերի լալն ու ատամների կրճտելը, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Մի՛ որոշեր զբազմամեղս յերամէ երանելեացն, Տէ՛ր իմ Տէր. եւ մի՛ զրկեր զտարակուսեալս յերանաւէտ փառացն, Աստուա՛ծ Աստուած իմ:

Այլ ըստ անհամեմատ մարդասիրութեանդ եւ ըստ բազմախնամ ողորմութեանդ ողորմեա՛ ինձ՝ մեղուցեալ ծառայիս քո, եւ փրկեա՛ ի դառնագոյն վշտաց գեհենին, եւ արա՛ արժանի մտանել ի խոստացեալ բարիսն քո ընդ ամենայն սուրբս, եւ ընդ նոսին փառաւորել զքեզ ընդ Հաւր եւ Սրբոյ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Բազմամեղիս մի՛ առանձնացրու երանելիների խմբից, Տե՛ր իմ, Տե՛ր, և տարակուսածիս մի՛ զրկիր երանավետ փառքից, Աստվա՛ծ իմ, Աստվա՛ծ:

Այլ անհամեմատ մարդասիրությանդ և բազմախնամ ողորմությանդ համաձայն ողորմի՛ր ինձ՝ քո մեղուցյալ ծառային, և փրկիր գեհենի ավելի դառն վշտերից, և արժանի դարձրու քո խոստացած բարիքի մեջ մտնելու բոլոր սրբերի հետ և նրանց հետ փառավորելու քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ. այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

15. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐ ՎԱՍՆ ԳԻՇԵՐՈՅ

Աղաչեմ զքեզ, Տէ՛ր Աստուած ամենակալ, եւ գոհանամ զանհաս մարդասիրութենէդ քումմէ, որ արժանի արարեր զանարժան ծառայս քո ժամանել ի ժամ գիշերոյս. Դու ես Տէր տուընչեան եւ գոյացուցիչ գիշերոյ, դու պահպանեա՛ զիս ի կարծեաց ցնորից եւ յերկիւղէ յերեւելեաց եւ յաներեւութից թշնամեաց, եւ ամրացո՛ ի դառնութենէ դիւաց, ի բռնութենէն բելիարայ, ի սաստից սատանայի, ի ծանրութենէ խիպիլկաց, ի փլմանէ շինուածոց, ի նենգութենէ մարդկան, ի յաղանդոյ կախարդաց, ի մոլար խորհրդոց, ի յաղտեղի մտածութեանց, ի ցանկական ցաւոց, ի զարհուրանաց քնոյ, ի դառն երազոց, ի յարհաւրաց չարին, ի յամբոխական անրջոց, եւ ի յայլ ամենայն իրաց չարաց պահպանեա՛ զծառայս քո ամենակեցոյց շնորհիւդ: Եւ քո ամենահնար ողորմութեամբդ շրջապատեալ ամրացո՛ յամենայն կողմանց զսենեակ հանգստարանիս յաջ եւ յահեակ, ի հիւսիս եւ ի հարաւ, ի յարեւելս եւ յարեւմուտս, ի յերկինս ի վեր եւ յերկիր ի խոնարհ, զբանակս հրեշտակաց առաքեա՛, Տէ՛ր, ի բնակարան ծառայիս: Տու՛ր ինձ, Տէ՛ր, լուսաւոր խորհուրդ եւ

15. ԱՂՈԹՔ ՏԻՐՈՋԸ ԳԻՇԵՐՎԱ ՀԱՄԱՐ

Աղաչում եմ քեզ, ամենակալ Տեր Աստվա՛ծ, գոհանում եմ քո անհաս մարդասիրությունից, որ քո անարժան ծառային արժանացրիր հասնելու գիշերվա այս ժամին: Դու ես տերը ցերեկի և գոյացնողը գիշերի, դու պահպանի՛ր ինձ ցնորական կասկածներից և երևելի ու աներևույթ թշնամիների երկյուղից և ամրացրու դևերի դառնությունից ու բելիարի բռնությունից, սատանայի սաստից, մղձավանջների ծանրությունից, շինվածքների փլչելուց, մարդկանց նենգությունից, կախարդների աղանդից, մոլար մտքերից, աղտեղի մտածումներից, ցանկական ցավերից, քնի զարհուրանքներից, դառն երազներից, չարի արհավիրքներից, խառնաշփոթ անուրջներից և բոլոր ուրիշ չար բաներից պահպանիր քո ծառային՝ ամենակեցույց շնորհովդ: Եվ քո բազմահնար ողորմությամբ շրջապատելով՝ անկողինս ամրացրո՛ւ բոլոր կողմերից աջից ու ձախից, հյուսիսից ու հարավից, արևելքից ու արևմուտքից, երկինքն ի վեր և երկրին խոնարհ, առաքիր հրեշտակների խմբերը, Տե՛ր, բնակատեղը ծառայիդ: Տո՛ւր ինձ,

արդիւնական մտածութիւն, տո՛ւր ինձ, Տէ՛ր, արթնութիւն մտացս եւ զգաստութիւն զգայարանացս, զի զուարթ մտաւք եւ արթուն խորհրդով հանգեալց, եւ գոհութեամբ փառաւորեցից զամենասուրբ տէրութիւնդ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Տե՛ր, լուսավոր միտք և օգտակար մտածումունք, տո՛ւր ինձ, Տե՛ր, մտքի արթնություն և զգայարանների զգաստություն, որպեսզի զվարթ մտքով ու արթուն խոհերով հանգստանամ և գոհությամբ փառավորեմ ամենասուրբ տերությանդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

16. ԱՂԱԻԹՔ ՄԻՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ ԵՐԿՆԱՅԻՆ ԶԱՒՐԱՑՆ

Սուրբք եւ սիրեցեալք յամենասուրբ Երրորդութենէն, հոգիք հարկաւորք, Գաբրիէլ, Միքայէլ, Ուրիէլ, Ռափայէլ՝ հրեշտակք եւ հրեշտակապետք, պետութիւնք եւ իշխանութիւնք, զաւրութիւնք եւ տէրութիւնք, սերովբէք եւ քերովբէք, աթոռք հոգեղէնք, հրեղէնք, բոցեղէնք, լուսեղէնք, եւ այլ ամենայն դասակարգութիւնքդ երկնաւորք, որոց առաջի անկանիմ եւ զարդարողին ձերոյ Տեառն Աստուծոյ երկիր պագանեմ, եւ խնդրեմ ի ձէնջ հայցել ի Տեառնէ զթողութիւն յանցանաց եւ զքաւութիւն մեղաց իմոց: Քանզի ձեզ տուեալ է համարձակութիւն վասն բարեխաւսութեան ամենայն մեղաւորաց: Քանզի դուք սուրբք էք եւ առ ամենասուրբն մաւտակացք: Դուք անմարմինք էք եւ անմեղանչականք, իսկ ես մարմնաւոր եմ եւ մեղանչական: Դուք անմահք եւ ի լոյս բնակեալք, իսկ ես՝ մահկանացու եւ խաւարաւ մեղաց ծածկեալ: Դուք թեթեւընթացք եւ քան զմիտս երագունք, իսկ ես՝ ծանրացեալ մեղաւք եւ զառածեալ յանցանաւք: Վասն որոյ աղաչեմ

16. ԱՂՈԹՔ ԵՐԿՆԱՅԻՆ ԶՈՐՔԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՑԱՄԲ

Սրբեր և սիրվածներ ամենասուրբ Երրորդությունից, սպասավոր հոգիներ, Գաբրիել, Միքայել, Ուրիել, Ռափայել՝ հրեշտակներ ու հրեշտակապետներ, պետություններ և իշխանություններ, զորություններ և տերություններ, սերովբեներ և քերովբեներ, հոգեղեն աթոռներ, հրեղեններ, բոցեղեններ, լուսեղեններ և մնացած բոլոր այլ երկնայիններ, որոնց առջև ընկնում և երկրպագում եմ ձեզ զարդարող Տեր Աստծուն, և ձեզնից խնդրում եմ հայցել Տիրոջից իմ հանցանքների թողություն և մեղքերի քավություն: Քանի որ ձեզ տրված է համարձակություն բարեխոսելու բոլոր մեղավորների համար: Որովհետև դուք սուրբ եք և մնում եք ամենասրբի մոտ: Դուք անմարմին եք և անմեղանչական, իսկ ես մարմնավոր եմ և մեղանչական: Դուք անմահ եք և լույսի մեջ բնակվող, իսկ ես՝ մահկանացու և մեղքի խավարով ծածկված: Դուք թեթևընթաց եք և մտքից արագ, իսկ ես՝ մեղքով ծանրացած և հանցանքով մոլոր: Դրա համար աղերսում եմ ձեզ, աղաչեցեք ինձ հա-

զձեզ, աղաչեցէ՛ք վասն իմ զՏէր, հայցեցէ՛ք զթողութիւն բազում յանցանացս, քանզի եւ ինքն իսկ մարդասէրն յաւժար է ի փրկութիւն կորուսելոյս: Մի՛ անփոյթ առնիցէք զխնդիր տարագրելոյս, այլ միաւորեալ զաղաչանս մեղուցելոյս ընդ ձեր ամենամաքուր մաղթանացդ՝ մատուցէ՛ք խնդրողին զկորուսեալս, զի փրկութեամբս իմով ուրախութիւն արասցէ ձեզ Տէր ի յերկինսդ, եւ ես ձերով միջնորդութեամբդ սրբեալ ի մեղաց եւ ազատեալ յամենայն յանցանաց, փառաւորեցից ընդ ձեզ զամենասուրբ զԵրրորդութիւնն՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

մար Տիրոջը, թողութիւն հայցեցեք բազում հանցանքներիս, քանի որ մարդասերն ինքն իսկ համաձայն է կորուսյալիս փրկության: Տարագրվածիս խնդրանքը մի՛ մատնեք անուշադրության, այլ մեղուցյալիս աղաչանքը միացնելով ձեր ամենամաքուր մաղթանքներին՝ մատուցեցեք կորածիս որոնողին, որ իմ փրկությամբ Տերը ձեզ ուրախություն տա երկնքում, իսկ ես, ձեր միջնորդությամբ մեղքերից սրբվելով և բոլոր հանցանքներից ազատվելով, փառավորեմ ձեզ հետ ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

17. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Աստուա՛ծ Աստուած իմ, որ քննես զսիրտս եւ զերիկամունս, հայեա՛ց յերկնից ի սրբութենէ քումմէ եւ տե՛ս զտարակուսեալ անձն եղկելւոյս: Ի յանցանաց ազատեա՛ զպարտաւորս եւ ի մեղաց մաքրեա՛ զբազմամեղս: Մի՛ ընկենուր զիս յերեսաց քոց, Տէ՛ր, եւ մի՛ ընդ վայր հարկաներ զիս վասն մեղաց իմոց: Արդ, աղաչեմ զքեզ, Տէ՛ր, զաւր վախճանին իմոյ ի պատշաճի արա՛, եւ զհրեշտակ խաղաղութեան առաքեա՛ առ ծառայս քո, զհոգեվարքն իմ թեթեւ արա՛ եւ զհոգիս իմ խաղաղութեամբ անցո՛ ընդ չարութիւն այսոցն, որ են ի ներքոյ երկնից: Խաւարեսցին աչք նոցա՝ զի մի՛ տեսցեն, եւ զչարութիւն նոցա կործանեա՛, Տէ՛ր: Սաստիկ սաստիւ սրտի քո, Տէ՛ր, սպառեսցին սպառնալիք նոցա, ըմբռնեսցին զարհուրանք նոցա, գանալիցք եղիցին գնացք նոցա, ըմբռնեսցին բռնութիւնք նոցա, խափանեսցին չար խորհուրդք նոցա, տոչորեսցին տարափք նոցա, ջարդեսցին ջոլիրք նոցա, կոփահարեսցին կառափք

17. ԱՂՈԹՔ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ

Աստվա՛ծ, Աստվա՛ծ իմ, որ քննում ես սրտերն ու երիկամները, երկնքի քո սրբությունից նայիր և տես եղկելիս տարակուսած հոգին: Հանցանքներից ազատիր պարտականս և մեղքերից մաքրիր բազմամեղս: Քո աչքից մի՛ գցիր ինձ, Տե՛ր, և իզուր մի՛ խփիր ինձ հանցանքներիս համար: Արդ, աղաչում եմ քեզ, Տե՛ր, իմ վախճանի օրը ըստ արժանվույն արա, և խաղաղության հրեշտակ առաքիր ինձ՝ ծառայիդ, իմ հոգեվարքը թեթև արա և իմ հոգին խաղաղությամբ անցկացրու չարությունից դևերի, որ կան երկնի ներքո: Թող խավարեն նրանց աչքերը, որ չտեսնեն, և կործանի՛ր նրանց չարությունը, Տե՛ր: Քո սրտի սաստիկ վրդովմունքով, Տե՛ր, թող սպառվեն նրանց սպառնալիքները, բռնվի նրանց զարհուրանքը, գանահարվի նրանց ընթացքը, բռնվի նրանց բռնությունը, խափանվեն նրանց չար խորհուրդները, տոչորվեն նրանց տարափները, ջարդվեն նրանց խմբերը,

նոցա, ջնջեսցին ջանք նոցա, եւ բանակքն բեկցին, զաւրքն զարհուրեսցին, շշնջմունքն շիջցին, պատերազմունքն պարտեսցին, յարձակմունքն արձանասցին, զէնքն զզուեսցին, աղաղակքն աղարտեսցին, մեքենայքն մանրեսցին, սպառազէնքն սպառեսցին, ցասմունքն ցածասցին, մեկնազէնքն մորմոքեսցին, ամբարտաւանութիւնքն ամաչեսցին, քաջքն քամահեսցին, լրբութիւնքն լլկեսցին, եւ միանգամայն ամենայն միաբանութիւնք նոցա ի սկզբանէ մարդասպանին ցրուեսցին: Ա՛ռ զզէն եւ զասպար քո եւ արի՛ յաւգնել վտանգելոյս, հա՛ն զսուր քո եւ արգե՛լ զնոսա յինէն, Տէ՛ր իմ եւ Աստուած իմ, տո՛ւր զաւրութիւն ծառայի քո, զի մի՛ ասասցէ թշնամին, թէ յաղթեցի նմա: Արա՛ առ իս նշան բարութեան, եւ նշանաւ խաչի քո, Տէ՛ր, խոցոտեա՛ զնոսա սուրբ բեւեռաւքն, բե՛կ զբանակ նոցա, կարմիր քղամիդաւն կարկեա՛ զնոսա, հարուածովք եղեգանն, աղէ՛, գանեա՛ զնոսա, փշեղէն պսակաւն նետաձիգ արա՛ զնոսա, լեղւովն եւ քացախովն՝ զաւր արբեր, կսկծակիծ արա՛ զնոսա, բղխմամբ սուրբ արեանդ հերքեա՛ զհոյլս նոցա, սոսկալի չարչարանաւքն

կոփահարվեն նրանց գանգերը, ջնջվեն նրանց ջանքերը, և ջարդվեն բանակները, զարհուրեն զորքերը, մարեն շշունջները, պարտվեն պատերազմները, հարձակումները քարանան, անարգվեն զենքերը, աղարտվեն աղաղակները, մանրանան գործիքները, սպառվի սպառազինությունը, ցասումն իջնի, մեկնազեններ մորմոքեն, ամբարտավանությունը ամաչի, քաջերն արհամարհվեն, լրբություններ լլկվեն, և նրանց ամբողջ միաբանությունը մարդասպանի հետ միանգամից ցրվի: Ա՛ռ քո զենքն ու ասպարը և հասիր օգնելու վտանգվածիս, հանիր քո սուրը և նրանց հեռացրու ինձնից, Տե՛ր իմ և Աստված իմ, զորությո՛ւն տուր քո ծառային, որ թշնամին չասի՝ հաղթեցի նրան: Ինձ բարության նշան արա քո խաչի նշանով, Տե՛ր, խոցոտիր նրանց սուրբ մեխերով, կոտրի՛ր նրանց բանակը, կարմիր քղամիդով ըմբերանիր նրանց, ապա եղեգնի հարվածներով գանահարիր նրանց, փշե պսակով նետահարիր նրանց, լեղիով ու քացախով, որ խմեցիր, կսկծեցրու նրանց, սուրբ արյանդ բխումով հերքի՛ր նրանց բազմությունը, քո

քո չարչարեա՛ զնոսա, ձայնիւն «Էլի Էլի» հրդեհեա՛ զնոսա, տիգաւն որով խոցեցար՝ տարամերժեա՛ զնոսա. եւ այլ ամենայն տնաւրինական կրիւքն կործանեա՛ զբելիար եւ զամենայն չարութիւն զաւրաց նոցա: Եւ զծառայս քո, Տէ՛ր, անդրդուելի եւ անդողալի պահեա՛ յերկիւղէ նոցա, եւ յամենայն պատրանաց նոցա ամրացո՛ յերեւելիս եւ յաներեւոյթսն, քանզի քեւ պահպանեալ եւ պարսպեալ՝ փառաւորեցից զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

սոսկալի չարչարանքով չարչարիր նրանց, «Էլի, Էլի» ձայնով հրդեհի՛ր նրանց, տեգով, որով խոցվեցիր, հեռացրու նրանց և ուրիշ տնօրինական տանջանքներով կործանի՛ր Բելիարին և նրանց ամբողջ չարությունը: Եվ ինձ՝ քո ծառային, Տե՛ր, անդրդվելի ու անդողալի պահիր նրանց երկյուղից, և նրանց բոլոր պատրանքներից ամրացրո՛ւ երևելիների ու աներևույթների մեջ, որ քեզնով պահպանված ու պարսպված՝ փառավորեմ տերությունդ հավիտյանս հավիտենից. ամեն:

18. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Յրուեա՛, Տէ՛ր, զաւրութեամբ սուրբ խաչի քո զընդդիմամարտութիւն այսոցն չարին, որ պատեալ կան զինեւ, կործանեա՛ զնոսա: Ողորմեա՛ ինձ մեղապարտիս յաւուր աՀեղ ատենի քում եւ մի՛ տար զիս նոցա ի ժառանգութիւն, զի կարող ես, բարերա՛ր, եւ անդ ողորմել յաւէտ զաւրեղութեամբ ասելով, թէ. «Ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ», կամ, թէ՝ «Թողեալ լիցին քեզ մեղանք քո» *[Մատթ. Թ. 2]*, կամ թէ՝ «Ե՛րթ ի խաղաղութիւն» *[Մարկ. Ե. 34, Ղուկ. Է. 50]*՝ սրբեալ ի մեղաց, զի անդ է ողորմելն իսկապէս: Եւ եթէ դատեսցես զիս ըստ մեղաց իմոց, ընդունայն է ինձ յարութիւն ի մեռելոց, բազում են անաւրէնութիւնք իմ, այլ եւ անբաւ է մարդասիրութիւն քո, որ փրկութիւնդ ես ամենեցուն: Յիշեա՛ զիս, գթա՛ծ, այցելու լե՛ր, ողորմա՛ծ, զի ստեղծուած եմ անարատ ձեռաց քոց. մի՛ ըստ մեղաց իմոց արասցես եւ մի՛ ըստ անաւրէնութեան իմում հատուցաներ ինձ: Մի՛ տայցես ինձ գնալ [ի] յաւիտենական կորուստ վասն բազում յանցանաց իմոց՝ զոր գործեցի յաւաղելի կեանս իմ, այլ փրկեա՛ զիս յանշէջ հրոյն եւ յաննեռելի տանջանաց, յիշելով միայն զաստուածային

18. ԱՂՈԹՔ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ

Յրի՛ր, Տե՛ր, քո սուրբ խաչի զորությամբ ինձ չրջապատած չար դևերի ընդդիմամարտությունը, կործանի՛ր նրանց: Ողորմի՛ր ինձ՝ մեղապարտիս, քո ահեղ դատաստանի օրը և ինձ մի՛ տուր նրանց ժառանգություն, քանի որ կարող ես, բարերար, և ողորմիր հավիտենական զորությամբ, ասելով՝ «Հոգուդ խորտակումից ողջ մնա», կամ՝ «Թողնված լինեն քո մեղքերը» (Մատթ., Թ 2), կամ՝ «Գնա՛ խաղաղությամբ» (Մարկ., Ե 34, Ղուկ., Է 50), սրբելով մեղքերից, չէ՞ որ դա է իսկական ողորմելը: Իսկ եթե ինձ դատես՝ ըստ իմ մեղքերի, անհնար է ինձ հարությունը մեռելներից. բազում են իմ անօրինությունները, բայց և անբավ է մարդասիրությունը քո, որ փրկությունն ես բոլորի: Հիշի՛ր ինձ, գթած, այցելիր, ողորմած, քանի որ քո անարատ ձեռքի ստեղծածն եմ: Իմ մեղքերով մի՛ անի և ըստ իմ անօրինության՝ մի՛ հատուցիր ինձ: Իմ բազում հանցանքների համար, որ գործեցի իմ ավաղելի կյանքում, ինձ մի՛ տուր գնալ հավիտենական կորստյան, այլ փրկիր ինձ անշեջ հրից և աննեռելի տանջանքից, հիշելով միայն աստ-

խոստմունս քո, որ «Ո՛չ եկիր կորուսանել զմարդկան հոգիս, այլ՝ կացուցանել» *[Ղուկ. Թ. 56]:* Ցո՛յց ինձ զանճառ մարդասիրութիւնդ եւ արա՛ զիս հաղորդ ընդ աւազակին այնմիկ, որ միով բանիւ ժառանգորդ եղեւ դրախտին: Ծնորհեա՛ ինձ զհայցուածս իմ, զի դու միայն ես տուող կենաց իմոց: Աղաչեմ զքեզ, Տէ՛ր, ազատեա՛ զիս ի դառն ծառայութենէ սատանայի եւ մո՛յծ զիս ի յարկս փառաց քոց ընդ սիրելիս անուան քում սրբոյ, եւ մի՛ առներ համար անաւրէնութեան իմոյ: Գոչեմ առ քեզ ըստ Դաւթայ. «Թէ զանաւրէնութիւնս իմ քննես, Տէր, իսկ ո՞ կարէ կալ առաջի քո» *[հմմտ. Սաղմ. ՃԻԹ. 3]:* Այլ դու, մարդասէ՛ր, նայեա՛ յիս քաղցրութեամբ քո եւ մի՛ յիշեր զբազմութիւն զազրելի մեղաց իմոց: Գիտեմ, զի չեմ արժանի ողորմութեան քո, բայց դու եւ անարժանից սովոր ես ողորմել, որ եկիր ի խնդիր կորուսեալ պատկերիս, եւ նորոգեալ փրկեցեր եւ փառաւորեցեր: Գթասցիս վշտագին անձին իմոյ, զի քեզ տուեալ է իշխանութիւն կեցուցանել, քանզի մեծապէս փոյթ է քեզ փրկութիւն մեր: Գթա՛ եւ յիս, որ առաւել ունիմ քան զամենեսեան պէտս մարդասիրութեան սիրոյ քո եւ զանճառելի քաղցրութեան սիրոյ քո, եւ մի՛ պահանջեր համարս բիւրուց մեղաց իմոց, զոր ինչ յանցեայ ի մոռացմանէ պատուի-

վածային քո խոստումը, թե՝«Չեկար կորցնելու մարդկանց հոգիները, այլ՝ ապրեցնելու» (Ղուկ., Թ 56): Ինձ ցույց տուր անճառ մարդասիրությունդ և ինձ հաղորդակից արա այն ավազակին, որ մի խոսքով դրախտի ժառանգորդ եղավ: Ինձ շնորհիր իմ հայցածը, քանի որ միայն դու ես իմ կյանքի տվողը: Աղաչում եմ, քեզ, Տե՛ր, ազատիր ինձ սատանայի դառն ծառայությունից և մտցրու քո փառքի հարկերը՝ քո սուրբ անվան սիրելիների հետ, և մի՛ հաշվիր իմ անօրինությունը: Քեզ եմ գոչում՝ ըստ Դավթի. «Թե քննես իմ անօրինությունները, Տե՛ր, իսկ ո՞վ կարող է կանգնել քո առջև» (հմմտ. Սաղմ., ՃԻԹ 3): Բայց դու, մարդասեր, քո քաղցրությամբ նայիր ինձ և մի՛ հիշիր իմ զազրելի մեղքերի բազմությունը: Գիտեմ, որ արժանի չեմ քո ողորմությանը, բայց դու նաև անարժաններին սովոր ես ողորմել, որ եկար՝ կորած պատկերս փնտրելու, և նորոգելով փրկեցիր ու փառավորեցիր: Գթա իմ վշտահար անձին, քանի որ քեզ է տրված ապրեցնելու կարողություն, և քանի որ մեր փրկությունը քո մեծ ցանկությունն է: Գթա՛ և ինձ, որ բոլորից շատ ունեմ քո մարդասիրության սիրո և քո անճառելի քաղցրության սիրո կարիքը, և մի՛ պահանջիր իմ բյուր մեղքերի հաշի-

ռանաց քոց: Մի՛ տայցես զիս ձգել ի խաւարն արտաքին, ուր լալ աչաց է եւ կրճել ատամանց, այլ ընկա՛լ զիս ի փարախ հաւտի քո, եւ արժանի արա՛ զիս զողորմութիւն գտանել ի քէն, որ ոչ դարձուցանես զերեսս քո՝ որոց խնդրեն ի քէն, մի՛ եւ յինէն դարձուցաներ, աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ: Բարեխաւսութեամբ անարատ մաւր քո եւ Կուսի, եւ աղաչանաւք ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց, որք ի սկզբանէ հաճոյ եղեն քեզ աստուածութեան քո, ընկա՛լ զաղաչանս մեղուցեալ քո ծառայիս եւ մի՛ անտես առներ զիս ի բարերար խնամոց քոց, զի դու միայն ես մարդասէր, բազմագութ եւ ողորմած, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս: Զի թէպէտ եւ ինձ անհամարձակելի է խնդիրս, բայց քեզ առաւել կամելի է, զի ողորմած ես. արժանի արա՛ զիս ընդ սուրբս քո մտանել յերկնային խորանսն լուսոյ եւ ժառանգել զպատրաստեալ ի սկզբանէ աշխարհի սրբոց քոց զարքայութիւնդ, եւ ընդ նոսին միշտ գոհանալով փառաւորել զքեզ ընդ Հաւր ամենակալի եւ ընդ Սուրբ Հոգւոյդ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

վը, որ հանցանք գործեցի՝ քո պատվիրանները մոռանալով: Թույլ չտաս ինձ գցել արտաքին խավարի մեջ, ուր աչքերի լալն է և ատամների կրճտելը, այլ ինձ ընդունիր քո հոտի փարախը և ինձ արժանի արա ողորմություն գտնելու քեզանից, որ քո երեսը չես դարձնում քեզ խնդրողներից, մի՛ դարձնի և ինձնից, աղաչում եմ քեզ, Տե՛ր իմ: Քո անարատ մոր և կույսի բարեխոսությամբ և աղաչանքով բոլոր քո սրբերի և երկնավորների, որոնք սկզբից ևեթ հաճո եղան քեզ, քո աստվածությանը. ընդունիր քո մեղուցյալ ծառայիս աղաչանքը և մի՛ անտեսիր ինձ քո բարերար խնամքից, բազմագութ և ողորմած, Տեր մեր Հիսուս Քրիստոս: Քանի որ թեև ինձ անհամարձակելի է խնդրանքս, բայց քեզ առավել ցանկալի է, որովհետև ողորմած ես, արժանացրու ինձ՝ քո սրբերի հետ մտնելու լույսի երկնային խորանները և ժառանգելու քո սրբերի համար աշխարհի սկզբից պատրաստած արքայությունդ, և նրանց հետ միշտ գոհանալով՝ փառավորելու քեզ ամենակալ Հոր և Սուրբ Հոգուդ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

19. ԱՂԱԻԹՔ Ի ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ ԵՒ ԱՌ ԱՄԵՆԱՅՆ ՍՈՒՐԲՍ

Երկնային դո՛ւռն եւ առագաստ անմահ արքային, Մա՛յր լուսոյ եւ Կոյս անարատ, որ մարմնով ծնար զԲանն Աստուած եւ երանեցար յամենայն ազգաց, որ ես պարծանք ազգի մարդկան եւ միշտ բարեխաւս առ Միածինն, անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ. քո սուրբ կաթամբդ, որով սնուցեր զանդրանիկ Որդին, բարեխաւսեա՛ առ նա, զի սրբեսցէ զիս ի մեղաց եւ ազատեսցէ յամենայն սխալանաց: Այլ եւ դուք, ո՜վ սուրբք եւ սիրեցեալք ի Տեառնէ, հրաւիրեալքդ ի սկզբանէ եւ ընտրեալքդ յորովայնէ, առաքեալք եւ մարգարէք, հայրապետք եւ վարդապետք, մարտիրոսք եւ վկայք, նահատակք եւ ճգնաւորք, կուսանք եւ միանձունք, եւ այլ ամենայն համաւրէն հաճոյացեալքդ Աստուծոյ յիւրաքանչիւր յազգաց, որք սիրեցիք զՏէրն բոլորից ի բոլոր սրտէ, եւ տկար մարմնով զանմարմնոցն ցուցէք զհանդէս քաջութեան. քարամբք քարկոծեալք, քերանաւք քերեալք, հրով փորձեալք, սրով խողխողեալք, ջրով խեղդեալք, պարանաւք կապեալք եւ կախեալք, փայտիւ խաչեալք, սովով հալածեալք, ծարաւով

19. ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻՆ ԵՎ ԲՈԼՈՐ ՍՐԲԵՐԻՆ

Երկնային դուռ և առագաստ անմահ արքայի, Լույսի մայր և անարատ Կույս, որ մարմնով ծնեցիր Բան Աստծուն, և երանեցին քեզ բոլոր ազգերը, որ պարծանքն ես մարդկային ցեղի և միշտ բարեխոս Միածնի առջև, ընկնում եմ քո առաջ և աղաչում քեզ. քո սուրբ կաթով, որով սնեցիր անդրանիկ Որդուն, բարեխոսիր նրա մոտ, որ ինձ սրբի մեղքերից և ազատի բոլոր սխալներից: Այլև դուք, ով սրբեր և Տիրոջից սիրվածներ, սկզբնապես հրավիրվածներ և որովայնից ընտրվածներ, առաքյալներ և մարգարեներ, հայրապետներ և վարդապետներ, մարտիրոսներ և վկաներ, նահատակներ և ճգնավորներ, կույսեր և միանձներ, և բոլոր մյուս հաճոյացածներ Աստծուն՝ յուրաքանչյուր ազգից, որ ամբողջ սրտով սիրեցիք բոլորի Տիրոջը և տկար մարմնով անմարմինների քաջության հանդես ցուցադրեցիք. քարով քարկոծվեցիք, հրով փորձվեցիք, սրով խողխողվեցիք, ջրով խեղդվեցիք, պարաններով կապվեցիք ու կախվեցիք, փայտով խաչվեցիք, սովով հալածվեցիք, ծարավով մաշ-

մաշեալք, եղեգամբ ձաղկեալք, գազանաւք ահաբեկեալք, ջայլոտեաւք ջարդեալք, տատասկաւք տանջեալք, հեղուսիւք բեւեռեալք, ի բարձանց գահավիժեալք, խորխորատաւք սուզեալք, նետիւք հարեալք, ձեռամբ կոփեալք, ի սիրելեաց մատնեալք, ի ծանաւթից ծանակեալք, ի բարեկամաց ատեցեալք, ի սննդեան տեղեաց հալածեալք, նաեւ այլ ամենայն չարչարանաւք չարչարեալք եւ խաչակցեալք ընդ Քրիստոսի, որք եւ ընդ նմին թագաւորելոց էք յանվախճան յաւիտեանին: Եւ արդ, ես անպտուղս ի բարեաց եւ ունայնս յարդարութենէ, եւ բազում մեղաւք պաշարեալս, անկանիմ առաջի տեւողական ոսկերաց ձերոց, որ էք ծաղկեալք ընդ ամենայն տեղիս, յորոց ոչ կորիցէ եւ ո՛չ մազ մի, աղաչեմ զձեզ՝ սիրովն Քրիստոսի, զոր ունիք առ նա, բարեխաւս լերո՛ւք առ նա վասն բազմամեղ անձին իմոյ, զի մաքրեսցէ զիս ի յաղտոյ մեղաց իմոց եւ ազատեսցէ զիս ի պարտուց յանցանաց, եւ փրկեսցէ զանաւրինեալս յանեզրական տանջանացն եւ ի վշտագին դառնութենէ գեհենին, եւ արասցէ զիս մասնակից եւ հաղորդս հանգստեանդ ձերում. զի եւ ես ընդ ձեզ հանգուցեալ փառաւորեցից զամենասուրբ Երրորդութիւնն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

վեցիք, եղեգնով ձաղկվեցիք, գազաններով ահաբեկվեցիք, քքաջիլով ջարդվեցիք, տատասկով տանջվեցիք, գամերով բևեռվեցիք, բարձունքներից գահավիժեցիք, խորխորատներում սուզվեցիք, նետով խփվեցիք, ձեռքով կոփվեցիք, սիրելիներից մատնվեցիք, ծանոթներից ծանակվեցիք, բարեկամներից ատվեցիք, սնունդի տեղերից հալածվեցիք, նաև այլ ամեն չարչարանքով տանջվեցիք և խաչակցեցիք Քրիստոսին, որ և նրա հետ թագավորելու եք անվախճան հավերժին: Եվ այժմ, ես՝ անպտուղս բարիքներից և ունայնս արդարությունից, բազում մեղքերով պաշարված, ընկնում եմ ձեր անփուտ ոսկորների առաջ, որ ծաղկել եք ամեն տեղ, որոնցից չի կորչի և ոչ մի մազ, աղաչում եմ ձեզ՝ Քրիստոսի սիրով, որ ունեք նրա նկատմամբ, նրա մոտ բարեխոս եղեք իմ բազմամեղ անձի համար, որ ինձ մաքրի իմ մեղքի աղտից և ազատի ինձ հանցանքի պարտքերից և փրկի անօրինացածիս գեհենի անեզրական տանջանքից և վշտագին դառնությունից և ինձ մասնակից ու հաղորդ դարձնի ձեր հանգստին, որ ես էս, ձեզ հետ մնալով փառավորեմ ամենասուրբ Երրորդությունը այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

20. ԱՂԱՒԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ՎԱՍՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ

Առաջնորդ կենաց եւ ճանապարհ ճշմարտութեան, Տէ՛ր մեր Յիսուս Քրիստոս, որ առաջնորդեցեր Յովսեփայ յԵգիպտոս, եւ Իսրայելացւոցն ընդ ծովն Կարմիր, եւ Մովսիսի ի լեառն Սինէական, եւ ժողովրդեանն յերկիրն պարգեւաց, եւ Կղէովպասեանցն ճանապարհակից եղեր յԵմմաուս, աղաչեմ զքեզ, Տէ՛ր, առաջնորդեա՛ մեզ եւ եղբարց մերոց՝ գնալ խաղաղութեամբ զառաջիկայ ընթացս, փրկեա՛ յերեւելի եւ յաներեւոյթ թշնամւոյն եւ բարի առաջնորդեա՛ ի դէմ եղեալ տեղին, զի դու ես ճանապարհ եւ ճշմարտութիւն եւ կեանք, եւ քեզ վայել է փառք եւ երկրպագութիւն, իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

20. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ՝ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԱՄԱՐ

Առաջնորդ կյանքի և ճանապարհ ճշմարտության, մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ Հովսեփին առաջնորդեցիր Եգիպտոս, և իսրայելացիներին Կարմիր ծովն անցկացրիր, և Մովսեսին՝ Սինա լեռը, և ժողովրդին՝ պարգևների երկիրը, կղեովպաններին ուղեկից եղար դեպի Եմավուս, աղաչում եմ քեզ, Տե՛ր, առաջնորդիր մեզ և մեր եղբայրներին՝ գնալու խաղաղությամբ առաջիկա ճանապարհը, փրկի՛ր երևելի և աներևույթ թշնամուց և բարով առաջնորդիր այնտեղ, ուր դիմում ենք, քանի որ դու ես ճանապարհ և ճշմարտություն և կյանք, և քեզ վայել է փառք և երկրպագություն, իշխանություն և պատիվ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

21. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Լոյս ի լուսոյ, լոյս աշխարհի, Քրիստոս Աստուած, որ լուսով ողորմութեամբ քո լուսաւորեցեր զարարածս ամենայն, եւ ի հաւատացեալոց քոց հալածեաս զխաւար մեղաց եւ զանգիտութեան, եւ ի խնդրողաց զողորմութիւն քո ոչ անտես առնես, բարերա՛ր, որ զաւազակն միով բանիւ սրբեցեր ի մեղաց եւ զսրովբէափակ դուռն դրախտին բացեր նմա, եւ ընդ քեզ մտանել ի յաւիտենից հանգիստն խոստացար նմա. եւ արդ, իմ առեալ զաղաւթս աղաչանաց նորա, կարդամ առ քեզ. յիշեա՛ եւ զիս, Տէ՛ր, յորժամ գաս արքայութեամբդ քով, եւ բա՛ց ինձ զդուռն ողորմութեան քո՝ մտանել ի հանգիստն յաւիտենից եւ ընդ ամենայն սուրբս քո փառաւորել զամենազաւր տէրութիւնդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

21. ԱՂՈԹՔ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ

Լուս՝ Լուսոյից, աշխարհի Լուս, Քրիստոս Աստված, որ քո ողորմության լուսով լուսավորեցիր բոլոր արարածներին, և քո հավատացյալներից հալածում ես մեղքի և անգիտության խավարը և քո խնդրողներին չես անտեսում քո ողորմությամբ, բարերա՛ր, որ ավազակին մի խոսքով սրբեցիր մեղքերից և նրա համար բացիր դրախտի սրովբեափակ դուռը, և նրան խոստացար քեզ հետ մտնել հավիտենական հանգիստը: Արդ, ես նրա աղաչանքի աղոթքով դիմում եմ քեզ. հիշի՛ր և ինձ, Տեր, երբ գաս քո արքայությամբ, և բաց ինձ համար քո ողորմության դուռը՝ մտնելու հավիտենական հանգիստը, և քո բոլոր սրբերի հետ փառավորելու ամենազոր տերությունդ հավիտյանս հավիտենից. ամեն:

22. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՏԷՐ ԱՍՏՈՒԱԾ

Տէ՛ր, Տէ՛ր, Հա՛յր եւ Աստուած կենաց իմոց, անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, հայեա՛ ի տառապանս ծառայիս քո եւ խնայեա՛ ի մեղաւք մոլորեալ անձն իմ: Բժշկեա՛ զբեկեալս եւ կանգնեա՛ զգլորեալս, դի՛ր սպեղանի խոցեալ եւ թարախեալ հոգւոյս, եւ պատեա՛ զվէրս վիրաւորելոյս: Վերականգնեա՛, քանզի կորեայ եւ կործանեցայ բազում անաւրէնութեամբս, եւ չարիք իմ բարձրացան քան զգլուխ իմ. տո

մեղաց պատեցան զինեւ եաթնապատիկ, եւ սղալանք իմ պաշարեցին զիս, եւ ո՛չ գոյ թիւ անզգամութեան իմոյ: Քեզ մեղայ, փրկութի՛ւնդ յաւիտենից, ո՛չ ունիմ վստահութիւն կոչել զանուն ահաւորիդ ի վերայ վսերիս. ամաւթ երեսաց իմոց ծածկեաց զիս, եւ հարան յիս փուշք մեղաց իմոց: Եւ արդ, Տէ՛ր իմ Տէր, առ ո՞ ապաւինեցայց եւ կամ զո՞ արարից ինձ յոյս եւ ապաւէն փրկութեան իմոյ: Բայց թէպէտեւ բազում անգամ բարկացուցի զԲարձրեալդ, սակայն առ քեզ կարդացից. մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, Տէ՛ր իմ, եւ մի՛ հատուցաներ ըստ գործոց իմոց Աստուած իմ:

22. ԱՂՈԹՔ ՏԵՐ ԱՍՏԾՈՒՆ

Տե՛ր, Տե՛ր, Հայր և Աստված իմ կյանքի, ընկնում եմ քո առջև ու աղաչում եմ քեզ, նայի՛ր իմ՝ քո ծառայի տառապանքին և խնայիր մեղքով մոլորվածիս: Բժշկիր զարկվածիս և կանգնեցրու գլորվածիս, սպեղանի դիր խոցված ու թարախակալ հոգուս, և կապիր վիրավորվածիս վերքերը: Վերականգնի՛ր, քանզի կորա ու կործանվեցի բազում անօրինություններովս, և չարիքներս բարձրացան իմ գլխից վեր. մեղքի կապանքները փաթաթվեցին ինձ յոթնապատիկ, և իմ սխալությունները պաշարեցին ինձ, և թիվ չկա իմ անզգամությանը: Մեղա քեզ, փրկությունդ հավիտենից, վստահություն չունեմ ահավորիդ անունը կանչելու թշվառիս վրա. իմ երեսի ամոթն ինձ ծածկեց, և իմ մեղքերի փշերը խփեցին ինձ: Եվ այժմ, Տե՛ր իմ, Տե՛ր, ո՞ւմ ապավինեմ կամ ո՞ւմ դարձնեմ իմ փրկության հույս ու ապավեն: Բայց թեկուզև բազում անգամ բարկացրի Բարձրյալիդ, սակայն քեզ կդիմեմ. մի՛ մտիր դատաստան քո ծառայիս հետ, Տե՛ր իմ, և մի՛ հատուցիր՝ ըստ իմ գործերի, Աստված իմ:

Մի՛ սրտմտութեամբ եւ սպառնալեաւք սաստեր ինձ, Տէ՛ր իմ, եւ մի՛ բարկութեամբ ահաբեկեսցես զեղկելիս, Աստուա՛ծ իմ:

Մի՛ մատներ զմեղուցեալս ի մորմոքումն յաւիտենից կայծականցն, Տէ՛ր իմ, եւ մի՛ յուղարկեր զողորմելիս յանողորմ տանջանսն, Աստուա՛ծ իմ:

Մի՛ տար զտարագրեալս ի տագնապ տարտարոսին, Տէ՛ր իմ, եւ մի՛ տիրեսցեն ի վերայ իմ վհատելոյս վիշտք անսպառ, Աստուա՛ծ իմ:

Մի՛ բարձրասցի ի վերայ իմ բոցն հրաբորբոք, Տէ՛ր իմ, եւ մի՛ ածեր ի վերայ իմ բազմամեղիս զհնոցն մթագին, Աստուա՛ծ իմ:

Մի՛ կաքաւեսցեն ի վերայ տառապելոյս հոյլք անվախճան որդանց, Տէ՛ր իմ, եւ մի՛ ածեր ի վերայ բազմամեղիս զազրագործ՝ զչար ժանեաց զուտելիս նոցա, Աստուա՛ծ իմ:

Մի՛ ծածկեսցէ զծանակեալ ծառայս ծովն հրեղէն, Տէ՛ր իմ, եւ մի՛ վազեսցէ ի վերայ վրդովելոյս վտակ հրախառն յորձանաց, Աստուած իմ:

Մի՛ առաքեր զիս ի խաւարն արտաքին, Տէ՛ր իմ, եւ մի՛ անկայց աշխարելիս ի գուբն ապականութեան, Աստուա՛ծ իմ:

Մի՛ որոշեսցես զիս յերամէ երանելեացն, Տէ՛ր իմ, եւ մի՛ զրկեսցես զյանցաւորս ի հաղորդութենէ ընտրելոցն, Աստուած իմ:

Զայրույթով ու սպառնալիքներով մի՛ սաստիր ինձ, Տե՛ր իմ, և մի՛ ահաբեկիր բարկությամբ եղկելիս, Աստված իմ:

Մեղապարտիս մի՛ մատնիր հավիտենական կայծակների մորմոքման, Տե՛ր իմ, և ողորմելիս մի՛ ուղարկիր անողորմ տանջանքների, Աստվա՛ծ իմ:

Տարագրվածիս մի՛ տար տարտարոսի տագնապի, Տե՛ր իմ, և վհատվածիս չտիրանան անսպառ վշտերը, Աստված իմ:

Ինձ վրա չբարձրանա հրաբորբոք բոցը, Տե՛ր իմ, և բազմամեղիս վրա մի գցիր մթագին հնոցը, Աստված իմ:

Տառապյալիս վրա չպարեն անվախճան որդերի խմբերը, Տե՛ր իմ, և զազրագործ բազմամեղիս մի՛ դարձրու նրանց չար ժանիքների կեր, Աստված իմ:

Ծանակված ծառայիս չծածկի հրեղեն ծովը, Տե՛ր իմ, և վրդովվածիս վրա չվազի հրախառն հորձանքների վտակը, Աստված իմ:

Ինձ մի՛ ուղարկիր արտաքին խավարը, Տե՛ր իմ, և աշխարելիս չընկնեմ ապականության փոսը, Աստված իմ:

Ինձ մի՛ անջատիր երանելիների երամից, Տե՛ր իմ, և հանցավորիս չզրկես ընտրյալներին հաղորդվելուց, Աստված իմ:

Մի՛ զահագին զձայնն ձայնեսցես, եթէ. «Ծառայ չար եւ վատ», Տէ՛ր իմ. եւ մի՛ անտես առներ զտարակուսեալս ի յաւիտենից աւրհնութեանցն, Աստուա՛ծ իմ, այլ ողորմութեամբ քով յաւիտենից ողորմեա՛ ինձ, եւ անհաս մարդասիրութեամբ քով գթա՛ յիս:

Աղաչեմ զքեզ, Տէ՛ր, սրբարար զաւրութեամբ քով սրբեա՛ զիս՝ զաղտեղեալս մեղաւք, եւ ազատարար իշխանութեամբ քով ազատեա՛ զիս ի դառն վշտաց գեհենոյն: Տո՛ւր ինձ տեղի ի լուսափայլ առագաստին եւ դասեա՛ զտարակուսեալս ի դասս իմաստուն կուսանացն: Տո՛ւր, Տէ՛ր, աղաչեմ զքեզ, զխոստացեալ բարիսն ընդ ամենայն ընտրեալսն, զի ընդ նոսին փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւնդ՝ զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգիդ, այժմ, միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Ահագին ձայնով չձայնես՝ «Ծառա չար և վատ», Տե՛ր իմ, և տարակուսածիս մի՛ անտեսիր հավիտենական օրհնություններից, Աստված իմ, այլ քո ողորմությամբ ողորմի՛ր ինձ և քո անհաս մարդասիրությամբ գթա՛ ինձ:

Աղաչում եմ քեզ, Տե՛ր, քո սրբարար զորությամբ սրբիր ինձ՝ մեղքով աղտեղվածիս և քո ազատարար իշխանությամբ ազատի՛ր ինձ գեհենի դառն վշտերից: Ինձ տեղ տուր լուսափայլ առագաստում և տարակուսածիս դասիր իմաստուն կույսերի շարքը: Տե՛ր, տո՛ւր, աղաչում եմ քեզ, խոստացած բարիքը՝ բոլոր ընտրյալների հետ, որ նրանց հետ փառավորեմ ամենասուրբ Երրորդությունդ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ, միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

23. ԱՂԱԻԹՔ ԱՌ ՈՐԴԻՆ ԱՍՏՈՒԱԾ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ վասն մերոյ փրկութեան մարդկան եղեր որդի մարդոյ, Որդի՛ Աստուծոյ, որ վասն անհաս մարդասիրութեան քո խոնարհեցար յանճառ փառաց քոց, եւ ելեալ ի խնդիր կորուսեալ պատկերիս քո տանն Ադամայ եւ ընդ տնաւրինական կրից քոց արարեր փրկութիւն ի մէջ երկրի, եւ ազատեցեր ի ծառայութենէ մահու եւ մեղաց, եւ հրաւիրեցեր զհողեղէնքս յարդարութիւն եւ ի փառս քո, եւ արարեր հաղորդ եւ ժառանգակից զմահկանացու բնութիւնս երկնային անմահական զաւրացն. եւ արդ, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, որ զայս ամենայն բարութիւնս մարդասիրապէս շնորհեալ յաւրինեցեր, մի՛ միայն ես եղէց զրկեալ ի ձրի պարգեւացդ վասն ծովացեալ մեղաց իմոց, մի՛ միայն ես ունայն գտայց յայդպիսի փրկութենէդ՝ վասն բանից յանցանաց իմոց, այլ որպէս ելեր ի խնդիր կորուսեալ ոչխարին, եւ գտեալ ուսաւք բարձեր, լե՛ր եւ ինձ խնդրող կորուսելոյս. եւ զոր աւրինակ ողորմեցար քանանուհւոյն եւ զհայցուածն կատարեցեր, կատարեա՛ եւ զիմ հայ-

23. ԱՂՈԹՔ ՈՐԴԻ ԱՍՏԾՈՒՆ

Աստծու որդի, ճշմարիտ Աստված, որ մեր՝ մարդկանց փրկության համար մարդու որդի եղար. Որդի Աստծու, որ քո անհաս մարդասիրության համար խոնարհվեցիր քո անճառ փառքից, և որոնելու ելար Ադամի այս տան կորցրած պատկերիդ և քո տնօրինական տանջանքների հետ երկրում փրկություն իրագործեցիր, և ազատեցիր մահի և մեղքի ծառայությունից, և հողեղեններիս հրավիրեցիր արդարության և քո փառքին, և մահկանացու այս բնությունը հաղորդ ու ժառանգակից դարձրիր երկնային անմահական զորքերին: Եվ այժմ, Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, այս բոլոր բարությունները, մարդասիրապես շնորհելով, ստեղծեցիր, իմ ծովացած մեղքերի պատճառով միայն ե՛ս չլինեմ զրկված անհատույց պարգևներիցդ, և իմ հանցավոր խոսքերի համար միայն ես զուրկ չմնամ այդպիսի փրկությունից, այլ ինչպես ելար կորսված ոչխարի որոնման և գտնելով՝ առար ուսիդ, ինձ՝ կորսվածիս փնտրող եղիր, և ինչպես ողորմեցիր քանանուհուն և խնդրանքը կա-

ցուածս, որ վասն մեղաց իմոց պաղատիմ. եւ որպէս սրբեցեր բանիւ բերանոյ քո զբորոտն, սրբեա՛ եւ զիս յամենայն սխալանաց իմոց. եւ զոր աւրինակ զանդամալոյծն առողջացուցեր, առողջացո՛ եւ զիս՝ զչարեաւք լցեալս. եւ որպէս զհիւանդսն բժշկեցեր՝ բժշկեա՛ եւ զիս՝ զցանկութեամբ հիւանդացեալս. եւ զոր աւրինակ զդեւսն ի մարդկանէ հալածեցեր՝ հալածեա՛ եւ յինէն զթշնամին կենաց իմոց. եւ որպէս զկոյրսն լուսաւորեցեր՝ լուսաւորեա՛ եւ զիս զխաւարեալս մեղաւք. եւ զոր աւրինակ զմեռեալսն յարուցեր՝ յարո՛ եւ զիս՝ զմահացեալս յանցանաւք. եւ որպէս ալեաց ծովուն սաստեցեր՝ սաստեալ հանդարտեա՛ եւ զալիս մեղաց իմոց. եւ զոր աւրինակ զսովեալսն յանապատին կերակրեցեր՝ կերակրեա՛ եւ զիս՝ զճշմարիտ սովեալս յառատ ողորմութենէդ քումմէ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, որ զամենայն մարդ կամիս կեալ եւ գալ ի գիտութիւն ճշմարտութեան, ուստի եւ զանձն քո ետուր փրկանս փոխանակ բազմաց, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, որ վասն իջանելոյ քո ի հայրական ծոցոյն անճառ

տարեցիր, կատարի՛ր և իմ խնդրանքը, որ իմ մեղքերի համար պաղատում եմ: Եվ ինչպես քո բերանի խոսքով սրբեցիր բորոտին, սրբիր և ինձ իմ բոլոր սխալներից: Եվ ինչպես անդամալույծին առողջացրիր, առողջացրո՛ւ և ինձ՝ չարիքով լցվածիս: Եվ ինչպես հիվանդներին բուժեցիր, բուժի՛ր և ինձ՝ ցանկությամբ հիվանդացածիս: Եվ ինչպես դևերին մարդկանցից հալածեցիր, հալածի՛ր և ինձնից իմ կյանքի թշնամուն: Եւ ինչպես կույրերին լուսավորեցիր, լուսավորի՛ր և ինձ՝ մեղքով խավարածիս: Եվ ինչպես մեռելներին հարություն տվիր, հարություն տուր և ինձ՝ հանցանքով մահացածիս: Եվ ինչպես ծովի ալիքները սանձեցիր՝ սաստելով հանդարտեցրու և իմ մեղքի ալիքները: Եվ ինչպես անապատում սովյալներին կերակրեցիր՝ կերակրի՛ր և ինձ՝ ճշմարիտ սովյալիս, քո առատ ողորմությունից:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, որ ուզում ես՝ ամեն մարդ լինի և դա ճշմարտության գիտության, ուստի քո անձը փրկանք տվիր բյուրերի փոխարեն. հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, որ [մարդկանց համար] իջար քո հայրական ծո-

ծննդեամբ ի Սրբուհւոյն, խանձարրաւք պատելոյն, ի մսուր դնելոյն, կաթամբ կերակրելոյն, բազկաւք բառնալոյն, գրկաւք գգուելոյն, շրթամբք հողեղէն համբուրելոյն, եւ ի տաճարն ընծայելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, վասն ի Յորդանան մտանելոյն, ի Յովհաննէ մկրտելոյն, իջանելոյ Սուրբ Հոգւոյն, ի Հաւրէ վկայելոյն եւ յանապատի փորձելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, վասն աստուածահրաշ սքանչելագործելոյն, զմեղսն թողլոյն, զնեղեալսն բժշկելոյն, զմեռեալսն յարուցանելոյն, զաստուածութիւնդ յայտնելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, վասն ի վերնատանն բազմելոյն, զառաքեալսն լուանալոյն, զնոր ուխտ պատարագին հաստատելոյն, եւ ի Յուդայէ մատնելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, վասն խուժանին հրէից զքեզ ըմբռնելոյն, կապելոյն, ձորձապատելոյն, հարկանելոյն, հայհոյելոյն, կոփելոյն, ձաղելոյն, ծեծելոյն, թքանելոյն, այպն առնելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

ցից անճառ ծնունդով Սրբուհուց, խանձարուրով պատած մսուր դրվելուդ, կաթով կերակրվելուդ, բազուկներով բարձրացվելուդ, գրկով գգվելուդ, հողեղեն շրթունքներով համբուրվելուդ, և տաճարին ընծայվելուդ [համար], հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, Հորդանան մտնելուդ, Հովհաննեսից մկրտվելուդ, Սուրբ Հոգու իջնելուն, Հորից վկայվելուդ և անապատում փորձվելուդ համար, հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, աստվածահրաշ սքանչելագործելուդ, աստվածությունդ հայտնելուդ համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, Վերնատանը բազմելուդ, առաքյալներին լվանալուդ, պատարագի նոր ուխտը հաստատելուդ և Հուդայից մատնվելուդ համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, հրեաների խուժանից բռնվելուդ, կապվելուդ, լաթով պատվելուդ, շփվելուդ, հայհոյվելուդ, կռփահարվելուդ, ծեծվելուդ, թքով անպատվվելուդ, ծաղրվելուդ համար հիշի՛ր ինձ և ո-

Վասն ի յատենի քո կալոյն, ի դատաւորէն դատելոյն, ի Հերովդէէ հարցափորձելոյն, ի դպրացն դարովելոյն, ի քահանայիցն կշտամբելոյն, ի ժողովրդոցն պարսաւելոյն եւ ի զինուորացն վարելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Վասն կենսաբեր փայտին բառնալոյն, ի Գողգոթա կանգնելոյն, կամաւոր բարձրանալոյն, եւ հեղուսիւք բեւեռելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, վասն աստուածախառն մարմնոյդ մերկանալոյն, կարմիր քղամիդով զարդարելոյն, պատմուճանելոյն, հանդերձիցն բաժանելոյն, եւ փշովք պսակելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, վասն քրտնաջան ծարաւելոյն, լեղի եւ քացախ ճաշակելոյն, մեծաձայն առ Հայր կարդալոյն, զ«Էլի էլի» գոչելոյն եւ աստուածեղէն հոգւոյդ աւանդելոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, վասն ի խաչէ իջանելոյն, ի Յովսեփայ պաստառակալելոյն, ի գերեզման իջանելոյն, մատանեաւ կնքելոյն, զդժոխս աւերելոյն, ի մեռելոց յառնելոյն, զաշակերտսն աւրհնելոյն եւ փառաւք առ Հայր համ-

ղորմի՛ր ինձ:

Ատյանում լինելուդ, դատավորից դատվելուդ, Հերովդեսից հարցաքննվելուդ, դպիրներից նախատվելուդ, քահանաներից կշտամբվելուդ, ժողովրդից պարսավվելուդ և զինվորներից տարվելուդ համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Կենսաբեր փայտին բարձրացվելուդ, Գողգոթայում կանգնելուդ, կամավոր բարձրանալուդ և բևեռներով գամվելուդ համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, աստվածախառն մարմնիդ մերկանալուն, կարմիր քղամիդով զարդարվելուն, պատմուճանով ծածկվելուն, հանդերձներից բաժանվելուն, փշով պսակվելուն համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, քրտնաջան ծարավելուդ, լեղի և քացախ ճաշակելուդ, բարձրաձայն Հորը դիմելուդ, «Էլի, էլի» գոչելուդ և աստվածեղեն հոգիդ ավանդելուն համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, խաչից իջնելուդ, Հովսեփի ձեռքով պաստառակալվելուդ, գերեզման իջնելուդ, մատանիով

բառնալոյն, յիշեա՛ զիս եւ ողորմեա՛ ինձ:

Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, մի՛ ըստ գործոց իմոց հատուցաներ ինձ, մի՛ մերժեր զիս յողորմութենէ քումմէ եւ մի՛ անտես առներ զգործս ձեռաց քոց, եւ մի՛ զրկեր զիս յերանաւէտ խոստմանց քոց. մի՛ մոռանար զիս յողորմութենէ քումմէ, եւ մի՛ առաքեր զիս ի տանջանսն յաւիտենականս, այլ յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ, Տէ՛ր, եւ մի՛ տոչորեր զիս հրեղէն տապակաւքն, մի՛ գանեսցես զիս գեհենովն եւ մի՛ բերցես ի վերայ իմ զբոցն բորբոքեալ. յիշեա՛, յիշեա՛, յիշեա՛, յիշատակդ յաւիտենից, Տէ՛ր Յիսուս Քրիստոս, Աստուա՛ծ իմ, եւ նայեա՛ առ իս քաղցրութեամբ: Եւ վասն փառաց երեսաց Հաւր, եւ վասն փառակցութեան Հոգւոյդ Սրբոյ, եւ վասն սիրոյ եւ բարեխաւսութեան սրբոյ Աստուածածնին, եւ ամենայն սրբոց քոց երկնաւորաց եւ երկրաւորաց՝ ազատեա՛ զիս յաններելի տանջանացն եւ ի դառն վշտաց գեհենին, եւ արա՛ զիս արժանի երկնից արքայութեանդ. եւ քեզ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ փառք, իշխանութիւն եւ պատիւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

կնքվելուդ, դժոխքն ավերելուդ, մեռելներից հառնելուդ, աշակերտներին օրհնելուդ և փառքով Հոր մոտ համբառնալուդ համար հիշի՛ր ինձ և ողորմի՛ր ինձ:

Տե՛ր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, ինձ, ըստ իմ գործերի, մի՛ հատուցիր, ինձ մի՛ զրկիր քո ողորմությունից և մի՛ անտեսիր քո ձեռքի գործերը, և մի՛ զրկիր ինձ քո երանավետ խոստումներից, մի՛ մոռացիր քո ողորմությունը, ինձ մի՛ ուղարկիր հավիտենական տանջանքի, այլ հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմիր ինձ, Տե՛ր, մի՛ տոչորեցրու ինձ հրեղեն տապակի մեջ, ինձ մի՛ գանահարիր գեհենով և ինձ վրա մի՛ բեր բորբոքած բոցը: Հիշի՛ր, հիշի՛ր, հիշատակդ հավիտենից, Տեր Հիսուս Քրիստոս, Աստվա՛ծ իմ, և նայիր ինձ քաղցրությամբ: Եվ հանուն քո Հոր երեսի փառքի, և հանուն Սուրբ Հոգուդ փառակցության, և հանուն սուրբ Աստվածածնի և քո բոլոր երկնավոր ու երկրավոր սրբերի սիրո և բարեխոսության, ինձ ազատի՛ր աններելի տանջանքներից ու գեհենի դառն վշտերից և ինձ արժանի արա երկնքի արքայությանդ, իսկ քեզ Հոր և Սուրբ Հոգուդ հետ փառք, իշխանություն և պատիվ հավիտյանս հավիտենից. ամեն:

24. ՍՈՒՐԲ ՀԱՒՐՆ ԳԱՌՆԵՑՈՑ ԲԱՆ ԱՂԱՒԹԱԿԱՆՔ ՇԱՀԱՒԷՏ ՄԱՐԴԿԱՆ

Աստանաւր պիտոյ է մեզ ողբ հառաչանաց եւ արտասուք ջերմեռանդ, այլ դու, ո՛վ սիրելի, արթուն լե՛ր, զգուշ կա՛ց եւ զգաստ. մի՛ ասել զայն, որ չէ քո հոգոյդ բարի, եւ մի՛ լսեր զայն, որ չէ Աստուծոյ ընդունելի: Արդ, որ կամիցի ի կեանս յաւիտենից մտանել, ատեսցէ զկեանս աշխարհի, որ փափաքէ անանց փառացն, զանց արասցէ աստ զանցաւոր փառաւք:

Որ ցանկայ դրախտին փափկութեան, աստ մի՛ փափկասցի մարմնով:

Որ սիրէ զՏէր Յիսուս սրտիւ, աստ անքակ կացցէ ի նմա անարատ սրբութեամբ:

Որ փութայ մտանել ի յառագաստն լուսոյ, աստ բարձցէ զիւղն ողորմութեան:

Որ երկնչի յանվախճան որդանցն, աստ մի՛ խածատեսցէ ատամամբք զեղբայր իւր:

Որ զարհուրի ի բորբոքեալ բոցոյն, աստ զբոց նախանձու եւ ցանկութեան շիջուսցէ [յ]իւրմէ:

Որ սոսկայ յանշէջ հրոյն, աստ շիջուսցէ զհուր ցանկութեան պահաւք եւ աղաւթիւք:

Որ երկնչի ի լալոյ աչաց եւ ի կրճտելոյ ատա-

24. ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՈԹԱԿԱՆ ԽՈՍՔԸ՝ ՇԱՀԱՎԵՏ ՄԱՐԴԿԱՆՑ

Այստեղ մեզ պետք է հառաչանքի ողբ և ջերմեռանդ արտասուք, բայց դու, ո՛վ սիրելի, արթուն եղիր, զգույշ մնա և զգաստ, մի ասա այն, որ քո հոգու համար բարի չէ, և մի՛ լսիր այն, որ ընդունելի չէ Աստծուն: Արդ, ով ուզում է հավիտենական կյանք մտնել, պիտի ատի աշխարհի կյանք, ով բաղձա անանց փառք, այստեղ պիտի հրաժարվի անցավոր փառքից:

Ով ցանկանում է դրախտի փափկություն, այստեղ չփափկանա մարմնով:

Ով սրտանց սիրում է Տեր Հիսուսին, այստեղ անբաժան պիտի մնա նրանից անարատ սրբությամբ:

Ով շտապում է մտնել լույսի առագաստը, այստեղ պիտի վերցնի ողորմության յուղը:

Ով վախենում է անվախճան որդերից, այստեղ ատամներով չպիտի խածոտի իր եղբորը:

Ով զարհուրում է բորբոք կրակից, այստեղ իր միջից պիտի մարե նախանձի ու ցանկության բոցը:

Ով սոսկում է անշեջ հրից, այստեղ թող պահքով ու աղոթքով շիջեցնի ցանկության

մանց, աստ մի՛ ցամաքեցուսցէ զվտակս արտասուաց:

Որ սարսի [յ]աններելի տանջանացն, աստ լացցէ անդադար զտիւ եւ զգիշեր:

Որ կամիցի երթալ զերկայն ուղղին ճանապարհ, աստ պատրաստեսցէ զպաշարն լի եւ պատարուն:

Որ կամիցի անդատ եւ անդատապարտ մնալ ի դատաստանի, աստ մի՛ դատապարտեսցէ զեղբայրն իւր:

Որ պարտական է Տեառն իւրում բիւր քանքարոյ, աստ թողցէ զեղբաւր իւրում զհարիւրաւորն:

Որ կամիցի ըստ չարութեան այսոցն անցանել յերկինս, աստ խնդրեսցէ ի Տեառնէ իւրմէ զաւգնութիւն:

Որ ցանկայ պայծառ պսակացն, աստ համբերեսցէ վշտաց իբրեւ զՅոբ:

Որ կամիցի զերծանել ի բոցածաւալ ծովէն, աստ ծովացուսցէ զաչս իւր արտասուաւք:

Որ կամիցի անվնաս կոխել զգետն հրեղէն, աստ յոլովեսցէ յողորմութիւն:

Որ ցանկայ մտանել յանվրէպ վայելչութիւնն, աստ մի՛ հեղգասցի երթալ ի տեսութիւն հիւանդաց:

Որ յաւժարէ լսել զձայն երանաւէտ, թէ. «Ազնիւ

հուրը:

Ով վախենում է աչքերի լալուց և ատամների կրճտելուց, այստեղ չցամաքեցնի արտասուքի վտակները:

Ով սարսում է աններելի տանջանքներից, այստեղ լա անդադար, գիշեր ու ցերեկ:

Ով կամենում է երկար ուղիղ ճանապարհ գնալ, այստեղ պատրաստի պաշարը՝ լի և առատ:

Ով ուզում է անդատ ու անդատապարտ մնալ դատարանում, այստեղ չդատապարտի իր եղբորը:

Ով իր Տիրոջը բյուր քանքարի պարտք ունի, այստեղ բաշխի իր եղբորը հարյուրավորը:

Ով ուզում է դևերի չարությունից անցնել երկինք, այստեղ պիտի խնդրի իր Տիրոջից օգնություն:

Ով պայծառ պսակներ է ցանկանում, այստեղ վշտերին պիտի համբերի Հոբի նման:

Ով ուզենա ազատվել բոցածավալ ծովից, այստեղ իր աչքերը պիտի ծովացնի արտասուքով:

Ով կամենա անվնաս ոտնատակ տալ հրեղեն գետը, այստեղ բազմացնի ողորմությունը:

Ով ուզում է մտնել անվրեպ վայելչության մեջ, այստեղ չծուլանա տեսակցության գնալ հիվանդներին:

ծառայ, բարի եւ հաւատարիմ» *[Մատթ. ԻԵ. 21]*, աստ զականջս իւր մի՛ խցցէ ի խնդրողաց:

Որ կամիցի ըմպել յաղբերէն կենաց, աստ կարաւտ կացցէ ապակոյ միոյ գինոյ:

Որ ցանկայ կուսական պսակացն, աստ մաքուր եւ անբիծ կացցէ աղտեղի տեսութեանց:

Որ կամիցի մտանել յանտրտում հարսանիսն, աստ յաւրինեսցէ հանդերձս հարսնարանին:

Որ կամիցի քաղցր լսել զձայն փողոյն, աստ մի՛ անտես արասցէ զձայն կարաւտելոցն:

Որ ախորժէ ի յամպս աւդոց վերանալ ընդ առաջ Տեառն, աստ ընթանայ ընդ առաջ աղքատաց:

Որ զարհուրի ի բանէ Տեառն իւրոյ, յորժամ ասիցէ, եթէ. «Ծառայ չար եւ վատ» *[Մատթ. ԻԵ. 26]*, աստ ժրասցի ի հաճոյսն Աստուծոյ:

Որ ակն ունի գալստեան Տեառն իւրոյ ի հարսանեացն, աստ արթուն կացցէ յերեկոյին եւ ի մէջ գիշերին, եւ ի հաւախաւսին եւ առաւաւտին. այսինքն՝ ի մանկութեան եւ յերիտասարդութեան եւ ի ծերութեան. եւ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Կատարեցաւ բանս:

Արդ, ո՛վ պատուական եղբայրք, հաւատացեալք քրիստոնեայք, իմաստուն մտաւք իմացիք, զոր ասացի սակաւուք, եւ զոր ասելոց եմ կարճա-

Ով տրամադիր է երանավետ ձայնը լսելու՝ «Ազնիվ ծառա, բարի և հավատարիմ» (Մատթ., ԻԵ 21), այստեղ իր ականջները չխցի խնդրողների առջև:

Ով ուզի խմել կյանքի աղբյուրից, այստեղ կարոտ մնա մի գավաթ գինու:

Ով ցանկանում է կուսական պսակ, այստեղ մաքուր ու անբիծ մնա աղտեղություն տեսնելուց:

Ով ուզի մտնել անտրտում հարսանիք, այստեղ պատրաստի հարսնարանի հանդերձանք:

Ով ուզենա լսել փողի քաղցր ձայնը, այստեղ կարոտյալների ձայնը չանտեսի:

Ով ախորժում է Տիրոջն ընդառաջ վերանալ օդի ամպերով, այստեղ թող ընդառաջ գնա աղքատներին:

Ով զարհուրում է իր Տիրոջ խոսքից, երբ ասում է՝ «Ծառա չար և վատ» (Մատթ., ԻԵ 26), այստեղ արիանա ի հաճույս Տիրոջ:

Ով ակնկալում է իր Տիրոջ գալուստը հարսանքին՝ այստեղ արթուն է մնում երեկոյան և կեսգիշերին, և հավախոսին և առավոտյան, այսինքն՝ մանկությանը, երիտասարդությանը և ծերությանը, և նրան փառք հավիտյանս. ամեն:

Վերջացավ խոսքս:

Արդ, ո՛վ պատվական եղբայրներ, քրիս-

ռաւտ՝ պահեսջիք առ ձեզ խորին խորհրդովք եւ հոգայցէք:

Որ աստ ո՛չ հոգայ վասն մեղաց իւրոց, անդ հոգայ ի հուր գեհենոյն, որ ոչ աւգտի:

Որ աստ փափուկ կայ, անդ չարչարի անհուն հեծութեամբ:

Որ աստ անխտիր խճէ զորովայն անյագաբար, անդ հալի եւ մաշի անմխիթար:

Որ աստ գինով զմայլի, անդ կարաւտանայ կաթի մեղրոյ:

Որ աստ ծիծաղի անառակ եւ անյագ կարկաչելով, անդ լայ եւ ողբայ անդադար:

Որ աստ պանծայ քաջախաւսութեամբ, անդ պապանձի մեծաւ յամաւթով:

Որ աստ չառնէ ողորմութիւն, անդ չի հանդիպի յողորմութեանն:

Որ աստ սովոր է անիծանել, անդ լսէ զ«Երթայք անիծեալ՝ ի հուրն յաւիտենից» *[Մատթ. ԻԵ. 41]:*

Որ կրաւնիւքն կեղծաւորի, անդ հատանեն ընդ մէջն եւ մասնակից առնեն անհաւագիցն:

Որ աստ խոովարար է եւ ոխապահ, անդ զտարտարոսն ժառանգեսցէ:

Որ աստ մախայ ընդ այլոց բարի, անդ չառնու զվարձս վաստակոց:

տոնյա հավատացյալներ, մտքով իմաստուններ, իմացեք՝ ինչ ասացի քիչ և որ ասելու եմ համառոտ, կպահեք ձեր մեջ խորին խորհրդով և կհոգաք:

Ով այստեղ չի հոգում իր մեղքերի համար, այնտեղ՝ գեհենի հրում, կհոգա, որ չի օգնի:

Ով այստեղ փափուկ է, այնտեղ կչարչարվի անհուն հեծությամբ:

Ով այստեղ անհագաբար լցնում է որովայնը առանց խտրության, այնտեղ կհալչի ու կմաշվի անմխիթար:

Ով այստեղ զմայլվի գինով, այնտեղ կկարոտի մեղրի կաթիլի:

Ով այստեղ անառակ ու անհագ կարկաչով ծիծաղի, այնտեղ անդադար լաց կլինի ու կողբա:

Ով այստեղ հպարտանում է քաջախոսությամբ, այնտեղ կպապանձվի մեծ ամոթով:

Ով այստեղ ողորմություն չանի, այնտեղ չի հանդիպի ողորմության:

Ով այստեղ սովոր է անիծելու, այնտեղ կլսի՝ «Անիծված գնացեք հավիտենական հրի մեջ» *(Մատթ., ԻԵ 41):*

Ով կրոնով կեղծավորի, այնտեղ մեջտեղից կկտրեն և մասնակից կդարձնեն անհավատներին:

Ով այստեղ խռովարար ու ոխակալ է, այն-

Որ աստ դանդաղկոտ է յաղաւթսն, անդ որոշի ի սուրբ յաղաւթարանացն:

Որ աստ անխտիր է ի մեղս, անդ մտանէ ի դժոխս եւ ի տանջանս:

Որ աստ հարկանէ զմարդ կամ անասուն անողորմ, անդ հարկանի *ի* հրեղէն գաւազանաւ:

Որ աստ ոչ ապաշխարէ զչարիսն, անդ փակին դրունք ապաշխարութեան:

Որ փակէ զգութ իւր ի տնանկաց, անդ փակն [=փակի] նմայ դուռն յառագաստին:

Որ աստ զանձն իւր արդար կարծիցէ, անդ արգելի ի բանտ խաւարի:

Որ աստ զայլոց մեղք հոգայ բաՀբասելով, անդ դատի դառն տանջանաւք:

Որ աստ զմահու աւրն մոռանայ, անդ մեռանի զմահն յաւիտենից:

Որ աստ ցասկոտ է եւ բարկացող, անդ բարկութիւնն Աստուծոյ մնայ ի վերայ նորա:

Արդ, ո՞վ անդրանիկք եղբայրք իմ, մի՛ վստահանայք յանցաւոր կեանս աշխարհիս եւ մի՛ պատրիք երեւելեաւք խաբեբայ կենցաղոյս:

Մի՛ դադարիք աղաւթից եւ մի՛ դանդաղիք ի բարեգործութենէ:

Մի՛ խաւսեսցի բերան ձեր չար զումեքէ, եւ զմեռած մարդ ամենեւին մի՛ բաՀբասէք:

տեղ տարտարոսը կժառանգի:

Ով այստեղ չարակնի ուրիշների բարուն, այնտեղ չի ստանա աշխատանքի վարձը:

Ով այստեղ դանդաղկոտ է աղոթելիս, այնտեղ կզրկվի սուրբ աղոթարաններից:

Ով այստեղ մեղքի խորութիւն չի դնում, այնտեղ կմտնի դժոխք ու տանջանքի մեջ:

Ով այստեղ անողորմ ծեծի մարդու կամ անասունի, այնտեղ կծեծվի հրեղեն գավազանով:

Ով այստեղ չապաշխարե չարիքները, այնտեղ կփակվեն ապաշխարության դռները:

Ով դադարի գթալ աղքատներին, այնտեղ նրա առջև կփակվի դուռն առագաստի:

Ով այստեղ իրեն արդար կարծի, այնտեղ կփակվի խավարի բանտում:

Ով այստեղ այլոց մեղքը բամբասի, այնտեղ կդատվի դառն տանջանքով:

Ով այստեղ մահվան օրը մոռանա, այնտեղ կմեռնի հավերժի մահով:

Ով այստեղ ցասկոտ ու բարկացող է, այնտեղ Աստծու բարկությունն է սպասում իրեն:

Արդ, ո՛վ անդրանիկ իմ եղբայրներ, մի՛ վստահեք աշխարհի անցավոր կյանքին և մի՛ խաբվեք այս խաբուսիկ կյանքի երևույթով:

Մի՛ դադարեք աղոթելուց և մի՛ դանդաղեք բարեգործելիս:

Մի՛ երեւեցուցանէք ի ձեզ հոգի հպարտութեան եւ մի՛ անցանէ զձեզ ժամանակ աղաւթից ձերոց:

Ո՛վ սիրելի եղբայրք, պինտ կացէ՛ք ի կամս Աստուծոյ, հրաժարեցէ՛ք եւ ի բաց ամենայն չարեաց. աստ ջանացէ՛ք, աստ ճգնեցէ՛ք եւ հաշտեցուցէ՛ք զՏէրն ձեր, եւ փոխանակեցէ՛ք ընդդէմ չարին զբարիսն, ընդդէմ մեղացն՝ զարդարութիւն, ընդդէմ բարկանալոյն՝ զհեզութիւն, ընդդէմ ոխկալութեան՝ զանոխակալութիւն, ընդդէմ նախանձուն՝ զաննախանձութիւն, ընդդէմ չարութեանն՝ զանյիշաչարութիւն, ընդդէմ դառնութեանն՝ զքաղցրութիւնն. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Ձեր բերանը մեկի մասին չար բան չխոսի, իսկ մեռած մարդու ամենևին մի՛ բամբասեք:

Ձեր մեջ հպարտության ոգի մի ցուցադրեք և մի՛ կորցրեք ձեր աղոթքի ժամանակը:

Ո՛վ սիրելի եղբայրներ, պինդ մնացեք Աստծու կամքին, հրաժարվեցեք և հեռու [եղեք] ամեն չարիքից. այստեղ ջանացեք, այստեղ ճգնեցեք և հաշտեցրեք ձեր Տիրոջը և չարի փոխարեն բարի գործեցեք, մեղքի մեջ՝ արդարություն, բարկանալու դիմաց՝ հեզություն, ոխակալության դեմ՝ անոխակալություն, նախանձի հանդեպ՝ աննախանձություն, չարության դեմ՝ անհիշաչարություն, դառնության դեմ՝ քաղցրություն, և Քրիստոսին փառք հավիտյանս. ամեն:

25. ԱՂԱԻԹՔ ՍՈՒՐԲ ՀԱՒՐՆ ԵՒ ՎԱՆԱԿԱՆԻՆ ԳԱՌՆԵՑՈՑ ԱՍԱՑԵԱԼ

Արդ, ո՛վ անձն իմ տառապեալ, գ[ն]եալ ի սատանայէ, ընդէ՞ր ոչ սգաս զկորուստ քո, որո՞վ յուսով քաջալերեալ դատարկացեալ կաս ի գործոց բարեաց, քանզի առաջի քո կայ կորուստն անգիւտ, վասն զի բարկացուցեր զարարիչն ի սպառ եւ ո՛չ ծանեար զբարէգործն, այլ ընդդէմ դարձար նմա, որ քեզ կամեցաւ զփառսն իւր: Արդ, ո՞վ աղաչեսցէ զերեսս նորա ի հաշտութիւն քեզ, հե՛ղդ եւ թշուառականդ, ընդէ՞ր ոչ կասկածեցեր եւ ակն ածեր փառաց նորա, է՞ր աղագաւ կամեցար զկորուստ քո, ո՞ հաւանեցոյց զքեզ ապստամբել ի Տեառնէ քում[մ]է, ո՞ կողոպտեաց զփառս քո, ո՞վ աղքատացոյց զքեզ ի ճոխութենէտ: Արդ, ու՞մ հաւանեալ ոստար ի գրկացն հայրենեաց եւ տրտմեցուցեր զգութ նորա, որ սիրէր զքեզ, կամէր լինել զքեզ միշտ առ ինքեան, եւ դու զնա արհամարհեալ չոգար զհետ թշնամեաց նորա, չար փոխարէն ընդ որո՞ց առնէրն՝ հատուցեր:

Վա՜յ զքեզ, ո՛վ անձն իմ տառապեալ: Վասն այսորիկ շարժեալ է ողորմութիւնն նորա ի ցասումն, եւ փոխեալ է յատէլութիւն սիրոյ նորա ջեր-

25. ՍՈՒՐԲ ՀԱՅՐ ԵՎ ՎԱՆԱԿԱՆ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՍԱԾ ԱՂՈԹՔԸ

Արդ, ո՛վ իմ տառապած անձ, գնված սատանայից, ինչո՞ւ չես սգում քո կորուստը, ի՞նչ հույսով քաջալերված դատարկ ես բարի գործերից, չէ՞ որ քո առջև անգյուտ կորուստն է, որովհետև իսպառ բարկացրիր Արարչին և չճանաչեցիր բարեգործին, այլ ընդդիմացար նրան, որ քեզ կամեցավ իր փառքը: Այժմ նրան ո՞վ կաղաչի քեզ հետ հաշտվելու, ողորմելի և թշվառական, ինչո՞ւ չկասկածեցիր ու չակնածեցիր նրա փառքին, ինչի՞ համար քո կորուստը կամեցար, ո՞վ համոզեց քեզ ապստամբելու քո Տիրոջ դեմ, ո՞վ կողոպտեց քո փառքը, ո՞վ աղքատացրեց քեզ քո ճոխությունից: Արդ, ո՞ւմ հավատալով ոստնեցիր հայրենի գրկից և տրտմեցրիր գութը նրա, որ քեզ սիրում էր, ուզում էր, որ միշտ իր մոտ լինեիր, իսկ դու նրան արհամարհելով՝ նրա թշնամիների հետ գնացիր, ո՞ւմ արեց չարություն, որ հատուցեցիր:

Վա՜յ քեզ, ո՛վ տառապյալ իմ անձ: Այս պատճառով նրա ողորմությունը ցասման է փոխվել, և նրա սիրո ջերմությունը փոխվել է ատելության, նրա ձեռքը բարձրացել է քեզ

մութիւն, վերացեալ է ձեռն նորա հարկանել զքեզ, եւ սուր նորա սրեալ է ի խնդրել զքեզ: Եւ երանի թէ աստ միայն, զի փոքր է այժմու ժամանակիս հարուածս, եւ ո՛չ վճարի այնու բազմութիւն յանցանաց իմոց, աւա՜ղ, մեծի տուգանիս, զո՞ ընդ ո-րոյ փոխանակեցի: Արտասուք բնութեան չէ ինձ բաւական յողբումն կորստեան իմոյ. զրկեցայ ի սուրբ հարսանեացն վասն աղտեղի պատմուճանին, մերժեցայ յերանելի ցնծութենէն, վասն իւ-ղոյն պակասութեան զրկեցայ ի սուրբ առագաստէն, եւ դրունքն փակեցան, եւ զիա՞րդ իշխեցից բախել, գուցէ զանախորժս բարբառեցի փեսայն, թէպէտ եւ է ողորմած, գուցէ ի բաց առաքեսցէ զիս յինքենէ, կամ հրամայեսցէ կապել եւ հանել ի խաւարն արտաքին: Այո՜, ով հիքութեան, ո՛վ դ-ժուարալուր պատասխանոյն, հասանէ անկանել ինձ մշտնջենաւոր կենացն եւ ժառանգել զան-վաղճան պատուհասն տարտարոսին: Երանի թէ բնաւ իսկ չէի ծնեալ եւ ո՛չ տեսեալ զլոյս արեգա-կանն, երանի եւս էի թէ ծորեալ, եւս էի եւ ար-տաքս անգեալ իբրեւ զվիժանն, քան թէ ընդունել զձայն հրաժեշտիւ ի քաղցրալուր բերանոյ փրկչին: Արդ, ո՞վ աշխարհեսցէ ընդ յիս զկո-րուստ իմ, կամ ո՞վ տրտմեսցի ի վերայ թշուառու-թեանս իմոյ: Աշխա՛րհ, սգակից եղերու՛ք ինձ,

խփելու, և նրա սուրը սրված է քեզ փնտրելու: Եվ՝ երանի միայն այստեղ, քանի որ փոքր է այստեղի ժամանակի հարվածը, և դրանով չի վերջանա իմ մեղքերի բազմությունը, ավա՜ղ մեծ տուգանքիս, ո՞ւմ ինչով փոխանակեցի: Բնության արտասուքն ինձ բավական չէ ողբալու իմ կորուստը. կեղտոտ պատմուճանի համար զրկվեցի սուրբ հարսանիքից, մերժվեցի երանելի ցնծությունից, յուղի պակասության պատճառով զրկվեցի սուրբ առագաստից, և դռները փակվեցին, և ինչպե՞ս համարձակվեմ բախել, գուցե անարժանիս բարբառի փեսան, թեպետ ողորմած է, գուցե ինձ իրենից հեռու վտարի, կամ հրամայի կապել ու տանել արտաքին խավարի մեջ: Այո՛, վա՜յ թշվառության, դժվարին պատասխանին, ինձ հասնում է զրկվել մշտնջենական կյանքից և ժառանգել տարտարոսի անվախճան պատուհասը: Երանի բնավ ծնված չլինեի և չտեսնեի արեգակի լույսը, երանի թափված լինեի և դուրս ընկած իբրև վիժած, քան Փրկչի քաղցրախոս բերանից ընդունեի հրաժարման ձայնը:

Այժմ ո՞վ կաշխարհ ինձ հետ իմ կորուստը կամ ո՞վ կտրտմի իմ թշվառության վրա: Աշխարհ, ինձ սգակի՛ց եղեք, անշունչ տարրեր, ողբացեք ինձ, Աստծու սուրբ հրեշտակներ, տրտմեցեք իմ կորստյան առթիվ, աղաչեցեք

տարե՛րք անշունչք, ողբացէ՛ք զիս, սուրբ հրեշտակք Աստուծոյ, տրտմեցարու՛ք ի վերայ կորստեան իմոյ, աղաչեցէ՛ք զբարերարն Աստուած, թերեւս խնայեսցէ յանձն իմ, վասն զի ես ոչ իշխեմ ժտել՝ յաղագս բազում մեղաց զամաւթի հարեալ, կամ թէպէտ եւ գիտեմ զանչափ քաղցրութիւն նորա, այլ երկնչիմ ի բազմութենէ մեղաց իմոց, կամիմ՝ զի մերձեցայց եւ աղաչեցից, այլ ամաչեմ գալ ի դէմս Տեառն, զոր զայրացուցի բազում անգամ, վստահ եմ յողորմութիւն գթութեան նորա, այլ խէթ խորհրդոց իմոց յամաւթ առնեն զիս: Ո՛չ իշխեմ պաղատիլ, այլ ակն կորեալ եւ ամաչեցեալ կամ պապանձեալ, եւ ոչ իշխեմ բանալ զբերանս իմ: Թէ գոյր ոք միջնորդ, որ տայր ինձ առ ի նմանէ մուրհակ համարձակութեան, թերեւս կարէի մատչել յաղաւթս առ նա: Բայց կարծեմ թէ զազրացան յինէն ամէնիքեան, որ սիրեն զԱստուած, մի եւ էթէ կարծեմ հնարս փրկութեան, ապաւինեալ առ նոյն ինքն, որ կարեկցաբար գթայ ի գործս ձեռաց իւրոց, որ միայն է գթած, ողորմած, երկայնամիտ, անոխակալ, քաղցր, անյիշաչար եւ բազումողորմ առ ամէնիսեն, որք սիրեցին զաւրեր երեւելոյ գալստեան նորա, որում վայել է փառք իշխանութիւն եւ պատիւ, այժմ եւ միշտ. ամէն:

բարերար Աստծուն, գուցե խնայե իմ անձը, որովհետև ես չեմ համարձակվում խնդրել՝ բազում մեղքերիս համար ամոթահար, կամ թեև գիտեմ նրա անչափ քաղցրությունը, բայց վախենում եմ իմ մեղքերի բազմությունից, ուզում եմ մոտենալ և աղաչել, բայց ամաչում եմ ելնել Տիրոջ դեմ, որին զայրացրի բազում անգամ, վստահ եմ նրա ողորմությանը, բայց իմ խայթող մտքերը ամաչեցնում են ինձ: Չեմ համարձակվում պաղատել, այլ ակնկոր և ամաչելով պապանձվել եմ և չեմ համարձակվում բանալ իմ բերանը: Թե մի միջնորդ լիներ, որ ինձ նրանից համարձակության մուրհակ տար, թերևս կարենայի մոտենալ նրան աղոթելու: Բայց կարծում եմ, որ ինձնից զզվեցին բոլորը, որ սիրում են Աստծուն, և եթե փրկության հնար ենթադրեմ՝ ապավինելով նույն Իրեն, որ կարեկցաբար գթում է իր ձեռքի գործերին, որ միակ գթածն է, ողորմածը, ներողամիտը, անոխակալը, քաղցրը, անհիշաչարը և բազումողորմ բոլորի հանդեպ, ովքեր կսիրեն նրա գալուստը, որին վայել է փառք, իշխանություն և պատիվ, այժմ և միշտ. ամեն:

26. ԱՂԱՒԹՔ ԳԱՌՆԵՑՈՅ ՅՈՀԱՆՆԻՍԻ ԱՍԱՑԵԱԼ

[Ա]ւրհնեալ ես, Հա՛յր սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ, սրբեա՛ զմեզ յամենայն սխալանաց հանդերձ մերովք ննջեցելովքն եւ մեղաւոր անձամբս: Ձճանապարհորդեալսն պահեա՛, զնաւորդեալսն ուղղեա՛, զվտարանդեալսն սփոփեա՛, զարժանահաս պատուհասն անդրադարձո՛, զհարուածեալսն կենագործեա՛, զբելիար բեկեա՛, զսատանայ սանձեա՛, զդեւսն տոչորեա՛, զհնարս նոցա հերքեա՛ եւ զամենայն խաբէութիւն նոցա խորտակեա՛, զգերեալսն ազատեա՛, զկապեալսն արձակեա՛, զգլորեալսն կանգնեա՛, զանկեալսն հաստատեա՛, զբեկեալսն բժշկեա՛, զվիրաւորեալսն ուրախացո՛, զցրուեալսն ժողովեա՛, զխաւարեալսն լուսաւորեա՛, զմերձեցեալսն ի փորձութենէ փրկեա՛, զմեղուցեալսն քաւեա՛, զաղտեղացեալսն սրբեա՛, զխոցեալսն սպեղանեա՛ եւ բովանդակ յամենեսեան բարեգործեա՛, զտկարսն [զաւ]րացո՛, զտխուրսն ուրախացո՛, զտգէտ[սն] իմաստնացո՛, զաւտարսն ընդանեցո՛, զհեռ[ա]ցեալսն մերձեցո՛, զհոգով եւ զմարմնով հ[իւ]անդացեալսն առողջացո՛, զհանդերձեալսն ի

26. ԳԱՌՆԵՑԻ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԱԾ ԱՂՈԹՔԸ

Օրհնյալ ես, Սուրբ Հայր, Աստված ճշմարիտ, բոլոր սխալներից սրբի՛ր մեզ՝ մեր ննջեցյալներով և մեղավոր անձովս: Պահի՛ր ճանապարհ ելածներին, ուղղի՛ր նավողներին, սփոփի՛ր վտանգվածներին, ե՛տ դարձրու արժանահաս պատուհասը, կյանքի՛ կոչիր հարված ստացածներին, հարվածի՛ր Բելիարին, սանձի՛ր սատանային, տոչորի՛ր դևերին, հերքի՛ր նրանց հնարքները և խորտակի՛ր նրանց բոլոր խաբեությունները, ազատի՛ր գերվածներին, արձակի՛ր կապվածներին, կանգնեցրո՛ւ գլորվածներին, հաստատի՛ր ընկածներին, բժշկի՛ր բեկվածներին, ուրախացրո՛ւ վիրավորվածներին, հավաքի՛ ցրվածներին, լուսավորի՛ր խավարածներին, փրկի՛ր փորձության մոտեցածներին, քավի՛ր մեղք գործածներին, սրբի՛ր աղտեղվածներին, սպեղանի՛ դիր խոցվածներին և ընդհանրապես բոլորին բարեգործի՛ր, տկարներին զորացրո՛ւ, տխուրներին ուրախացրո՛ւ, տգետներին իմաստնացրո՛ւ, օտարին դարձրու ընտանի՛, հեռացածներին մոտեցրո՛ւ, հոգով և մարմնով հիվանդացած-

մեղս զգուշացո՛, զհակառակեալս[ն] հաշտեցո՛, զհպարտսն հնազանդեցո՛, զանզգամսն զգուշացո՛, զանապաշաւսն ստրջացո՛ եւ զթմրեալսն յոգի եւ ի մարմին զգաստացո՛, զցասկոտսն ցածո՛, զսովորեալսն ի մեղս զարհուրեցո՛, զխռովեալսն խաղաղացո՛, զկարծրն կակղացո, զամբարտաւանսն հնազանդեցո՛, զդեգերեալսն ի դիւաց դիւրացո՛, զպակշոտեալս պարկեշտացո՛, զցաւս ցանկութեան ցածո՛ եւ զընկղմեալսն ապրեցո՛, եւ զընմբռնեալսն ի չարեաց դարձո՛, եւ բոլորին՝ զամենեսեան զմիտք եւ զհոգի եւ զմարմին ի կամս քո կացո՛, յայցեալ եւ ի խնդիր ամենեցուն: Դի՛ր, Տէ՛ր, զերկիւղ քո առաջի ամենայն աչաց եւ մտաց, խնայեա՛, Տէ՛ր, ի խրթնութիւն սուրբ խորանաց եւ ի բեկումն եկեղեցոյ: Տու՛ր, Տէ՛ր, խաղաղութիւն ամենայն աշխարհի եւ լիութիւն ամենայն բարեաց, ողորմեա՛, Տէ՛ր:

ներին առողջացրո՛ւ, մեղքի մեջ ընկածներին զգուշացրո՛ւ, հակառակվածներին հաշտեցրո՛ւ, հպարտներին հնազանդեցրո՛ւ, անզգամին զգուշացրո՛ւ, չապաշխարողներին զղջա՛լ տուր, հոգով և մարմնով թմրածներին զգաստացրո՛ւ, ցասկոտներին հանգստացրու, մեղքի վարժվածներին զարհուրեցրո՛ւ, խռովածներին խաղաղեցրո՛ւ, կարծրին կակղացրո՛ւ, ամբարտավաններին հնազանդեցրու, դևերից դանդաղածներին հեշտացրո՛ւ, ցանկասերներին պարկեշտացրո՛ւ, ցանկության ցավերը թուլացրու և ընկղմվածներին փրկի՛ր, չարից բռնվածներին դարձրո՛ւ, և բոլորի առհասարակ միտքը, հոգին և մարմինը քո կամքին պահիր, հայցելով ու փնտրելով բոլորին: Տե՛ր, դիր քո երկյուղը ամեն աչքի ու մտքի առջև, խնայի՛ր, Տե՛ր, սուրբ խորանները նսեմության և եկեղեցին՝ բեկումից: Տե՛ր, տո՛ւր խաղաղություն ամբողջ աշխարհին և լիություն ամեն բարիքի, ողորմի՛ր մեզ:

27. ԱՂԱԻԹՔ ՄԱՏՈՅՑ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՅ ԱՍԱՑԵԱԼ

Անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, հայեա՛ց ի տառապանս ծառայիս քո եւ խնայեա՛ ի մեղաւք մոլորեալ անձն իմ, բժշկեա՛ զբեկեալս եւ կանգնեա՛ զգլորեալս, դի՛ր սպեղանի խոցեալ եւ թարաղեալ ոգւոյս, եւ պատեա՛ զվէրս վիրաւորելոյս: Վերականգնեա՛, քանզի կորեալ, կործանեցայ բազում անաւրէնութեամբ, եւ չարիք իմ բարձրացան քան զգլուխ իմ: Տաւոունք մեղաց պատեցան զինեւ, եաւթնպատիկ սղալանք իմ պաշարեցին զիս, եւ ոչ գոյ թիւ անզգամութեան իմոյ, քեզ մեղայ, փրկութի՛ւնդ յաւիտենից: Ո՛չ ունիմ վստահութիւն կոչել զանուն ահաւորիդ ի վերայ վսերիս: Ամաւթ երեսաց ծածկեաց զիս, եւ հարան յիս փուշք մեղաց իմոց: Եւ արդ, Տէ՛ր իմ Տէր, առ ո՞ ապաւինեցաց, եւ կամ զո՞ արարից ինձ յոյս եւ ապաւէն փրկութեան իմոյ: Բայց թէպէտ եւ բազում անգամ բարկացուցի զբարձրե[ա]լն, սակայն առ քեզ կարդացից:

Մի՛ մտաներ ի դատաստան ընդ ծառայիս քո, Տէ՛ր իմ, եւ մի՛ հատուցաներ ըստ գործոց, Աստուա՛ծ իմ:

27. ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՍԱԾ ԱՂՈԹՔԸ

Ընկնում եմ քո առաջ և աղաչում քեզ, նայի՛ր քո ծառայիս տառապանքին և խնայի՛ր մեղքով մոլորվածիս, բժշկի՛ր բեկվածիս և կանգնեցրո՛ւ գլորվածիս, սպեղանի՛ դիր խոցված և թարախակալ հոգուս, կապի՛ր խոցերը վիրավորվածիս: Վերստին կանգնեցո՛ւ, քանզի կորա, կործանվեցի բազում անօրինություններով, և չարիքներս բարձրացան իմ գլխից վեր: Մեղքի կապանքները շրջապատեցին ինձ, իմ յոթնապատիկ սխալները պաշարեցին ինձ, և թիվ չկա իմ անզգամությանը, մեղա քեզ, փրկությունդ հավիտենից: Վստահություն չունեմ ահավորիդ անունը կանչելու իմ թշվառ (հոգուն): Երեսիս ամոթն ինձ ծածկեց, եւ մեղքերիս փշերը հարվածեցին: Եվ այժմ, Տե՛ր իմ, Տե՛ր, ո՞ւմ ապավինեմ, կամ ո՞ւմ դարձնեմ ինձ հույս ու ապավեն: Բայց թեպետ բազում անգամ բարկացրի Բարձրյալին, սակայն քեզ կդիմեմ:

Դատաստան մի՛ մտիր ինձ՝ քո ծառայի հետ, Տե՛ր իմ, և մի՛ հատուցիր, ըստ գործերի,

Մի՛ սրտմտութեամբ քով սպառնալեաւք սաստեր զիս, Տէ՛ր իմ, եւ մի՛ բարկութեամբ ահաբեկեսցես զեղկելիս, Աստուա՛ծ իմ:

Մի՛ մատներ զմեղուցեալս ի մորմոքումն յաւիտենից կայծականցն, Տէ՛ր իմ, եւ մի՛ յուղարկեր ողորմելիս անողորմ տանջանս, Աստուա՛ծ իմ:

Մի՛ տար զտարագրեալս ի տագնապ տարտարոսին, Տէ՛ր իմ, եւ մի՛ տիրեսցեն ի վերայ իմ վհատելոյս վիշտք անսպառ, Աստուա՛ծ իմ:

Մի՛ բարձրասցին ի վերայ իմ բոցն բորբոք, Տէ՛ր իմ, եւ մի՛ ածեր ի վերայ բազմամեղիս զհնոցն մթագին, Աստուա՛ծ իմ:

Մի՛ կաքաւեսցէ ի վերայ տառապելոյս հոյլք անվաղճան որդանցն, Տէ՛ր իմ, եւ մի՛ ածեր ի վերայ բազմամեղիս զազրագործ զչար ժանեաց զլութելին նոցա, Աստուա՛ծ իմ:

Մի՛ ծածկեսցեն զծանակեալ ծառայս ծովն հրեղէն, Տէ՛ր իմ, եւ մի՛ վազեսցէ ի վերայ վրդովելոյս վտակ հրախառն յորձանաց, Աստուա՛ծ իմ:

Մի՛ առաքեր զիս ի խաւարն արտաքին, Տէ՛ր իմ, եւ մի՛ անկայց աշխարհելիս ի գուբն ապականութեան, Աստուա՛ծ իմ:

Մի՛ որոշեսցես յերամէ երանելեացն, Տէ՛ր իմ, եւ մի՛ զրկեսցես զանցաւորս ի հաղորդութենէ ընտրելոցն, Աստուա՛ծ իմ:

Աստվա՛ծ իմ:

Քո զայրույթի սպառնալիքով մի՛ սաստիր ինձ, Տե՛ր իմ, և եղկելիս մի՛ ահաբեկիր բարկությամբ, Աստվա՛ծ իմ:

Մեղուցյալիս մի՛ մատնիր հավերժ կայծակների մորմոքման, Տե՛ր իմ, և ողորմելիս մի՛ ուղարկիր անողորմ տանջանքների, Աստվա՛ծ իմ:

Տարագրվածիս մի՛ տանիր տարտարոսի տագնապին, Տե՛ր իմ, և ինձ՝ վհատածիս չտիրեն անսպառ վշտերը, Աստվա՛ծ իմ:

Զբարձրանա ինձ վրա բորբոք բոցը, Տե՛ր իմ, և բազմամեղիս վրա մի՛ գցիր մթամած հնոցը, Աստվա՛ծ իմ:

Թող չպարեն տառապյալիս վրա անվախճան որդերի խմբերը, Տե՛ր իմ, և զազրագործ բազմամեղիս վրա մի բեր նրանց չար ժանիքների թույնը, Աստվա՛ծ իմ:

Ծանակված ծառայիս չծածկի ծովը հրեղեն, Տե՛ր իմ, և վրդովվածիս վրա չվազի հրախառն հորձանքների վտակը, Աստվա՛ծ իմ:

Ինձ մի՛ ուղարկիր արտաքին խավարը, Տե՛ր իմ, և աշխարելիս չընկնեմ ապականության փոսը, Աստվա՛ծ իմ:

Զանջատես երանելիների երամից, Տե՛ր իմ,

Մի՛ զահագին զձայնն ձայնեսցես, եթէ «Ծառայ չար եւ վատ», Տէ՛ր իմ, եւ մի՛ անտես առներ զտարակուսեալսն յաւիտենից աւրհնութեանցն, Աստուա՛ծ իմ:

Այլ ողորմութեամբ քով յաւիտենից ողորմեա՛ ինձ եւ անհաս մարդասիրութեամբդ քով գթա՛ յիս: Աղաչեմ զքեզ, Տէ՛ր, սրբարար զաւրութեամբ քով սրբեա՛ զիս՝ զաղտեղեալս մեղաւք, եւ ազատարար իշխանութեամբ քով ազատեա՛ զիս ի դառն վշտաց գեհենոյն: Տո՛ւր ինձ տեղի լուսափայլ առագաստին, եւ դասեա՛ զտարակուսեալս ի դասս իմաստուն կուսանացն: Տո՛ւր, Տէ՛ր, աղաչեմ զքեզ խոստացեալ բարիսն ընդ ամենայն ընտրեալսն, զի ընդ նմին փառաւորեցից զամենասուրբ զԵրրորդութիւն՝ զՀայր եւ Որդի եւ զՍուրբ Հոգի, այժմ եւ միշտ եւ յաւիտ[եանս. ամէն]:

և անցավորիս չզրկես ընտրյալներին հաղորդվելուց, Աստվա՛ծ իմ:

Ահագին ձայնով չգոչես՝ «Ծառա չար և վատ», Տե՛ր իմ, և չանտեսես հավերժի օրհնություններից չեղվածներին, Աստվա՛ծ իմ:

Այլ ողորմությամբդ հավիտենից ողորմի՛ր ինձ և անհաս մարդասիրությամբդ սրբի՛ր ինձ՝ մեղքով աղտեղվածիս, և քո ազատարար իշխանությամբ ազատի՛ր ինձ դեհենի դառն վշտերից: Տե՛ղ տուր ինձ լուսափայլ առագաստում և դասիր տարակուսածիս իմաստուն կույսերի շարքում: Տե՛ր, տո՛ւր, աղաչում եմ քեզ, խոստացածդ բարիքը բոլոր ընտրյալների հետ, որպեսզի նրանց հետ փառավորեմ ամենասուրբ Երրորդությունը՝ Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս. ամեն:

28. ՆՈՐԻՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԱՍԱՑԵԱԼ ԱՂԱՒԹՔ Ի ՀՈԳԻՆ ՍՈՒՐԲ

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, Հոգի՛ իմաստութեան եւ գիտութեան, Հոգի՛ հանճարոյ եւ զաւրութեան, Հոգի՛ ճշմարտութեան եւ աստուածպաշտութեան եւ մխիթարիչ, Հոգի՛ համագոյակից եւ հաւասար Հաւր եւ Որդւոյ, աղաչեմ զքեզ, որ ի յարարչութեան շրջելով ի վերայ համասփիւռ ջրոյն՝ գոյացուցեր զարարծս ամենայն, արա՛ եւ առ իս նոր նորոգումն: Հոգի՛ Սուրբ Աստուած, աղաչեմ զքեզ, որ զԲեսելիէլ եւ զԵղիաբն լցուցեր իմաստութեամբ՝ յարաշարել զյաւրինուածս խորանին վկայութեան, լի՛ց եւ զիս իմաստութեամբ՝ կա՛լ ի կամս քո: Աղաչեմ զքեզ, որ շնորհեցեր մարգարէիցն պատմել յառաջագոյն զգալուստ Միածնիդ յաշխարհս, տու՛ր ինձ առաջատեսութիւն՝ իմանալ եւ առնել զբարին հանապազ: Աղաչեմ զքեզ, որ յաւուր մկրտութեան իջեալ յերկնից՝ յայտնեցեր զաստուածութիւն էակցիդ քո, եւ Հայր կարդալով զորդիութիւն, դրոշմեա՛ եւ զիս ի հաճոյս քո: Աղաչեմ զքեզ, որ յաւուր Պենդէկոստէին իջեր յերրորդ ժամուն յերկնից ի դասս առաքելոցն եւ հրազէն մաքրազարդեալ՝ առաքեցեր զնոսա ի քարոզութիւն ընդ յոլորտս տիեզերաց, եկեսցես եւ յիս՝ բնակել առ իս եւ

28. ՆՈՒՅՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԱԾ ԱՂՈԹՔ ՍՈՒՐԲ ՀՈԳՈՒՆ

Հոգի՛ Աստծու, Աստվա՛ծ ճշմարիտ, Հոգի՛ իմաստության և գիտության, Հոգի հանճարի և զորության, Հոգի ճշմարտության և աստվածպաշտության, և մխիթարիչ, Հոգի համագոյակից և հավասար Հորն ու Որդուն, աղաչում եմ քեզ, որ արարչության ժամանակ շրջելով համասփյուռ ջրերի վրա՝ գոյացրիր բոլոր արարածները, ինձ և՛ս արա նոր նորոգություն: Հոգի Սուրբ Աստված, աղաչում եմ քեզ, որ Բեսելիելին ու Եղիաբին լցրիր իմաստությամբ՝ կերտելու վկայության խորանի մնայուն հորինվածքը, ինձ ևս լցրու իմաստությամբ՝ քո կամքին մնալու: Աղաչում եմ քեզ, որ շնորհեցիր մարգարեներին նախապես պատմել Միածնիդ աշխարհ գալը, ինձ կանխատեսությո՛ւն տուր՝ մշտապես իմանալու և կատարելու բարին: Աղաչում եմ քեզ, որ մկրտության օրը երկնքից իջնելով՝ հայտնեցիր քո էակցի Աստված լինելը և Հայր կոչելով որդիությունդ՝ ի հաճույս քո դրոշմի՛ր ինձ: Աղաչում եմ քեզ, որ Պենտեկոստեի օրը երրորդ ժամին իջար երկնքից առաքյալների դասի մեջ և հրազինված մաքրազարդելով՝

սրբել զաղտեղութիւն հոգւոյ իմոյ: Աղաչեմ զքեզ, որ ի խաւսելն Պետրոսի ի տանն Կուռնէլիոսի, հանգեար ի հոգիս լսողաց բանին, հանգիցես եւ առ իս եւ արասցես զիս բնակարան քեզ: Աղաչեմ զքեզ, որ ի սկզբանցն եւ մինչեւ ցայժմ, եւ ցառ ապա եւ յապառնիսն զամենայն յամենայնի լնուս, մի՛ եւս արասցես եւ զիս անտես յանբաւ բարերարութենէդ, այլ սրբարար զաւրութեամբ քո սրբեա՛ զիս յամենայն յանցանաց իմոց: Ողորմեա՛ եւ ամենայն ննջեցելոց, որ յԱբելէ մինչեւ ցայսաւր, որոց անկ է՝ ողորմիլ նոցա: Ողորմեա՛ ամենայն կենդանեացս, որ կան, եւ որ այլեւս կենդանի լինելոց են՝ անբան եւ բանաւոր: Ճանապարհորդեալսն պահեա՛, զնաւորդեալսն ուղղեա՛, զվտարանդեալսն սփոփեա՛, զարժանահաս պատուհասսն անդրադարձեա՛, զհարթուցեալսն պատսպարեա՛, զհարուածեալսն կենսագործեա՛, զբելիար բեկեա՛, զսատանայ սանձեա՛, զդեւսն դեգերեա՛, զհնարս նոցա հերքեա՛, զխաբէութիւն նոցա խափանեա՛, զգերիսս ազատեա՛, զկապեալսն արձակեա՛, զգլորեալսն կանգնեա՛, զանկեալսն հաստատեա՛, զբեկեալսն բժշկեա՛, զվիրաւորեալսն պատեա՛:

նրանց առաքեցիր քարոզելու տիեզերքի ոլորտներում, դաս և ինձ մոտ՝ բնակվելու ինձ մոտ և սրբելու իմ հոգու աղտեղությունը: Աղաչում եմ քեզ, որ երբ Պետրոսը խոսում էր Կուռնելիոսի տանը՝ իջար լսողների հոգիներին, իջնես և ինձ մոտ և ինձ դարձնես բնակարան քեզ: Աղաչում եմ, որ սկզբից մինչև հիմա և մինչև գալոց ապառնիները ամեն ինչ ամենով լցնես, ինձ էլ չանտեսես անբավ բարությունիցդ (զրկելով), այլ քո սրբարար զորությամբ սրբի՛ր իմ բոլոր հանցանքներից: Ողորմի՛ր և բոլոր ննջեցյալներին, որ Աբելից մինչև այսօր [եղել են], ո՛ւմ հարկ է՝ ողորմել նրանց: Ողորմի՛ր բոլոր կենդանիներին, որ կան, և որ այսուհետև լինելու են կենդանի՝ անբան թե բանավոր: Ճանապարհ ընկածներին պահի՛ր, նավորդներին ուղղություն տուր, վտարանդվածներին սփոփիր, արժանահաս պատուհասները ետ դարձրու, խրտնածներին պատսպարի՛ր, խփվածներին կյանքի կոչիր, Բելիարին բեկիր, սատանային սանձիր, դևերին դեգերել տուր, նրանց հնարքները հերքիր, նրանց խաբեությունը խափանիր, գերիներին ազատիր, կապվածներին արձակիր, գլորվածներին կանգնեցրու, ընկածներին հաստատիր, կոտրվածներին բժշկիր, վիրավորներին կապիր:

29. ՆՈՐԻՆ ՅՈՎԱՆՆՈՒ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԱՐԱԳԻՆ ՎԱՍՆ ԵՐՐՈՐԴ ԺԱՄՈՒ ԱՒՈՒՐՆ

Աստուա՛ծ, Աստուա՛ծ մեր, Աստուա՛ծ կենարար եւ կենդանի յաւիտենից, որ յաւիտենից ողորմութեամբ քո լցուցեր զերկիր, եւ բանիւ քո զերկինս հաստատեցեր, եւ հոգւով բերանոյ քո գոյացուցեր զամենայն զաւրութիւնս նորա, արարեր եւ զմարդն ի հողոյ եւ փչեցեր ի նա շունչ եւ ոգի կենդանի, եւ եդեր զնա ի դրախտին փափկութեան՝ տալով նմա զանախտութիւն եւ զանմահութիւն, ուստի եւ իմ եղէն յանցանքն՝ որ ի յանցանաց աշխարհին, զի կերեալ ճաշակեցի զդառնութիւն մահու եւ անկայ ի կորուստ եւ յապականութիւն: Իսկ դո՛ւ, գթած եւ մարդասէր Տէ՛ր, ո՛չ անտես արարեր զգործս անեղ եւ անարատ ձեռացդ, եւ անոխակալ քաղցրութեամբդ քո ողորմելով՝ առաքեցեր առ մեզ զհաւասարակից Որդիտ քո Միածին, որ եկն եւ փրկեաց զմեզ ի մեղաց մերոց եւ արար իւր ժողովուրդ սեփհական նախանձաւոր գործոց բարութեանց, եւ ծանոյց մեզ զազատարար անուն քո հայրական, եւ շնորհեաց մեզ համարձակութիւն կարդալ առ քեզ եւ կոչել

29. ՆՈՒՅՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ՝ ՕՐՎԱ ԵՐՐՈՐԴ ԺԱՄԻ ՊԱՏԱՐԱԳԻ ՀԱՄԱՐ

Աստվա՛ծ, մեր Աստված, կենդանարար Աստված և հավերժ կենդանի, որ քո հավիտենական ողորմությամբ լցրիր երկիրը, և քո խոսքով հաստատեցիր երկինքը, և բերանիդ շնչով գոյացրիր նրա բոլոր զորությունները, մարդն ստեղծեցիր հողից և նրան կենդանի շունչ ու ոգի փչեցիր, և դրիր փափկության դրախտի մեջ՝ նրան տալով անախտություն ու անմահություն, որտեղից և եղան իմ հանցանքները, որ աշխարհի հանցանքներից են, որովհետև կերա, ճաշակեցի մահվան դառնությունը և մատնվեցի կորստի ու ապականության: Իսկ դու, գթած և մարդասեր Տեր, չանտեսեցիր անեղ և անարատ ձեռքիդ գործերը և, անոխակալ քաղցրությամբդ ողորմելով, մեզ մոտ առաքեցիր քո հավասարակից Միածին Որդուն, որ եկավ և փրկեց մեզ մեր մեղքերից և իր սեփական ժողովրդին դարձրեց բարի գործերի նախանձախնդիր և մեզ հայտնեց քո ազատարար հայրական անունը, և մեզ համարձակություն շնորհեց դիմելու

զքեզ Հայր:

Եւ արդ, աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Աբէլի, Ենովքայ, Ենովսայ, Նոյի, Մելիքսեդեկի, Աբրաամու, Սահակայ, Յակովբայ, Յովսեփայ, Յովբայ նահապետացն եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդակից պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Մովսէսի, Ահարոնի, Եղիազարու, Փենեհէզի, Ովրայ, Յեսուայ, Քաղբայ, Եղիաբու, Եղդադայ, Գեդէոնի, Բեսէլիէլի, Յեփթայեայ եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Դաւթի, Սամուելի, Սամեայ, Սամսոնի, Եղիայի, Եզեկիէլի, Եղիսէի, Եզեկիայի, Եզրի, Զաւրաբաբելի, Ասափայ, Բարաքայ եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդակից պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Եսայեայ, Յովսէի, Ամովսայ, Յովէլեայ, Յունանու, Նաթանայ, Նաւումայ, Միքիայ, Մաղաքիայ եւ այլ ամենայն ընտրելոցն՝

քեզ և քեզ կոչելու Հայր:

Եվ այժմ աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Աբելի, Ենոքվի, Ենովսի, Նոյի, Մելքիսեդեկի, Աբրահամի, Սահակի, Հակոբի, Հովսեփի, Հոբի՝ նահապետների և բոլոր ընտրյալների, որ նրանց հետ էին:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Փենեհեզի, Ովրի, Հեսուի, Քաղբի, Եղիաբի, Եղդադի, Գեդեոնի, Բեսելիելի, Հեփթաղի և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Դավթի, Սամուելի, Սամսոնի, Եղիայի, Եզեկիելի, Եզեկիայի, Եզրի, Զորաբաբելի, Ասափի, Բարուքի և բոլոր մյուս ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին և պատարագներին սուրբ Եսայիի, Հովսի, Ամովսի, Հովելի, Հունանի, Նաթանի, Նավումի, Միքիի, Մաղաքի և մյուս բոլոր ընտր-

որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Անգէի, Սոփոնիայի, Գադայ, Աբդիու, Դանիէլի, Երեմիայի, Բարուքայ, Անանիայի, Ազարիայի, Միսայէլի, Հռաքսայ, Ոնիայի եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զկնի նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Ամինադաբայ, Խորենայ, Գադիդայ, Մակարայ, Մակաբէայ, Սաղաթիէլի, Եղիազարոսի, Եղիսաբեթի, Ղազարու, Մարիամու, Մարթայի եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ շնորհաբաշխութեան ամենայն տնաւրինական կրից Միածնի քո անճառ ծննդեանն, որ հրեշտակաւքն ընձայելոյն ի տաճարին, փախչելոյն որ յԵգիպտոս, մկրտութեանն եւ աղաւնակերպ իջման Հոգւոյն Սրբոյ, եւ հայրական ձայնիդ, անապատին փորձութեանն եւ այլակերպութեանն՝ որ ի Թաբաւական լերինն, աստուածասքանչ նշանացն, բովանդակ լուացմանն աշակերտացն, ազատարար նախկի[ն] պատարագին՝ որ ի Վերնատունն, ուժգին պաղատանաց

յալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Անգեի, Սոփոնիայի, Գադի, Աբդիայի, Դանիելի, Երեմիայի, Բարուքի, Անանիայի, Ազարիայի, Միսայելի, Հռաքսի, Ոնիայի և բոլոր այլ ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Ամինադարի, Խորենի, Գադիդի, Մակարի, Սաղաթիելի, Եղիազարի, Եղիսաբեթի, Ղազարի, Մարիամի, Մարթայի և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա քո Միածնի անճառ ծննդյան բոլոր տնօրինական չարչարանքների շնորհաբաշխության. հրեշտակներով ընծայվելուն տաճարում, փախչելուն Եգիպտոս, մկրտությանը և Սուրբ Հոգու աղավնակերպ իջման, և Հայրական ձայնիդ, անապատի փորձությանն ու այլակերպությանը Թաբորական լեռան վրա, աստվածասքանչ նշաններին, բովանդակ աշակերտների լվացմանը, առաջին ազատարար պատարագին, որ

աղաւթիցն, կալմանն, կապմանն, քարշմանն, ծեծմանն, կոփմանն, բառնալոյն զխաչափայտն, խաչելութեանն, կամաւոր չարչարարանացն, գոչմանն զ«Էլի Էլի»ն, թաղմանն, յարութեանն, համբարձմանն, Հոգւոյն Սրբոյ իջմանն ի դաստ առաքելոցն:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյ Աստուածածնիդ Մարիամու, Յովաննու Մկրտչին, Սեփաննոսի Նախավկային, մանգաբարձացն, մոգուցն, հովուացն, Սիմէոնի, Աննայի, Իւղաբերիցն, Կղէաւպեանցն, Յովսէփեանցն, մանգանցն Բեդղայեմի, Նիկոդիմոսի, Նաթանայէլի եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոց առաքելոցն երկոտասանիցն եւ եւթանասնիցն, աշակերտաց նոցին եւ աշակերտելոցն ի նոցանէ, վկայիցն, մարտիրոսացն, նահատակացն, խոստովանողացն, ճգնաւորացն, կուսանացն, հայրապետացն, վարդապետացն, թագաւորացն, իշխանացն, զաւրականացն եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ

Վերնատանն էր, աղոթքի ուժգին պաղատանքներին, բռնվելուն, կապվելուն, քարշվելուն, ծեծվելուն, կռփահարվելուն, խաչափայտին բարձրանալուն, խաչելությանը, կամավոր չարչարանքին, «Էլի, էլի» գոչմանը, թաղմանը, հարությանը, համբարձմանը, Սուրբ Հոգու իջմանը՝ առաքյալների դաս:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից և հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Աստվածածին Մարիամի, Հովհաննես Մկրտչի, Ստեփանոս Նախավկայի, մանկաբարձների, մոգերի, հովիվների, Սիմեոնի, յուղաբերների, Կղեոպյանների, Բեդղայեմի մանուկների, Նիկոդիմոսի և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին տասներկու սուրբ առաքյալների և յոթանասունի, նրանց աշակերտների, վկաների, մարտիրոսների, նահատակների, խոստովանողների, ճգնավորների, կույսերի, հայրապետների, վարդապետների, թագավորների, իշխանների, զորականների և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա պաղատանքին ու

մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոց հազարաւորացն եւ բիւրաւորացն, Մարութայեանցն, Մար Պարսամեանցն, Մար Պահմոյեանցն, Թաթլեանցն, Պաւղոսի, Անտոնի, Մակարայ, Մեսրոպպայ, Սիսոյի, Բեսարիոնի, Արսենի, անապատաւորացն, տաբեենացւոցն, սկիւթացւոցն, սինէացւոցն, եւ այլ ամենայն ընտրելոցն՝ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, Ռստակիսի, Վրթանիսի, Յուսկանն, Գրիգորիսի, Դանիէլի ծերոյն, Ներսէսի, Խադայ, Սահակայ, Շաղիտայ, Եպիփանու, Եփրեմի, Բարսղի, Մերկեռիոսի, Դեմետրիանոսի, Դիոնէսիոսի, Դոմնայ, Կիրակոսի, Յուղիտեայ, Կիպրիանոսի, Կոգմեայ, Կաղերպեայ, Կալիստրատոսեանցն, Կոդրատիոսեանցն, Վլաւասայ, Վլասինեայ, Վեստի, Վառվառեայ, Վահանայ, Վարդանանց, Թիւրսոսեանց, Թէոպոմպեանց, Թեբայեցւոցն, Թոթկայ, Բենիամենի եւ այլ ամենայն ընտրելոցն՝ եւ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց սրբոց քառասնից, Սարգսի զաւրավա-

պատարագներին հազարավոր և բյուրավոր սրբերի, Մարությանների, Մար Պարսամյանների, Մար Պահմոյանների, Թաթլյանների, Պողոսի, Անտոնի, Մակարի, Մեսրոպի, Սիսոյի, Բեսարիոնի, Արսենի, անապատականների, տաբենացիների, սկյութացիների, սինեացիների և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին սուրբ Գրիգոր Լուսավորչի, Ռստակեսի, Վրթանեսի, Հուսիկի, Գրիգորիսի, Դանիել ծերի, Ներսեսի, Խադի, Սահակի, Շաղիտայի, Եպիփանի, Եփրեմի, Բարսեղի, Մերկերիոսի, Դեմետրիանոսի, Դիոնեսիոսի, Դոմնի, Կիրակոսի, Հուղիտայի, Կիպրիանոսի, Կոգմոսի, Կաղերոսի, Կալիստրատոսյանների, Կոտրատիոսյանների, Վլավասի, Վլասինի, Վեստի, Վառվառայի, Վահանի, Վարդանանց, Թյուրսոսյանների, Թեոպոմպյանների, Թեբայեցիների, Թոթիկի, Բենիամինի և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին քառասուն սրբերի, Սարգիս զորավարի, Գեորգի, Թեոդորոսի,

րին, Գէորգեայ, Թէոդորոսի, Հռիփսիմեանցն, Հիպերիքեանցն, Յակովկայ, Յակովբայ, Մարուգէի, Մամասայ, Մինասայ, Մամբրէի, Նեքտառինեայ, Նիկողայոսի, Ուգուհեայ, Զարմանդխտոյ, Սանդխտոյ, Թեկղի, Զոյի, Զենովբայ, Զինոսի, Թալալիոսի, Կոտսանդիանոսի, Թէոդոսի, Տրդատայ, Կիւրղի, Երից սուրբ ժողովոյն եւ այլ ամենայն ընտրելոցն եւ որ զհետ նոցա:

Աղաչեմ զքեզ, Հա՛յր երկնաւոր, արա՛ զմեզ մասնակից եւ հաղորդ պաղատանաց եւ պատարագաց ամենայն սրբոց, որք յԱբելէ մինչեւ ցայսաւր ընտրեալ են, եւ որ այլեւս ընտրին մինչեւ ի վախճան աշխարհի, ողորմեա՛ց մեզ, Տէ՛ր, ողորմեա՛ց մեզ ըստ մեծի ողորմութեան քում:

Թո՛ղ մեզ զամենայն յանցանս մեր, զոր ի ծննդենէ աւազանին մեղուցեալ եմք կամայ եւ յակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ: Յիշեա՛, Տէ՛ր, եւ զամենայն ննջեցեալսն, որ յԱբելէ մինչեւ ցայսաւր, եւ թո՛ղ նոցա զամենայն սղալանսն, որոց արժան է թողուլ նոցա: Շնորհեա՛ եւ զաւդս քաղցրախառն եւ առողջս: Արա՛ եւ զերկիրս պտղաբեր ի սնունդս ծառայից քոց: Զխնամս սիրոյ քո առաքեա՛ ի մեզ: Զտղայս սնո՛ յարդարութիւն, զերիտասարդս պարսպեա՛, զծերսն զաւրացո՛, զկարճամիտսն մխիթարեա՛, զցրուեալսն ժո-

Հռիփսիմյանների, Հիպերիքյանների, Հակովիկի, Մարուգեի, Մամասի, Մինասի, Մամբրեի, Նեքտառինոսի, Նիկողայոսի, Ուգուհիոսի, Զարմանդուխտի, Սանդուխտի, Թեկղի, Զոյի, Զենոբիայի, Զինոսի, Թալիլիոսի, Կոստանդիանոսի, Թեոդոսի, Տրդատի, Կյուրեղի, երեքի սուրբ ժողովի և մյուս բոլոր ընտրյալների, որ նրանց հետ են:

Աղաչում եմ քեզ, երկնավոր Հայր, մեզ մասնակից ու հաղորդակից արա պաղատանքին ու պատարագներին բոլոր սրբերի, որ Աբելից մինչև այսօր ընտրված են և որ այսուհետև կընտրվեն մինչև աշխարհի վերջը, ողորմի՛ր մեզ, Տե՛ր, ողորմի՛ր մեզ քո մեծ ողորմությամբ:

Թո՛ղ մեր բոլոր հանցանքները, որ ավազանի ծնունդից գործել ենք կամա թե ակամա, գիտությամբ թե անգիտությամբ: Հիշի՛ր, Տե՛ր, և բոլոր ննջեցյալներին, որ Աբելից մինչև այսօր [եղել են], թո՛ղ նրանց բոլոր սխալանքները, ով որ արժանի է թողության: Եվ շնորհիր քաղցրախառն և առողջ օդ: Նաև երկիրը պտղաբեր արա ի սնունդ քո ծառաների: Քո սիրո խնամքը առաքիր մեզ: Մանուկներին արդարությամբ սնիր, երիտասարդներին պարսպիր, ծերերին զորացրու, կարճամիտնե-

ղովեա՛, զմոլորեալսն դարձո՛ ի գիտութիւն ճշմարտութեան քո, զմեղուցեալսն քաւեա՛ եւ զամենայն նեղեալսն փրկեա՛ յիւրաքանչիւր վշտաց, զի Դու ես բարերար Աստուած եւ տեսուչ ամենայն նեղելոց, վերակացու որբոց եւ այրեաց, բժիշկ հիւանդաց, անաւգնականից աւգնական, յոյս յուսացելոց, խռովելոց հանգիստ, տեսուչ ամենայնի, որ գիտես զպէտս եւ զկարիս իւրաքանչիւր ուրուք: Երեւեցո՛ զերեսս քո ի մեզ եւ ողորմեա՛ մեզ, լռեցո՛ զհերձուածս յեկեղեցւոյ քում սրբոյ, շիջո՛ խռովութիւն հեթանոսաց, որ կամին ընդ պատերազմ, խափանեա՛ զգայթագղութիւն հեթանոսաց եւ հերետիկոսաց, տո՛ւր հանդարտութիւն ի սիրտս իշխանաց եւ թագաւորաց եւ ամենայն մեծամեծաց, պահեա՛ զհաւտ քո զբանաւոր եւ զանբան՝ ի խաշնամահութենէ եւ ի տարաժամ մահուանէ, պահպանեա՛ զժողովուրդս քո յամենայն ցասմանէ եւ ի դիւական ախտից, արա՛ զմեզ որդիս լուսոյ եւ որդիս տուընջեան, ընկա՛լ զմեզ զամենեսեան յերկնից յարքայութիւնդ, տու՛ր մեզ սուրբ սրտիւ, միաբանութեամբ իբրեւ ընդ մի բերան փառաւորել զքեզ՝ ճշմարի՛տդ Աստուած, Հա՛յր ամենակալ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

րին մխիթարիր, ցրվածներին հավաքիր, մոլորյալներին դարձրու ճշմարտությանդ գիտության, մեղք գործածներին քավի՛ր և բոլոր նեղվածներին փրկիր ամեն վշտից, քանի որ դու բարերար Աստված ես և բոլոր նեղյալների խնամող, սուրբերի և այրիների վերակացու, հիվանդների բժիշկ, անօգնականների օգնական, հուսացողների հույս, խռովվածների հանգիստ, ամեն ինչի տեսնող, որ գիտես յուրաքանչյուրի պետքն ու կարիքը: Երևացրու քո երեսը մեզ, լռեցրու քո սուրբ եկեղեցու հերձվածները, մարի՛ր խռովությունը հեթանոսների, որ պատերազմել են ցանկանում, խափանի՛ր հեթանոսների ու հերետիկոսների գայթակղությունը, հանդարտությո՛ւն տուր թագավորների և բոլոր մեծամեծների սրտերին, պահի՛ր քո բանավոր և անբան հոտը խաշնամահությունից ու մահտարաժամից, պահպանի՛ր քո ժողովուրդը ամեն ցասումից ու դիվական ախտերից, մեզ լույսի և ցերեկի որդիներ արա, մեզ բոլորիս ընդունիր երկնի արքայությունդ, տո՛ւր մեզ սուրբ սրտով, միաբանությամբ միաբերան փառավորել քեզ, ճշմարիտ Աստված, ամենակալ Հայր, հավիտյանս հավիտենից. ամեն:

30. ՆՈՐԻՆ ՅՈՎԱՆՆՈՒ ԱՍԱՑԵԱԼ ԱՂԱՒԹՔ Ի ՀԱՅՐ

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ, Հա՛յր հանդերձելոյ աշխարհի, Հա՛յր գթութեանց եւ Աստուած ամենայն մխիթարութեանց, հայցեմք յամենակալ տէրութենէդ եւ յանբաւ մարդասիրութենէդ. հայեա՛ց ի գործս անեղ ձեռացդ եւ խնայեա՝ յորս փչեալ կենդանացուցեր: Լե՛ր խնդիր մոլորելոյս եւ գթութեամբդ քո գի՛տ զկորուսեալս: Կարո՛ղ Տէր, կանգնեա՛ զկործանեալս եւ դա՛ռն զդառն մեղաւք դատապարտեալս: Յո՛յս յարութեան, յարո՛ զյանցանաւք յուսահատեալ անկեալս: Եւ Տէ՛րդ տերանց, տու՛ր տրտմեցելոյս ուրախութիւն մեծ, քանզի չարաչար չարիւ չարին չարչարեցայ եւ վէրավէր վիրաւք վիրագին վիրաւորեցայ: Զի խոր խոցեաց խորամանգ խարդաւանողն, եւ բնաւին բեկեաց անբարին Բելիար: Բասրանաւք բանսարկուին բանդագուշեցայ եւ պարանաւք պատրողին պարտաւորեցայ: Զի՛ք չափ չարաչար չարեաց չարասիրին, եւ ո՛չ գոյ բաւ բասրանաց բարկացանողիս զբարձրեալդ: Անկայ կամաւ ի կափուլս կորստեան կեղտին եւ սուզայ սաստիկ սասանմամբ ի սորսն սատանայի:

30. ՆՈՒՅՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՂՈԹՔԸ ՀՈՐԸ

Երկնավո՛ր Հայր, ճշմարի՛տ Աստված, հանդերձյալ աշխարհի Հայր, գթությունների Հայր և բոլոր մխիթարությունների Աստված, ամենակալ տերությունիցդ և անբավ մարդասիրությունիցդ հայցում ենք՝ նայի՛ր անեղ ձեռքերիդ գործիս և խնայի՛ր՝ ում որ փչելով կենդանացրիր: Որոնի՛ր մոլորյալիս և քո գթությամբ գտի՛ր կորսվածիս: Կարո՛ղ Տեր, կանգնեցրու կործանվածիս և դարձրու դառն մեղքով դատապարտվածիս: Հո՛ւյս հարության, բարձրացրո՛ւ հանցանքով հուսահատված անկյալիս: Տե՛ր տերերի, մեծ ուրախություն տուր տրտմածիս, քանի որ չարի չարաչար չարությամբ չարչարվեցի և վիրագի կարեվեր վերքերով վիրավորվեցի:

Խորամանկ խարդավանողը խորապես խոցեց, և անբարի Բելիարը բեկեց բնավին: Բանսարկուի բամբասանքից բանդագուշեցի և խաբողի պարանով պարտավորվեցի: Չարասերի չարաչար չարիքներին չափ չկա, և բավ չէ Բարձրյալիդ բարկացնողիս բամբասանքը: Ընկա կամովին կորստյան կեղտի դարանը և

Անաւրէնութիւնք իմ բարձրացան քան զգլուխ իմ, եւ հարան հարուածով յիս փուշք մեղաց: Եւ արդ, Հա՛յր երկնաւոր, անկանիմ առաջի քո եւ աղաչեմ, մեղայ յերկինս եւ առաջի քո, ո՛չ եւս եմ արժանի կոչիլ որդի քո, արա՛ զիս իբրեւ զմի ոք ի վարձականաց քոց: Տո՛ւր ինձ զհամբոյրդ հայրական եւ պարգեւեա՛ ինձ զառաջին պատմուճանն ճոխութեանէ, եւ՛ զկաւշիկն շնորհալից, եւ՛ զմատանին մեծարանաց: Շնորհեա՛ ինձ զեզն պարարակ, զճաշակն անմահական եւ զբաժակն անապական, զի մի՛ կարասցեն ի վերայ իմ գամագիտ լինել խոզքն վայրենիք եւ ստացողքն նոցա: Եւ սրբեալ զիս յամենայն սխալանաց՝ արժանաւորեա՛ համարձակաձայն բարբառով հանապազ կարդալ առ քեզ եւ ասել. «Հա՛յր մեր, որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո, եկեսցէ արքայութիւն քո, եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի, զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսաւր, եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց, եւ մի՛ տար զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէ, զի քո է արքայութիւն եւ զաւրութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն» *[Մատթ. Դ. 9-13]:*

սաստիկ սասանմամբ սուզվեցի սատանայի խորշում: Իմ անօրինութիւնները բարձրացան իմ գլխից վեր, և հարվածով խփեցին ինձ մեղքի փշերը:

Եվ հիմա, երկնավոր Հայր, ընկնում եմ քո առաջ և աղաչում, մեղա երկնքի և քո առաջ, արժանի չեմ քո որդին կոչվելու, ինձ քո վարձկաններից մեկը դարձրու: Տո՛ւր ինձ հայրական համբույր և պարգևիր ինձ առաջին ճոխության պատմուճանը, և կոշիկը շնորհալից, և մեծարանքի մատանին: Շնորհիր ինձ պարարակ եզը, անմահական ճաշակումն ու անապական բաժակը, որ վայրի խոզերը և նրանց տերերը չկարողանան իմ մեջ խոցելի բան գտնել: Եվ ինձ սրբելով բոլոր սխալներից՝ արժանավորիր համարձակաձայն բարբառով մշտապես դիմելու քեզ և ասելու.

«Հա՛յր մեր, որ երկնքում ես, սուրբ լինի քո անունը, գա քո արքայությունը, կամքը քո լինի՝ ինչպես երկնքում և երկրի վրա, մեր հանապազորդ հացը տուր մեզ այսօր, և թող մեր պարտքերը, ինչպես և մենք թողնում ենք մեր պարտապաններին, և մի՛ տանիր մեզ փորձության, այլ փրկի՛ր չարից, քանի որ քոնն են արքայությունը և զորությունը և փառքը հավիտյանս. ամեն» (Մատթ. Զ. 9-13):

31. ՆՈՐԻՆ ՅՈՎԱՆՆՈՒ ԱՍԱՑԵԱԼ ԱՂԱՒԹՔ Ի ՅՈՐԴԻ

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ վասն փրկութեան որդոց մարդկան իջեր ի հայրական ծոցոյ եւ առեր մարմին ի սրբոյ կուսէն Մարիամայ եւ արարեր փրկութիւն ի մէջ երկրի, խաչեցար եւ թաղեցար, եւ յարեար ի մեռելոց, եւ համբարձար փառաւք առ Հայր, եւ հրաւիրեցեր յերկինս յորդէգրութիւն Հաւրդ երկնաւորի զորդիս մարդկան, աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, որ զայս ամենայն ազատութիւնս արարեր, եւ զբազում որդիս ի փառս ածեր, մի՛միայն ես եմ զրկեալ յանզրաւական յուրախութեանցդ եւ յանվախճան վայելչութեանցդ:

Այլ վասն ազատարար գալստեանդ քո յաշխարհս եւ վասն խանձարարապատ լինելոյն եւ ի մսուր բազմելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ՝ ամենամեղիս:

Վասն բազկաւք սուրբ կուսին բառնալոյն եւ սուրբ գրկաւքն գգուելոյն, եւ շրթամքն սուրբ համբուրելոյն, եւ սուրբ կաթամբն կերակրելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ՝ ամենամեղիս:

Վասն ի տաճարին քո ընծայելոյն եւ գրկաւքն

31. ՆՈՒՅՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՍԱԾ՝ ԱՂՈԹՔ ՈՐԴՈՒՆ

Որդի՛ Աստծու, ճշմարիտ Աստվա՛ծ, որ մարդկանց որդիների փրկության համար իջար հայրական ծոցից և մարմին առար սուրբ կույս Մարիամից և փրկություն իրականացրիր երկրի վրա, խաչվեցիր ու թաղվեցիր, հարություն առար մեռելներից, և փառքով համբարձվեցիր Հոր մոտ, և մարդկանց որդիներին հրավիրեցիր երկինք՝ Հորդ որդեգրվելու, աղաչում եմ քեզ, Տե՛ր իմ Հիսուս Քրիստոս, որ այս բոլոր ազատություններն արեցիր, և բազում որդիների փառքի առաջնորդեցիր, միայն ես եմ զրկված անվախճան ուրախությունից և անվերջ վայելչությունից:

Քո ազատարար գալստյան և խանձարուրով պատվելուդ համար և մսուրում բազմելուդ՝ հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմիր ինձ՝ ամենամեղիս:

Հանուն սուրբ Կույսի բազուկներին բարձրանալուդ և սուրբ գրկովը գգվելուդ, և սուրբ շրթունքներով համբուրելուն, և սուրբ կաթով կերակրելուն, հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմիր ինձ՝ ամենամեղիս:

Սիմէոնի գգուելոյն, եւ յԵգիպտոս փախչելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ. ամեն, ամե[ն]:

Վասն ի Յորդանան մկրտելոյն, եւ Հաւր ի վերուստ վկայելոյն, եւ աղաւնակերպ Սուրբ Հոգւոյն իջմամբ, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ. ամէ[ն]:

Վասն ի յանապատն վարելոյն եւ քառասնաւրեայ պահաւք պնդելոյն, եւ փորձողին յաղթելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ. ամե[ն]:

Վասն աստուածահրաշ սքանչելագործելոյն եւ ի քարոզութիւն ճանապարհելոյն, եւ ի մեղաւորաց յարկսն շրջելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմ[եա՛]:

Վասն ընդ աշակերտսն բազմելոյն եւ զնորընծայ պատարագն մատուցանելոյն, եւ զոտս աշակերտացն լուանալոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, [եւ ողորմեա՛]:

Վասն աղաւթից ուժգին գոչելոյն, եւ Յուդայէ մատնելոյն, եւ ի հրէից սուսերաւք վերայ գալոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ. ամէն, ամէ[ն]:

Վասն կալման քո եւ կապելոյն, եւ հերարձակ քարշելոյն, եւ ձորձապատառ լինելոյն, եւ եղեգամբ ծեծելոյն, եւ կոփելոյն, եւ հարկանելոյն, եւ հայհոյելոյն, եւ թքանելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ՞:

Հանուն տաճարին ընծայվելուդ և Սիմեոնի գրկով գգվելուդ, և Եգիպտոս փախչելուն, հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ. ամեն. ամեն:

Հանուն Հորդանանում մկրտվելուդ և Հոր վերևից վկայելուն, և աղավնակերպ սուրբ Հոգու իջման. հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ. ամեն: Հանուն անապատ տարվելուն, և քառասնօրյա պահքով պնդելուն, և փորձողին հաղթելուն, հիշի՛ր ինձ, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ. ամեն:

Հանուն աստվածահրաշ սքանչելագործելուն և քարոզության ճանապարհելուն, և մեղավորների հարկում շրջելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր:

Հանուն աշակերտների հետ բազմելուն և նորընծա պատարագը մատուցելուն, և աշակերտների ոտքերը լվանալուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմիր:

Հանուն աղոթքի ուժգին գոչելուն և Հուդայից մատնվելուն, և հրեաների՝ սուսերով հարձակվելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ. ամեն. ամեն:

Հանուն քո բռնվելուն և կապվելուն, և հերարձակ քարշելուն, և ձորձապատ լինելուն, և եղեգնով ծեծվելուն, և կոփահարվելուն, և հայհոյելուն, և թքնելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ո-

Վասն քահանայիցն քամահելոյն եւ ի դպրացն դրսովելոյն, եւ զինուորացն զզուելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, [եւ ողորմեա՛]:

Վասն կապանաւք առաջի Պիղատոսի կալոյն եւ ի նմանէ հարցափորձելոյն, եւ ի Հերովդէ արհամարհելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ի[նձ]:

Վասն զհանդերձս բաժանելոյն, եւ զվիճակս պատմուճանին արկանելոյն, եւ քղամիդաւք զարդարելոյն, եւ զկենսաբեր փայտն բառնալոյն, եւ ի Գողգոթա վերականգնելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ՛՛:

Վասն ի խաչին բեւեռելոյն եւ կամաւոր չարչարելոյն, լեղի եւ քացախ ճաշակելոյն, տիգաւ զկողսդ խոցելոյն, ջրոյ եւ արեանն ելանելոյն, ի ժողովրդենէն անարգելոյն, եւ յիշխանացն պարսաւելոյն, յիշեա՛՛:

Վասն մեծի եւ ահաւոր ձայնիւ գոչելոյն, եւ զ«Էլի Էլի»ն կարդալոյն, եւ առ Հայր զհոգի աւանդելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր, եւ ողորմեա՛ ինձ. ամէն՛՛:

Վասն ի խաչէն իջանելոյն, եւ ի գերեզմանս թաղելոյն, եւ վիմովն փակելոյն, եւ մատանեաւ կնքելոյն, եւ զդժոխս աւերելոյն, յիշեա՛ զիս, Տէ՛ր՛՛:

Վասն ի մեռելոց յառնելոյն, եւ աշակերտացն երեւելոյն, եւ աստուածապէս համբառնալոյն, եւ

ղորմի՛ր ինձ. ամեն:

Հանուն քահանաների քամահրելուն և դպիրներից կշտամբվելուն, և զինվորների զզվեցնելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր:

Հանուն Պիղատոսի առջև կապանքով մնալուն և նրանից հարցաքննվելուն, և Հերովդեսից արհամարհվելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ:

Հանուն հանդերձները բաժանելուն և պատմուճանի վիճակ հանելուն, և քղամիդով զարդարվելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ:

Հանուն խաչին բևեռվելուն և կամավոր չարչարվելուն, լեղի և քացախ ճաշակելուն, տեգով կողերդ խոցելուն, ջրի և արյան ելնելուն, ժողովրդից անարգվելուն, և իշխաններից պարսավվելուն, հիշի՛ր, Տե՛ր: Հանուն մեծ և ահավոր ձայնով գոչելուն, և «Էլի, էլին» կանչելուն, և հոգին առ Հայրն ավանդելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ. ամեն:

Հանուն խաչից իջնելուն և գերեզմանում թաղվելուն, և վեմով փակվելուն, և մատանիով կնքվելուն, և դժոխքը ավերելուն, հիշի՛ր ինձ, Տե՛ր:

Հանուն մեռելներից հառնելուն և աշակերտներին երևալուն, և աստվածապես համբառնալուն, և Սուրբ Հոգին առաքյալներին

զՀոգին Սուրբ յառաքեալսն առաքելոյն, յիշեա՛ զիս Տէր, եւ ողորմեա՛ ինձ՝ ամենամեղիս:

Եւ արդ, Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, անմա՛հ եւ անմահից արքա՛յ, որ զայս ամենայն վասն մեղաւորացս կրեցեր՝ առ ի կեցուցանել զմեղաւք մեռեալս եւ գտանել զյանցանաւք կորուսեալս, յիշեա՛ եւ զիս՝ զբազմամեղս, եւ սրբեա՛ զիս յամենայն սխալանաց իմոց, զոր յաւազանէն մինչեւ ցայսաւր մեղուցեալ եմ: Եւ զերծո՛ զիս յանձերելի տանջանացն եւ ի վտանգից վշտագին գեհենոյն, եւ արա՛ զիս արժանի մտանել ընդ աւազակին ի դրախտն անանցական. եւ յաւիտեանս յաւիտենից:

ուղարկելուն, հիշի՛ր, Տե՛ր, և ողորմի՛ր ինձ՝ ամենամեղիս:

Եվ այժմ, Տե՛ր իմ Հիսուս Քրիստոս, անմահ և անմահների արքա, որ այս ամենը մեղավորներիս համար կրեցիր՝ ապրեցնելու համար մեղքով մեռածներիս և գտնելու հանցանքով կորածներիս, հիշի՛ր և ինձ՝ բազմամեղիս, և սրբի՛ր ինձ իմ բոլոր սխալներից, որ ավազանից մինչև այսօր գործել եմ: Եվ փրկի՛ր ինձ աններելի տանջանքներից և գեհենի վտանգներից, և ինձ արժանի արա ավազակի հետ մտնելու անանցական դրախտը հավիտյանս հավիտենից:

32. ԱՂԱՒԹՔ ՍՐԲՈՅՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ ԶԿՆԻ ԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Տէ՛ր Աստուած, աւրհնեալ ես յաւիտեան, աւրհնեա՛ հոգւով զամենեսեան, զխաղաղութիւն քո տո՛ւր ամենայն աշխարհի, պահեա՛ անչար եւ անսասան: Բա՛րձ զցասումն արարածոց, զսով, զսրածութիւն եւ զմահտարաժամ: Զեղբարութիւնս մեր պահեա՛ ամբողջ սիրով կեալ միաբանութեամբ: Զշինաւղս սուրբ եկեղեցւոյս դասաւորեա՛ յաջակողմեան դասուն: Զսպասաւորս եւ զուխտաւորս արժանացո՛ ողորմութեան քում: Զառաջնորդութիւնս մեր հաւատոյս զ[այս անուն] սրբազան կաթողիկոսն, զեպիսկոպոսս, զքահանայս եւ զվարդապետս, աստուածաբանս եւ զպաշտաւնեայս եկեղեցւոյ, առհասարակ զամենեսեան պահեա՛ անփորձ եւ անսասան աստ եւ յապայսն յաւիտեան: Թագաւորաց քրիստոնէից տու՛ր զաւրութիւն, լե՛ր աւգնական հաւատացելոց ազգի մարդկան, բա՛ց զդրունս արքայութեան: Որք յանձնեցին մեզ զինքեանս, յիշեա՛ յաւուր քում գալստեանն: Զմեր ծնաւղս, զաշխատաւղս եւ զերախտաւորս ամենայն, յիշեա՛ եւ այց արա՛ նո-

32. ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՈԹՔԸ՝ ԱՍՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐՁԱԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ

Տե՛ր Աստված, օրհնի՛ր հոգով բոլորին, քո խաղաղությունը տուր ամբողջ աշխարհին, պահիր անչար և անսասան: Արարածներից վերացրու ցասումը, սովը, սրածությունը և մահտարաժամը: Մեր եղբայրությունը պահիր ամբողջ՝ սիրով մնալու միաբանությամբ: Սուրբ եկեղեցուս կառուցողներին արժանացրու քո ողորմությանը: Մեր հավատի առաջնորդներին (անուն) սրբազան կաթողիկոսին, եպիսկոպոսներին, քահանաներին և վարդապետներին, աստվածաբաններին և եկեղեցու պաշտոնյաներին, առհասարակ բոլորին պահի՛ր անփորձ և անսասան այժմ և ապագայում հավիտյան: Քրիստոնյա թագավորներին զորությո՛ւն տուր, օգնակա՛ն եղիր մարդկային ցեղի հավատացյալներին, բա՛ց արքայության դռները: Ովքեր հանձնվեցին մեզ՝ հիշի՛ր քո գալստյանը: Մեր ծնողներին, բոլոր աշխատողներին ու երախտավորներին, հիշի՛ր և այց արա նրանց, մաս ու բաժին հանիր հանգստյան, և ովքեր եկանք աղո-

ցա, հա՛ն մասն եւ բաժին հանգստեան, եւ որք ե-
կաք աղաւթեցաք, լե՛ր ամենայն ժամ աւգնական:
Փրկեա՛ ի գեհենոյն հրոյ եւ ի որդանցն անքունա-
կան, եւ քեզ ընդ Հաւր եւ Սուրբ Հոգւոյդ փառք եւ
պատիւ յաւիտեանս. ամէն:

*Թեցինք՝ ամեն ժամ օգնական եղիր: Փրկի՛ր
գեհենի հրից և անքուն որդերից, և Քեզ Հոր
և Սուրբ Հոգուդ հետ փառք և պատիվ հա-
վիտյանս. ամեն:*

33. ԴԱՐՁԵԱԼ ԱՂԱՒԹՔ ԱՌ ՍՈՒՐԲ ԽԱՉՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ՝ ԱՍԱՑԵԱԼ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑՈՅՆ

Աղաչեմ, Տէ՛ր, եւ անկանիմ առաջի սրբոյ նշանի քո, բարեխաւսութեամբ սորա զպաղատանս իմ ընկա՛լ եւ զխնդրուածս իմ կատարեա՛, զաւրութեամբ սորա զաւրացո՛ զիս, Տէ՛ր, ի կոչումն, յոր կոչեցայ եւ ի պատուիրանս քո, յոր յուսացայ: Տո՛ւր ինձ զսա ի զաւրութիւն եւ ի ժուժկալութիւն, եւ յառողջութիւն եւ ի զգաստութիւն, եւ ի պահպանութիւն անձին իմոյ՝ ի գիշերի եւ ի տուընջեան եւ յամենայն ժամու՝ ի ննջել եւ ի յառնել, ի գնալ եւ ի գործել, ի դատարիլ եւ ի վաստակիլ, ի պահել եւ ի յաղաւթել եւ զհաճոյս քո կատարել: Սա եղիցի ինձ պահապան ամրութեան եւ աշտարակ հզաւր յերեսաց թշնամոյն: Սովաւ զիս զարդարեա՛ ի զարդ հոգեղինի եւ ի լոյս իմանալի, ի յաւր երեւելի եւ ի բարբառ Գաբրիէլի: Զերեւիլ սուրբ նշանիս լուսաւորեա՛ զխաւար հոգիս, ընդառաջ քեզ վերանալ, խառնիլ յերամս հայրապետաց եւ ի դասս մարտիրոսաց եւ ի գումարս հրեշտակաց: Բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնիդ եւ՛ Յովհաննու Կարապետիդ, եւ՛ Ստեփաննո-

33. ԴԱՐՁՅԱԼ ԱՂՈԹՔ՝ ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ՝ ԱՍՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒՑ

Աղաչում եմ, Տե՛ր, և ընկնում քո սուրբ Նշանի առաջ, սրա բարեխոսությամբ ընդունի՛ր իմ պաղատանքը և կատարի՛ր իմ խնդրանքը, սրա զորությամբ ինձ զորացրու, Տե՛ր, կոչման մեջ, որ կանչվեցի քո պատվիրաններին, որոնց հուսացի: Սա տուր ինձ զորության և համբերության և զգաստության համար, և իմ անձի պահպանության՝ գիշերով ու ցերեկով և ամեն ժամի՝ ննջելիս և բարձրանալիս, ընթանալիս և գործելիս, դադարելիս և աշխատելիս, պահքի և աղոթքի ժամանակ և քեզ հաճո բաներ կատարելիս: Սա ինձ լինի ամրության պահապան և հզոր աշտարակ թշնամու դեմ: Սրանով զարդարիր ինձ՝ ի զարդ հոգեղենի և ի լույս իմանալի, երևելի օրը և Գաբրիելի բարբառին: Սուրբ Նշանիս երևալով լուսավորիր խավար հոգիս՝ քեզ ընդառաջ բարձրանալու, խառնվելու հայրապետների երամին և մարտիրոսների դասին, և հրեշտակների գումարին: Սուրբ Աստվածածնի բարեխոսությամբ, և՝ Հովհաննես Կարա-

սի Նախասարկաւագի եւ՛ առաջի մարտիրոսիդ, եւ՛ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին եւ՛ ամենայն սրբոց վկայիցդ լու՛ր ինձ ողբալոյս եւ ողորմեա՛ մեղուցելոյս, խնդիր արա՛ կորուսելոյս, ձեռն տու՛ր գլորելոյս, առաջնորդեա՛ մոլորելոյս, ի խաւարէ հա՛ն զիս ի լոյս, ազատութիւն արա՛ հոգւոյս, ի սէր քո հաստատեա՛ եւ յերկիւղ քո բեւեռեա՛, զտաճար հոգւոյս իմոյ սրբեա՛ եւ ի յառ իս յաւթեւանեա՛, զդուռն մեղաց իմոց փակեա՛, շուրջանակի զիս պարսպեա՛ եւ ի մարդոյ չարէ փրկեա՛, արդարութեամբ զիս զարդարեա՛ եւ զարքայութիւնդ ինձ պարգեւեա՛, կենդանեաց իմոց ողորմեա՛ եւ զհոգիս ննջեցելոց իմոց պայծառացեալ լուսաւորեա՛, եւ քեզ փառք յաւիտեանս. ամէն:

պետի, և՛ Ստեփանոս Նախասարկավագի ու առաջին մարտիրոսիդ, և՛ սուրբ Գրիգորի՝ մեր Լուսավորչի և հայոց բոլոր վկաների, լսի՛ր ինձ՝ ողբալիս, և ողորմի՛ր մեղապարտիս, որոնի՛ր կորսվածիս, ձե՛ռք մեկնիր գլորվածիս, առաջնորդի՛ր մոլորվածիս և խավարից լույս հանիր ինձ, ազատություն տուր իմ հոգուն, հաստատի՛ր քո սիրուն և քո երկյուղը բևեռիր, սրբիր տաճարը իմ հոգու, և ինձ մոտիկ օթևանիր, իմ մեղքերի դուռը փակիր, շուրջանակի ինձ պարսպիր, և չար մարդուց ազատիր, արդարությամբ ինձ զարդարիր, արքայությունդ ինձ պարգևիր և ողորմի՛ր իմ ողջերին, և իմ ննջեցյալների հոգիները պայծառացրած լուսավորի՛ր. և քեզ փառք հավիտյանս. ամեն:

34. ԱՂԱԻԹՔ ՅՈՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՅՆ ԱՍԱՑԵԱԼ ԱՌ ԿԵՆՍԱԲԵՐ ԽԱՉՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Ողջո՛յն քեզ, փա՛յտ փրկութեան, վահա՛ն հաւատոյ, զէ՛ն անյաղթելի, սու՛ր երկսայրի ընդդէմ թշնամւոյն, որ կառավարեցաւ ի վերայ քո փրկիչն աշխարհի: Դու ես խաչն տէրունական, դու պահեա՛ զանձն իմ ի թշնամւոյն: Վասն փայտիդ աւրհնութեան կենաց, յորում պրկեցար Աստուածդ անըմբռնելի յիշատակաւ բեւեռացդ, որով ի գործի մահուն մածուցար արարիչդ երկնի եւ երկրի, արեամբդ տէրունականաւ, որով զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեղուոյն դառնութեամբն զոր արբեր, որով զդեղատութիւն կորուսչին արտաքս հեղեր՝ պատմաբանութեամբ ըղձական ճառից կրիցն սարսափելեաց, որով զլրբութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր անուամբդ անհասականաւ ամենեւին անհասանելոյդ եւ անթարգմանելոյդ, յորմէ դողան եւ դատապարտին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երեւութից եւ աներեւութից. եղիցին այս ամենայն պարգեւք շնորհաց խոստովանելոյս ի պաշտպանութիւն, ի բժշկութիւն եւ ի քաւութիւն: Եւ մահաբեր դառնաթոյն աւձին եւ որ ի նմա ազդեաց տիեզերադաւ չարութիւն, ի սատակումն լիցի նորին նոյն ինքն ի

34. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՈԹՔԸ՝ ԱՍՎԱԾ ԿԵՆՍԱԲԵՐ ՍՈՒՐԲ ԽԱՉԻՆ

Ողջո՛ւյն քեզ, փա՛յտ փրկության, հավատի վահան, անհաղթելի զենք, երկսայրի սուր թշնամու դեմ, որ քեզ վրա բազմեց Փրկիչը աշխարհի: Դու ես խաչը տերունական, պահի՛ր իմ անձը թշնամուց: Հանուն կյանքի օրհնության փայտիդ, որին պրկվեցիր Աստվածդ անըմբռնելի բևեռներիդ հիշատակով, որով մահվան գործիքին կպար Արարիչդ երկնքի և երկրի, տերունական արյունովդ, որով վիշապին մեծ կարթով որսացիր, լեղիի դառնությամբ, որ խմեցիր, որով կորուսիչի դեղատվությունը մեկուսացրիր՝ սարսափելի տանջանքների պատմության ըղձական ճառերով, որով հակառակողի լրբությունն ըմբերանելով՝ ամաչեցրու բոլորովին անհասանելիիդ և անթարգմանելիիդ անհաս անունով, որից դողում դատապարտվում են բոլոր երևացող և աներևույթ բնությունները սաստիկ սարսափմամբ սոսկալով: Այս ամենը լինեն պարգև խոստովանողիս ի պաշտպանություն, ի բժշկություն և ի քավություն: Եվ մահաբեր դառնաթույն օձին և նրան ազդած տիեզերադավ չարությունը. սատակում բերի նրան

կորուստ եւ յանբժշկական հարուած, տանջանացն սովաւ մատնեսցի, կապեսցի եւ ըմբռնեսցի, եւ ողորմութիւն ստեղծողին եղիցի ընդ իս, եւ շունչ հոգւոյս իմ ընդ քեզ անբաժանաւրէն կամաւ միասցի ի մի: Եւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթանաց գոչման, աղաւթից հայցման, ծերոց եւ տղայոց, երիտասարդի եւ կուսի, եւ եթէ աղախնեաց, ոք պաշտեսցի աստուածասիրաբար, հաւասարապէս, անաչառութեամբ, ընկալցին ի քէն մասն երանութեան, պարտուց ազատութեան, հաստատեալ վերստին յանարատութիւն նորոգ մաքրութեան, նկարեալ դարձեալ զքոյդ կերպարան անփոփոխելի: Ահա տիրապէս հնարաւոր, զաւրեղ, անպատում, անհաս, անիմանալի կայեսցես աստանաւր ի հառաչանս կողկողանաց այսր հեծութեան, որ ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն Հաւր քո երկնաւորի եւ բարերարի, եւ Հոգւոյդ Սրբոյ փառակցի եւ կենդանատութիւն եւ սուրբ Աստուածածնիդ բարեխաւսութեամբ եւ խնդրուածովք ամենայն սրբոց, զի դու ստեղծեր զամենայն, եւ ի քէն եղեն ամենեքեան, եւ դու տիրես ամենայնի, եւ քեզ փառք ամենեցունց, մինդ իսկութենէ անժամանակ Երրորդութեանդ՝ զուգակցեալ փառաւորապէս յանբաւս եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

նույն ինքը, կորստի և անբուժելի հարվածի, սրանով մատնվի տանջանքի, կապվի և բռնվի: Եվ Ստեղծողի ողորմությունը լինի ինձ, և իմ հոգու շունչը կամովին քեզ հետ միավորվի անբաժանորեն: Եվ ով որ ընթերցի մաղթանքի գոչման այս ձայնի աղերսը, հայցման աղոթքը, ծերերին ու մանուկներին, երիտասարդի և կույսի, և թե աղախինների, չպաշտվի աստվածասիրաբար, հավասարապես, անաչառությամբ, քեզնից կընկալվի մասն երանության, ազատության՝ պարտքերից, վերստին հաստատվելով նորոգ մաքրության անարատությամբ, դարձյալ նկարելով քո կերպարանքը անփոփոխելի: Ահա տիրապես հնարավոր, զորեղ, անպատում, անհաս, անիմանալի կլինես այստեղ այս հեծության հառաչանքի կողկողանքին, որ բոլոր շրթունքներից ընծայվելով՝ քեզ է մատուցվում, քո երկնավոր Հոր և բարերարի համար, և փառակից և կենդանատու սուրբ Հոգուդ, և սուրբ Աստվածածնիդ բարեխոսությամբ ու բոլոր սրբերի խնդրանքով, քանի որ դու ստեղծեցիր ամբողջը, և քեզնից եղան բոլորը, և դու տիրում ես ամենին, և քեզ փառք բոլորից, մեկդ անժամանակ Երրորդության իսկությունից՝ փառավորապես զուգակցած անբավ և հավիտյանս հավիտենից. ամեն:

35. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԱՒՈՒՐ. ՆՈՐԻՆ ԵՐԱՆԵԼՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԳԱՌՆԵՑԻՈՅ ԱՂԱՒԹՔ ԱՌ ՀԱՅՐ ԵՐԿՆԱՒՈՐ

Արարիչ բոլորից, Աստուա՛ծ, գթա՛ ի վշտացեալս, ողորմեա՛ անկելոյս առաջի քո, պատեա՛ զվէրս իմ, բժշկեա՛ զհիւանդութիւնս իմ, սրբեա՛ զաղտեղութիւնս իմ, նորոգեա՛ զհնացեալս, լուսաւորեա՛ զխաւարեալս: Ամէնագութ եւ ողորմած, քաղցր եւ բարերար, մարդասէր եւ ամենախնամ, երկայնամիտ եւ անյիշաչար, գիտեմ ամենեւին, զի ամաւթալից եմ եւ ոչ ունիմ զհամար մեղացս, որ շուրջ պատեցան զինեւ յամենայն զգայութիւնս՝ մեղանչելով եւ վարանելով ի հոգս եւ ի ծափս, ի զբաղանս եւ ի դատարկութիւնս եւ յամենայն ազգի ազգի վնասս: Այլ ապաւինիմ ի քո անճառ գթութիւնդ եւ աղերսեմ, եւ ողբերգական ձայնիւ գոչեմ եւ խնդրեմ զողորմութիւն եւ զանյիշաչարութիւն ի բարերարէդ, ո՛վ անբաւութիւն, խորոց կամաց անհասիդ, ներեա՛ եւ մարդասիրեա՛ եւ սահմանեա՛ ապաշխարութեան տեղի: Ողորմեա՛, մարդասէ՛ր, կուրացեալ հոգւոյս եւ շնորհեա՛ ինձ ի վեր հայիլ թախանձագին: Քաղցր ակամբ հայեացիս, ողորմա՛ծ Աստուած, քանզի ի

35. ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐՎԱՆ. ԵՐԱՆԵԼԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՈԹՔԸ ԵՐԿՆԱՎՈՐ ՀՈՐԸ

Բոլորի Արարիչ, Աստված, գթա՛ վշտացածիս, ողորմի՛ր քո առջև ընկածիս, կապի՛ր իմ վերքերը, բուժի՛ր իմ հիվանդությունը, սրբի՛ր իմ աղտեղությունը, նորոգի՛ր հնացածիս, լուսավորի՛ր խավարածիս: Ամենագութ և ողորմած, քաղցր և բարերար, մարդասեր և բոլորախնամ, ներողամիտ և անհիշաչար, լիովին գիտեմ, որ ամոթահար եմ և թիվը չգիտեմ մեղքերիս, որ ինձ շրջապատեցին բոլոր զգայություններովս, մեղանչելով ու վարանելով հոգսի ու ծափի, զբաղմունքի ու պարապության և բոլոր տեսակ-տեսակ վնասներով: Բայց ապավինում եմ քո անճառ գթությանը և աղերսում եմ, և ողբերգական ձայնով գոչում ու խնդրում եմ Բարերարիդ ողորմությունն ու անհիշաչարությունը, ո՛վ անբավություն, անհա՛սդ խորին կամքի, ների՛ր և մարդասիրիր և սահմանիր ապաշխարության տեղ:

Ողորմի՛ր կուրացած հոգուս, մարդասե՛ր, և շնորհ արա, որ վերև նայեմ թախանձանքով:

զանազան եւ ի բազմաւրինակ մեղաց անկեալ եւ լուծեալ կամ եւ ակն արկեմ դողմամբ սրտիս՝ ո՛չ ունելով զոք կարեկից: Ճարտարապե՛տ, քա՛ղցր բժիշկ, հրամայեա՛ հաստատիլ անդամոց իմոց, զի անբաւ է գթութիւն աստուածային սիրոյդ:

Ողորմեա՛, ողորմութեա՛նց աղբիւր, եւ ներեա՛ յամենայնի, երկայնամի՛տ, թո՛ղ որ առատդ ես ի բարգեւիլ, սրբեա՛ զվէրս եւ զհարուածս խոցելոյս, որ սրբութիւնդ ես գերակատար, ջնջեա՛ զհանցանս իմ եւ զսխալանս, որ ամենակարաւղդ ես, առողջացո՛ բազմամեղ հիւանդութիւն հոգւոյս, որ իշխանդ ես կենաց եւ մահու, որ ի բարձունս երկնից նստիս, կանգնեա՛ զիս ի գլորմանէ մեղաց, որով գայթակղեցայ ընդ սնոտի կենցաղս: Արտասուագոչ ողբերգութեամբ եւ կորացեալ պարանոցաւ հեղում առաջի անոխակալ բարերարիդ զթշուառացեալ, մեղսաթաւալ մարմինս, որով ոչ զանգիտեցի ի հրամանաց քոց:

Աղաչեմ, արա՛ առ իս ըստ ողորմութեանդ ի նեղիլ սրտիս եւ ի հեղձամղձուկ լինիլ մտացս, զի ոչ ժուժեմ վշտիս:

Խնդրեմ, պաղատիմ, հայցեմ, առաջի անկանեմ, աղերսեմ, ղուղանիմ, թո՛ղ, Տէ՛ր, գթա՛, Տէ՛ր, խնդրեա՛, Տէ՛ր, ներեա՛, Տէ՛ր, քաւեա՛, Տէ՛ր, փրկեա՛ Տէ՛ր, աւգնեա՛, Տէ՛ր, պահեա՛, Տէ՛ր, ամ-

Քաղցր աչքով նայիր, ողորմա՛ծ Աստված, քանի որ զանազան և բազմօրինակ մեղքերից ընկած ու քայքայված եմ և սրտիս դողով ամաչում եմ՝ չունենալով կարեկից մեկը: Ճարտարապե՛տ, քաղցր բժիշկ, հրամայի՛ր՝ իմ անդամները հաստատվեն, որովհետև աստվածային սիրուդ գթությունն անբավ է:

Ողորմի՛ր, ողորմությունների աղբյուր, ների՛ր ամեն ինչում, ներողամիտ, ջնջի՛ր հանցանքներն ու սխալներն իմ, որ ամենակարողդ ես, առողջացրու հոգուս բազմամեղ հիվանդությունը, որ իշխանդ ես կյանքի և մահու, որ երկնքի բարձունքին ես նստում, կանգնեցրո՛ւ ինձ գլորմունքից մեղքի, որով գայթակղվեցի սնոտի այս կյանքում: Արտասվագոչ ողբերգությամբ և կորացած պարանոցով անոխակալ բարերարիդ առջև հեղում եմ թշվառացած, մեղսաթավալ մարմինս, որով չվախեցա քո հրամաններից:

Աղաչում եմ, ինձ արա ողորմությանդ համաձայն, որ չհանդուրժեմ սիրտս նեղվելիս և միտքս հեղձամղձուկ լինելիս:

Խնդրում, պաղատում, հայցում եմ, առջևդ ընկած աղերսում, թաքնվում եմ, թո՛ղ, Տե՛ր, գթա՛, Տե՛ր, ների՛ր, Տե՛ր, քավի՛ր, Տե՛ր, փրկի՛ր, Տե՛ր, օգնի՛ր, Տե՛ր, պահի՛ր, Տե՛ր, ամրացրո՛ւ,

րացո՛, Տէ՛ր, կարողացո՛:

Աղաչեմ, զաւրացո՛ յոյս իմ, ապրեցո՛, Աստուած իմ, արժանացո՛, Տէ՛ր իմ, զերծո՛ ի պատժոց, դատաւո՛ր իմ, պարգեւեա՛, Տէ՛ր, հաստատեա՛, Տէ՛ր, յերկիւղ քո եւ ի սէր, առաջնորդեա՛ ի պատուիրանս քո, նաւավարեա՛ ի ծովու աշխարհի:

Տարակուսեցայ ի ցնորմանց, գայթակղեցայ ի պէսպէս սնոտիս, մոլորեցայ ի ճանապարհէ, խոտորեցայ ի սուրբ շաւղաց, անկայ եւ գլորեցայ: Այժմ հաւատով եւ յուսով առ արարիչդ ապաւինեցայ, ողորմեա՛, Տէ՛ր, յարո՛ եւ կոչեա՛ առ քեզ: Եւ քեզ փառք ընդ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Տե՛ր, կարո՛ղ դարձրու:

Աղաչում եմ՝ զորացրու, հույս իմ, ապրեցրո՛ւ, Աստված իմ, արժանացրո՛ւ, Տե՛ր իմ, պատիժներից ազատի՛ր, Դատավո՛ր իմ, պարգևի՛ր, Տե՛ր իմ, հաստատի՛ր, Տե՛ր, քո երկյուղով և սիրով առաջնորդի՛ր դեպի քո պատվիրանները, նավորդի՛ր աշխարհի ծովում:

Ցնորմունքից տարակուսեցի, պես-պես սնոտի բաներով գայթակղվեցի, ճանապարհից մոլորվեցի, շեղվեցի սուրբ շավղից, ընկա և գլորվեցի: Այժմ հավատով ու հույսով Արարչիդ ապավինեցի. ողորմի՛ր, Տե՛ր, բարձրացրո՛ւ և կանչիր քեզ մոտ: Եվ քեզ փառք Որդու և Սուրբ Հոգուդ հետ այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ՑԱՆԿ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԱՌՆԵՑՈՒ ԱՂՕԹՔՆԵՐԻ ՍԿԶԲՆԱՏՈՂԵՐԻ

Աղաչեմ զքեզ, Տէ՛ր Աստուած ամենակալ .....15.
Առ Տէր վասն գիշերոյ

Աղաչեմ, Տէ՛ր, եւ անկանիմ առաջի սրբոյ նշանի քո .....33.
Առ սուրբ խաչն աստուածընկալ

Առաջնո՛րդ կենաց եւ ճանապարհ ճշմարտութեան .....20.
Առ Տերն մեր Յիսուս Քրիստոս վասն ճանապարհի

Անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ,
հայեա՛ց ի տառապանս ծառայիս քո ..... 27.
Աղաւթք մատոյց

Անկանիմ առաջի քո եւ աղաչեմ զքեզ, Տէ՛ր իմ .....4.
Չորեքշաբաթի աւուրն

Աստանաւր պիտոյ է մեզ ողբ հառաչանաց .....24.
Բան աղաւթականք շահաւէտ մարդկան

Աստուածածի՛ն, մա՛յր Քրիստոսի եւ ծնող Միածնին.....9.
Առ Սուրբ Աստուածածինն

Աստուա՛ծ Աստուա՛ծ իմ, որ քննես զսիրտս .....17.
Առ Տէր Աստուած

Աստուա՛ծ, Աստուա՛ծ մեր, Աստուա՛ծ կենարար .....29.
Յաղագս պատարագին վասն երրորդ ժամու աւուրն

Արարիչ բոլորից, Աստուած, գթա ի վշտացեալս .....35.
Երկուշաբթի աւուր առ Հայր երկնաւոր

Արդ, ով անձն իմ տառապեալ, գնեալ ի սատանայէ .....25.
Աղաւթք

Աւրհնեալ ես, Հա՛յր սուրբ, Աստուա՛ծ ճշմարիտ .....26.
Աղաւթք

Գա՛ռն Աստուծոյ, Տէ՛ր իմ եւ Աստուած,
Յիսո՛ւս Քրիստոս .....8.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Երկնային դո՛ւռն եւ առագաստ .....19.
Ի Սուրբն Աստուածածին եւ առ ամենայն սուրբս

Երկնաւոր թագաւո՛ր, որ վասն գիւտի միոյ մեղաւորի .....12.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Էապէս բարի եւ ամենակարող զաւրութիւն .....6.
Ուրբաթի աւուրն

Ի քեզ յուսամ, Քրիստո՛ս Յիսուս, յո՛յս իմ, եւ աղաչեմ .....14.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Լո՛յս ի լուսոյ, լո՛յս աշխարհի, Քրիստո՛ս Աստուած .....21.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Հա՛յր երկնաւոր, Աստուա՛ծ ճշմարիտ .....30.
Աղաւթք ի Հայր

Հոգի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ,
Հոգի՛ իմաստութեան .....28.
Ի Հոգին սուրբ

Յաւիտենից Աստուա՛ծ եւ արարիչ բոլորից .....1.
Կիւրակէի աւուրն

Նայեա՛, Տէ՛ր, քաղցրութեամբ առ դառնացուցիչս,
Տէ՛ր իմ .....11.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Ներո՛ղ եւ ներգործող բարեաց, բազմագութ
եւ ողորմած Տէ՛ր իմ .....5.
Հինգշաբաթի աւուրն

Ողջո՛յն քեզ, փա՛յտ փրկութեան, վահա՛ն հաւատոյ .....34.
Առ կենսաբեր խաչն Քրիստոսի

Ո՛վ ամենակալ եւ ամենակարող Տէ՛ր իմ եւ
Աստուա՛ծ իմ .....2.
Երկուշաբաթի աւուրն

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ .....23.
Առ Որդին Աստուած

Որդի՛ Աստուծոյ, Աստուա՛ծ ճշմարիտ, որ վասն
փրկութեան .....31.
Աղաւթք ի յՈրդի

Ո՛հ լուսոյ եւ ճշմարիտ ճանապարհ կենացն .....10.
Առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս

Սո՛ւրբ Երրորդութիւն անքաժանելի,
անճառելի եւ անաշխատ .....7.
Շաբաթու աւուրն

Սո՛ւրբք եւ սիրեցեա՛լք յամենասուրբ Երրորդութենէն .....16.
Միջնորդութեամբ երկնային զաւրացն

Վերին վայելչութեանցդ վերանորոգող
եւ ստորնայնոցս ստեղծող .....3.
Երեքշաբաթի աւուրն

Տէ՛ր Աստուած, աւրհնեալ ես յաւիտեան,
աւրհնեա՛ հոգւով.....32.
Զկնի արձակման պատարագին

Տէ՛ր, Տէ՛ր, Հա՛յր եւ Աստուած կենաց իմոց ..... 22.
Առ Տէր Աստուած

Ցաւագնեալս մեղաւք եւ ցանկորդեալս
քաւութեան մեղաց եւ յանցանաց .....13.
Առ Տէր Աստուած

Ցրուեա՛, Տէ՛ր, զաւրութեամբ սուրբ խաչի քո .....18.
Առ Տէր Աստուած

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

[1] *Հ. Գ. վ. Զարբհանալեան, Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԺԳ. դար), Բարձրագոյն դպրոցաց համար, Վենետիկ, 1932, էջ 795-6:*

[2] *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրութեամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, 1961, էջ 348-55:*

[3] *Անդ, էջ 349:*

[4] *Մանրամասները տե՛ս Հ. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հտ. Գ., Երեւան 1946, 582-3:*

[5] *Վստահ ենք, որ Գառնեցու ձեռագրական ժառանգութեան հետագայ ուսումնասիրութիւնն այս քանակն աւելացնելու է:*

[6] *Աղօթամատոյց Յովհաննու վարդապետի Գառնեցւոյ, Վենետիկ, 1911:*

[7] *Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Է. Տօնապատճառ-Ժողովածոյ, Մատենագիրք Հայոց. Յօրինեց Հ. Սահակ վ. Ծեմճեմեան՝ Մխիթարեան ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 402-3 եւ 473-4:*

[8] *Գանձակեցի, էջ 349:*

[9] *Տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Հ. Յակովբոս վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 443, 996:*

[10] *Սրանց հեղինակութեան խնդրի վերջնական պարզումը հնարաւոր է միայն ձեռագրերում առկայ բոլոր աղօթքների ընդհանուր համադիր աղբիւրագիտական քննութեամբ:*

[11] *Նոյն քաղումների հետագայ կրկնութիւնները միայն առնուած են չակերտների մէջ:*

[12] *Տարընթերցումներով տարբերակները հրատարակուելու են Յովհաննէս Գառնեցու ամբողջ մատենագրութեան գիտական-քննական հրատարակութեան մէջ, որ պատրաստում է Լիլիթ Պետրոսեանը:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջաբան 5

Հովհաննես Գառնեցու մասին.....10

Աղաւթք սուրբ հաւրն Յովհաննէս Գառնեցոյ՝ ասացեալ ի վերայ գրոյ անուան իւրոյ

1. Աղաւթք Կիւրակէի աւուրն 18
2. Աղաւթք Երկուշաբաթի աւուրն 20
3. Աղաւթք Երեքշաբաթի աւուրն 22
4. Աղաւթք Չորեքշաբաթի աւուրն 24
5. Աղաւթք Հինգշաբաթի աւուրն 26
6. Աղաւթք Ուրբաթի աւուրն.....28
7. Աղաւթք Շաբաթու աւուրն 32
8. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....34
9. Աղաւթք առ Սուրբ Աստուածածինն.....44
10. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....48
11. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....50
12. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....52
13. Աղաւթք առ Տէր Աստուած.....56
14. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....60

Աղոթքներ

15. Աղաւթք առ Տէր վասն գիշերոյ.....66
16. Աղաւթք միջնորդութեամբ երկնային զաւրացն.....70
17. Աղաւթք առ Տէր Աստուած.....74
18. Աղաւթք առ Տէր Աստուած.....80
19. Աղաւթք ի Սուրբ Աստուածածինն
եւ առ ամենայն սուրբս.....86

20. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս
վասն ճանապարհի.....90
21. Աղաւթք առ Տէրն մեր Յիսուս Քրիստոս.....92
22. Աղաւթք առ Տէր Աստուած.....94
23. Աղաւթք առ Որդին Աստուած.....100
24. Սուրբ հաւրն Գառնեցոյ բան աղաւթականք
շահաւէտ մարդկան.....110
25. Աղաւթք սուրբ հաւրն եւ վանականին
Գառնեցոյ ասացեալ.....122
26. Աղաւթք Գառնեցոյ Յոհաննիսի ասացեալ.....128
27. Աղաւթք մատոյց սրբոյն Յովհաննու
Գառնեցոյ ասացեալ 132
28. Նորին Յոհաննու ասացեալ աղաւթք
ի Հոգին Սուրբ.....138
29. Նորին Յովաննու յաղագս պատարագին
վասն երրորդ ժամու աւուրն 142
30. Նորին Յովաննու ասացեալ աղաւթք ի Հայր.....156
31. Նորին Յովաննու ասացեալ աղաւթք ի յՈրդի 160
32. Աղաւթք սրբոյն Յոհաննու Գառնեցւոյն
ասացեալ զկնի արձակման պատարագին.....168
33. Դարձեալ աղաւթք առ սուրբ խաչն աստուածընկալ՝
ասացեալ Յովհաննու Գառնեցոյն.....172
34. Աղաւթք Յոհաննու Գառնեցւոյն ասացեալ
առ կենսաբեր Խաչն Քրիստոսի.....176
35. Երկուշաբթի աւուր. նորին երանելոյ Յովհաննու
Գառնեցւոյ աղաւթք առ Հայր երկնաւոր.....180

Այբբենական ցանկ Հովհաննես Գառնեցու
աղոթքների սկզբնատողերի 186
Ծանոթագրություններ 189
Բովանդակություն 190

Ձեռագրերի համեմատությունը և բնագիրը՝
Լիլիթ Պետրոսյանի

Առաջաբանը եւ խմբագրումը՝
Գևորգ Տեր-Վարդանյանի

Թարգմանությունը՝
Ա. Մադոյանի

Հրատ. խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան